

**Հավելված**  
**ՀՀ կառավարության 2023 թվականի**  
**նոյեմբերի 23-ի N 2053 - Լ որոշման**

**ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ,  
ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՎՐԱ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ) համապարփակ իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել կարգավորման դիտարկվող տարբերակների կիրարկման արդյունքում ակնկալվող հնարավոր տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության, սոցիալական, առողջապահական, շրջակա միջավայրի և հանրային ֆինանսների վրա ազդեցությունների գնահատում:

Ազդեցությունների վերլուծության և գնահատման գործընթացում քայլերի հաջորդականությունը հետևյալն է՝

1. նշանակալի ազդեցությունների վերհանումը,
2. նշանակալի ազդեցությունների գնահատման գործընթացի շրջանակների որոշումը,
3. նշանակալի ազդեցությունների գնահատումը:

**1. նշանակալի ազդեցությունների վերհանում. մեկնարկային քայլ, որի արդյունքում՝ ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչների հիման վրա որոշվում է՝ արդյոք կարգավորման առաջարկվող տարբերակները ենթակա են համապատասխան ոլորտային ազդեցության գնահատման**

ԿԱԳ վերլուծության շրջանակներում դիտարկվող տարբերակներով սահմանվող կարգավորումների կիրարկման արդյունքում ակնկալվող տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության, սոցիալական, առողջապահական, շրջակա միջավայրի և հանրային ֆինանսների վրա ազդեցությունների նշանակալիության որոշումն իրականացվում է նշանակալիության որոշման չափորոշիչների հիման վրա, որոնց ցանկերն ու յուրաքանչյուրի նկարագրությունը ներկայացված են սույն մեթոդական ուղեցույցի՝ համապատասխան ազդեցությունների գնահատման մեթոդական քայլերը ներկայացնող բաժիններում:

Ոլորտային ազդեցությունների նշանակալիության որոշումը սկսվում է կարգավորումից բխող շահառուների խմբերի նույնականացումից: Առաջարկվում է, ըստ վերը նշված ոլորտների, դիտարկել շահառուների հետևյալ խմբերը, որոնց ցանկն ամբողջական չէ և ըստ անհրաժեշտության՝ ենթակա է լրացման.

**1) տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության վրա ազդեցությունների ենթակա շահառուների խմբեր**

ա. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտներ,

բ. ֆիզիկական անձինք:

Շահառուների վերոնշյալ խմբերը կարող են դասակարգվել ենթախմբերի՝ ըստ տարբեր չափորոշիչների, մասնավորապես՝

ա. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների դեպքում՝

- 1) ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի<sup>1</sup> 2-նիշ կամ 3-նիշ դասակարգման,
- 2) ըստ չափերի<sup>2</sup>՝ գերփոքր, փոքր, միջին և խոշոր,
- 3) ըստ գործունեության վայրի<sup>3</sup>՝ մարզեր, համայնքներ, բնակավայրեր,
- 4) ըստ բիզնես-դեմոգրաֆիական հատկանիշների՝ նոր ստեղծված, գործունեությունը դադարեցրած/լուծարված, մեկ տարի տնտեսական գործունեություն իրականացնող և այլն,
- 5) ըստ կարգավորման տրամաբանությունից բխող այլ հատկանիշների (օրինակ՝ կանանց կողմից հիմնադրված/ղեկավարվող ձեռնարկություններ, օտարերկրյա փայամասնակցությամբ ձեռնարկություններ և այլն),

**բ. Ֆիզիկական անձանց դեպքում՝**

- 1) ըստ սեռի,
- 2) ըստ տարիքի,
- 3) ըստ բնակության վայրի,
- 4) ըստ տնային տնտեսությանը կամ 1 շնչին բաժին ընկնող եկամուտների,
- 5) ըստ կարգավորման տրամաբանությունից բխող այլ հատկանիշների (քաղաքացիություն չունեցող անձինք, զբոսաշրջիկներ, հանրային սննդի օբյեկտների սպառողներ և այլն),

---

<sup>1</sup> ՀՀ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» հաստատելու մասին ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ 874-Ն հրամանի համաձայն՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148245>

<sup>2</sup> «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» թիվ ՀՕ-121 ՀՀ օրենքի համաձայն՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64617>

<sup>3</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» թիվ ՀՕ-18 ՀՀ օրենքի համաձայն՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165211>

**2) սոցիալական ազդեցությունների ենթակա շահառուների խմբեր**

**ա. ըստ տարիքի՝**

- 1) երեխաներ,
- 2) երիտասարդներ,
- 3) տարեցներ,
- 4) հատուկ տարիքային խումբ,
- 5) այլ,

**բ. ըստ զբաղվածության կամ եկամտի՝**

- 1) ցածր եկամուտ ունեցող անձինք,
- 2) տնտեսապես ոչ ակտիվ անձինք,
- 3) գործազուրկներ,
- 4) անաշխատունակներ,
- 5) սովորողներ,
- 6) իրավաբանական անձինք,
- 7) վարձու աշխատողներ,
- 8) անհատ ձեռնարկատերեր,
- 9) այլ,

**գ. ըստ խտրականության ենթարկման կամ այլ սոցիալապես անբարենպաստ պայմաններում գտնվելու՝**

- 1) ֆիզիկական կամ մտավոր (հոգեկան) խնդիրներով կամ սահմանափակումներով անձինք,

- 2) անապահովներ և անապահովության նպաստառուներ,
- 3) փախստականներ,
- 4) ապաստան հայցող անձինք,
- 5) հարկադիր կամ կամավոր վերադարձած անձինք,
- 6) տեղահանված, ներքին տեղահանված կամ բռնի տեղահանված անձինք,
- 7) ճանապարհորդողներ,
- 8) որակավորում չպահանջող աշխատանքներում ներգրավված անձինք,,
- 9) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ
- 10) միակողմանի ծնողազուրկ երեխաներ,
- 11) կին գլխավորով ընտանիքի անդամներ,
- 12) ընտանեկան բռնության և/կամ թրաֆիքինգի ենթարկված անձինք,
- 13) միայնակ տարեցներ,
- 14) սեռական փոքրամասնություններ,
- 15) էթնիկ փոքրամասնություններ,
- 16) կրոնական խմբեր,
- 17) այլ,

**դ. ըստ բնակավայրի հնարավորությունների՝**

- 1) աղքատ տնտեսական և/կամ առողջական ցուցանիշներով տարածքներում բնակվող անձինք,
- 2) մեկուսացված/գերբնակեցված տարածքներում բնակվող անձինք,
- 3) ծառայություններին և հարմարություններին հասանելիություն չունեցող անձինք,

4) այլ,

**3) առողջապահական ազդեցությունների ենթակա շահառուների խմբեր**

**ա. ընդհանուր ազգաբնակչության դեպքում՝**

- 1) ռեզիդենտներ,
- 2) զբոսաշրջիկներ,
- 3) ճանապարհային երթևեկության ազդակիրներ,
- 4) սեյսմիկ վտանգի գոտիներում բնակվողներ,
- 5) բնապահպանական հիմնախնդիրներ ունեցող տարածքների բնակիչներ,
- 6) կարգավորման առաջարկվող տարբերակի թիրախային շահառուներ,
- 7) այլ,

**բ. զբաղվածության դեպքում՝**

- 1) ծանր և վնասակար արտադրություններում ընդգրկված աշխատուժ,
- 2) առանձնակի ծանր և առանձնակի վնասակար արտադրություններում ընդգրկված աշխատուժ,
- 3) առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության պահանջով գործունեության ոլորտներում ընդգրկված աշխատուժ,
- 4) շինարարական աշխատանքներում ընդգրկված աշխատուժ,
- 5) գրասենյակային աշխատանքներում ընդգրկված աշխատուժ,
- 6) աշխատուժից դուրս բնակչություն,
- 7) այլ,

**գ. տարիքով պայմանավորված խոցելի խմբերի դեպքում՝**

- 1) երեխաներ,
- 2) դեռահասներ,
- 3) գյուղական բնակավայրերի երեխաներ,
- 4) տարեցներ,
- 5) առողջական խնդիրներ ունեցող տարեցներ,
- 6) այլ,

ե. առողջական կարգավիճակով պայմանավորված խոցելի խմբերի դեպքում՝

- 1) ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող մարդիկ (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք,
- 2) ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց խնամողներ,
- 3) այլ,

զ. բացասական սոցիալական հանգամանքներով պայմանավորված խոցելի խմբերի դեպքում՝

- 1) սոցիալական մեկուսացման մեջ գտնվող անձիք,
- 2) խտրականության բախված մարդիկ (կրոնական, ազգային, ռասայական և այլն),
- 3) այլ,

է. տարածաշրջանային գործոնով և բարիքների ցածր հասանելիությամբ պայմանավորված խոցելի խմբերի դեպքում՝

- 1) ծառայությունների, հարմարությունների և միջոցների հասանելիության առումով խոչընդոտներ ունեցող անձիք,

2) տնտեսական և առողջապահական ցուցանիշների ցածր մակարդակ ունեցող կամ սահմանափակ կենսապայմաններով վայրերում բնակվող անձիք,

3) կարգավորման առաջարկվող տարբերակների արդյունքում հաճախակի փոփոխություններ կրող վայրերում բնակվող մարդիկ, ովքեր կարող է չհամարվեն «խոցելի», բայց հավանական է, որ ավելի զգայուն են այդ փոփոխությունների նկատմամբ,

4) այլ,

**4) շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ենթակա շահառուների խմբեր**

ԿԱԳ շրջանակներում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները գնահատելիս հատկապես կարևորվում է այդ ազդեցությունները կրող անձանց անմիջական մասնակցությունը բնապահպանական օրենսդրական կարգավորումների, այդ թվում՝ ծրագրերի, տարբեր փուլերում կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ենթակա խմբերը դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի՝

ա. որոշումներ կայացնող, համակարգող և իրականացնող մարմիններ,

բ. մասնակիցներ,

գ. հանրություն,

դ. տարածաշրջան:

Շահառուների վերոնշյալ խմբերը կարող են դասակարգվել ենթախմբերի, մասնավորապես՝

ա. որոշումներ կայացնող, համակարգող և իրականացնող մարմինների դեպքում՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ,



2) համայնքներ,

բ. մասնակիցների դեպքում՝

1) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտներ՝ ներդրողներ, կառուցապատողներ, արդյունահանողներ, արտադրողներ և ազդեցություն կրող այլ անձիք,

2) տեղական և միջազգային խորհրդատվական, հետազոտական, փորձագիտական և հասարակական կազմակերպություններ,

գ. հանրության դեպքում՝

1) քաղաքացիներ, այդ թվում՝ քաղաքային և համայնքային բնակավայրերի բնակիչներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կրում են ազդեցություններ,

դ. . աշխարհագրական տարածաշրջանային բաղադրիչի դեպքում՝

1) անդրսահմանային ազդեցություն:

5) հանրային ֆինանսների վրա ազդեցությունների ենթակա շահառուների խմբեր

ա. պետական կառավարման համակարգի մարմիններ՝

1) նախարարություններ,

2) մարզպետարաններ,

3) այլ,

բ. տեղական ինքնակառավարման մարմիններ/համայնքներ:

Կարգավորումից բխող շահառուների խմբերի նույնականացմանը հաջորդում է ազդեցության նշանակալիության չափորոշիչներից յուրաքանչյուրի համար կարգավորման ազդեցության բնույթի և նշանակալիության աստիճանի որոշումը: ԿԱԳ վերլուծության շրջանակներում վերհանված ազդեցությունների նկարագրության համար կարելի է օգտագործել տարբեր դասակարգումներ, մասնավորապես՝

## 1. Ըստ կարգավորման հետ ունեցած կապի՝

- 1) *ուղղակի ազդեցություններ*. առաջանում են կարգավորման շրջանակներում ընդգրկված կողմերի մոտ՝ որպես կարգավորիչ փոփոխության անմիջական հետևանք, այսինքն՝ փաստացի ազդեցություններն են շահառուների վրա,
- 2) *անուղղակի ազդեցություններ*. ազդում են կարգավորմամբ ուղղակիորեն չթիրախավորված սուբյեկտների վրա կամ թիրախավորված սուբյեկտների վրա ազդում են անուղղակի ձևով:

Օրինակ՝ սահմանվող կարգավորման արդյունքում բարձրանում է էլեկտրական էներգիայի սպառման գինը: Այս փոփոխությունն ուղղակի ազդեցություն կունենա էլեկտրական էներգիայի սպառողների վրա, ովքեր ավելի բարձր գին կվճարեն: Միևնույն ժամանակ, փոփոխությունն անուղղակի ազդեցություն կունենա էլեկտրական էներգիայի օգտագործմամբ արտադրվող ապրանքների գների վրա, ինչը կհանդիսանա անուղղակի ազդեցություն այդ ապրանքների սպառողների վրա, ովքեր ավելի բարձր գին կվճարեն ապրանքների ձեռքբերման համար:

## 2. Ըստ բնույթի՝

- 1) *«բացասական»*. եթե ակնկալվում է, որ կարգավորման ազդեցության նշանակալիության որոշման չափորոշիչները վատթարանալու են, օրինակ՝ սահմանվող կարգավորման արդյունքում ավելանալու է շահառուների հիվանդացության դեպքերի թիվը, նվազելու է բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը կամ մատչելիությունը, ինչն իր բնույթով բացասական ազդեցություն է ազգաբնակչության համար,
- 2) *«դրական»*. եթե ակնկալվում է, որ կարգավորման ազդեցության նշանակալիության որոշման չափորոշիչներն ավելի բարենպաստ են դառնալու շահառուների համար, օրինակ՝ սահմանվող կարգավորման

արդյունքում կրճատվելու է շահառուների հիվանդացության դեպքերի թիվը, բարձրանալու է բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը կամ մատչելիությունը կամ վերացվելու է տնտեսվարող սուբյեկտների թիվը սահմանափակող պահանջ (լիցենզիայի առկայություն՝ որպես գործունեության իրականացման պահանջ)։ վերջինս իր բնույթով դրական ազդեցություն է շուկա մուտ գործել ցանկացող տնտեսվարող սուբյեկտների տեսանկյունից,

3) «*և՛ բացասական, և՛ դրական*»։ կախված շահառուների խմբից, կարգավորման ազդեցությունները կարող են լինել *և՛ բացասական, և՛ դրական*, օրինակ՝ եթե սահմանվող կարգավորման արդյունքում բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների ծավալի նվազման հաշվին բարձրացվի այդ ծառայությունների որակը, այդ կարգավորումը բացասական կանդրադառնա ծառայություններից օգտվելու հնարավորությունից զրկված անձանց վրա, փոխարենը՝ դրական կանդրադառնա ծառայություններից օգտվողների վրա։ Կամ եթե ավելանում է որևէ պարտադիր պետական վճարի (հարկ, տուրք կամ այլ վճար) չափը, դա իր բնույթով բացասական ազդեցություն է տվյալ վճարը վճարող շահառուների տեսանկյունից, սակայն դրական ազդեցություն է պետության (պետական բյուջե) տեսանկյունից։

3. Ըստ նշանակալիության աստիճանի՝

1) «*նշանակալի*»,

2) «*ոչ նշանակալի*»:

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում կարգավորման դիտարկվող տարբերակի ազդեցությունը համարվում է նշանակալի, եթե, ըստ փորձագիտական գնահատման, կարգավորման դիտարկվող տարբերակն ունի ուղղակի կամ

անուղղակի, դրական կամ բացասական էական ազդեցություն շահառուների խմբերի/ենթախմբերի վրա՝ ըստ համապատասխան ոլորտի նշանակալիության որոշման որևիցե չափորոշչի:

Նշանակալիության որոշումը սուբյեկտիվ է և կարող է կախված լինել ԿԱԳ-ի բովանդակությունից ու մի շարք չափանիշներից: Այնուամենայնիվ, կան որոշ ընդհանուր գործոններ, որոնք կարող են պայմանավորել ազդեցության նշանակությունը: Դրանք են.

ա. մեծությունը. ազդեցության մասշտաբը/չափը շատ կարևոր է: Եթե ակնկալվում է, որ առաջարկվող կարգավորումը կհանգեցնի, օրինակ, էական սոցիալ-տնտեսական փոփոխությունների, ապա այն կարող է համարվել նշանակալի ազդեցություն ունեցող,

բ. ծածկույթը. ևս մեկ գործոն է ազդեցության շրջանակը կամ ծածկույթը: Եթե ակնկալվում է, որ կարգավորումը կազդի շահառուների, տնտեսության ճյուղերի կամ տարածքային լայն շրջանակի վրա, ապա այն կարող է համարվել նշանակալի ազդեցություն ունեցող՝ իր լայն շրջանակի և հնարավոր հետևանքների պատճառով,

գ. ուժգնությունը. վճռորոշ ասպեկտ է ազդեցության ուժգնությունը/ինտենսիվությունը: Եթե ակնկալվում է, որ կարգավորման հետևանքները կլինեն հատկապես ուժգին կամ խորքային, ինչպիսիք են, օրինակ, աշխատատեղերի զգալի կորուստները կամ շրջակա միջավայրի էական դեգրադացումը, ապա այն կարող է համարվել նշանակալի ազդեցություն ունեցող,

դ. տևողությունը. ազդեցության տևողությունը ևս կարևոր է: Եթե ակնկալվում է, որ կարգավորման հետևանքները երկարատև կամ տևական կլինեն, ապա այն կարող է նշանակալի ազդեցություն ունենալ՝ համեմատած կարճաժամկետ կամ ժամանակավոր հետևանքների ունեցողների հետ,

ե. անշրջելիությունը. մեկ այլ գործոն կարող է լինել ազդեցության անշրջելիությունը/անդառնալիությունը: Եթե կարգավորման հետևանքները դժվար կամ անհնար է չեղարկել կամ մեղմացնել կիրառումից հետո, դա ևս կարող է ազդեցության նշանակալիության ազդակ լինել:

**4. նշանակալի ազդեցությունների գնահատման գործընթացի շրջանակների որոշում. միջանկյալ քայլ, որի ընթացքում իրականացվում է նախորդ քայլով բացահայտված նշանակալի ազդեցությունների գնահատման գործընթացի պլանավորում**

Այս քայլի ընթացքում իրականացվում է բացահայտված նշանակալի ազդեցությունները պայմանավորող որոշիչ գործոնների և ազդակիր շահառուների խմբերի ավելի մանրամասն դիտարկում, որի արդյունքում որոշվում է՝

ա. մասնագետների շրջանակը, որոնք պետք է իրականացնեն նշանակալի ազդեցությունների գնահատումը,

բ. գնահատման համար անհրաժեշտ հավաքագրման ենթակա տեղեկատվության ծավալները (կառուցվածքը, հնարավոր աղբյուրները և այլն) ու դրանց հավաքագրման եղանակները,

գ. գնահատման համար կիրառվող գործիքակազմը ու մեթոդաբանությունը:

**5. նշանակալի ազդեցությունների գնահատում. քայլ, որի ընթացքում իրականացվում է տեղեկատվության հավաքագրում և նշանակալի ազդեցությունների գնահատում**

ԿԱԳ վերլուծության շրջանակներում դիտարկվող տարբերակներով սահմանվող կարգավորումների կիրարկման արդյունքում ակնկալվող տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության վրա ազդեցությունների, սոցիալական, առողջապահական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նշանակալիության գնահատման նկարագրությունը ըստ նշանակալիության որոշման չափորոշիչներից

**յուրաքանչյուրի արդեն ներկայացված են սույն մեթոդական ուղեցույցի՝  
համապատասխան բաժիններում:**

**ԳԼՈՒԽ 1**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**1. Տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի վրա ազդեցությունների գնահատում**

Ստորև տրված Աղյուսակ 1-ում ներկայացված է տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի վրա ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչների ցանկն ու յուրաքանչյուրի նկարագրությունը:

*Աղյուսակ 1.*

*Տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի վրա ազդեցությունների  
նշանակալիության որոշման չափորոշիչներ և դրանց նկարագրություն*

	Նշանակալիության որոշման չափորոշիչներ	Չափորոշիչների նկարագրություն
<b>Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների դեպքում</b>		
1)	<b>Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների կողմից վճարվող պետական հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարներ</b>	<b>ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և չափով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարման ենթակա հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարներ կամ դրանց չվճարումից բխող տույժեր, տուգանքներ:</b>

2)	<p>Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համապատասխանության ծախսեր</p>	<p>Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց գործունեությունը կարգավորումներով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու հետ կապված ուղղակի և անուղղակի ծախսերի ամբողջությունը՝ բացառությամբ հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարների:</p> <p>Բաժանվում են երկու խմբի՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) համապատասխանության վարչական ծախսեր,</li> <li>2) համապատասխանության էական ծախսեր:</li> </ol>
ա)	<p>Համապատասխանության վարչական ծախսեր</p>	<p>Բոլոր այն ծախսերը, որոնք կապված են շահառուների կողմից պետական կառավարման համակարգի մարմիններին և երրորդ անձանց տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունների հետ:</p> <p>Տեղեկատվության տրամադրման պարտավորությունները ներառում են հետևյալ պահանջների առկայություն՝</p> <ol style="list-style-type: none"> <li>3) պետական կառավարման համակարգի մարմիններին պարբերական հաշվետվությունների ներկայացում,</li> <li>4) երրորդ անձանց տեղեկատվության տրամադրում,</li> <li>5) պետական կառավարման համակարգի մարմիններին դիմումների ներկայացում,</li> <li>6) գործունեության սահմանված տեսակներով զբաղվելու վերաբերյալ ծանուցման ներկայացում,</li> </ol>



		<p>7) գործունեության սահմանված տեսակներով զբաղվելու համար լիցենզիա ստանալու հայտի ներկայացում,</p> <p>8) արտադրանքների սերտիֆիկացման պահանջ-պայմաններ,</p> <p>9) պարբերական ստուգումների ընթացքում մասնակցության և համագործակցության պահանջներ,</p> <p>10) ապրանքների մակնշում կամ գնապիտակների փակցում:</p> <p>Վերոնշյալ ցանկը սպառիչ չէ:</p>
բ)	<p>Համապատասխանության էական ծախսեր</p>	<p>Բոլոր այն ծախսերը, որոնք չեն հանդիսանում համապատասխանության վարչական ծախսեր:</p> <p>Էական ծախսերը ներառում են՝</p> <p>11) իրականացման ծախսերը. կատարվում են շահառուների կողմից նոր կամ փոփոխված կարգավորումներին ծանոթանալու, համապատասխանության ապահովման գործողությունների ծրագիր մշակելու և առաջադրանքները բաշխելու համար: Դրանք հիմնականում կարճաժամկետ և միանվագ ծախսեր են,</p> <p>12) ուղղակի աշխատանքային ծախսերը. կարգավորումների համապատասխանության ապահովման նպատակով անհրաժեշտ աշխատանքներն անմիջականորեն կատարելու</p>

		<p>համար պահանջվող անձնակազմի վարձատրության ծախսեր՝ ներառյալ վարձատրության գծով հաշվարկվող հարկերն ու պարտադիր այլ վճարները,</p> <p>13) վերադիր ծախսերը. տարածքների վարձակալության, գրասենյակային սարքավորումների ձեռք բերման, կոմունալ ծառայությունների վճարման, համապատասխանության ապահովման միջոցառումների մասով կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրման ծախսեր,</p> <p>14) կապիտալ ծախսերը. համապատասխանության ապահովման նպատակով հիմնական միջոցների ձեռք բերման և շահագործման գծով կատարվելիք ծախսեր,</p> <p>15) նյութական ծախսերը. համապատասխանության ապահովման նպատակով արտադրական գործընթացներում նոր նյութերի կամ ավելի թանկ նյութերի օգտագործման հավելյալ արժեք,</p> <p>16) արտաքին ծառայությունների ծախսերը. համապատասխանության ապահովման նպատակով երրորդ անձանցից ձեռք բերվող բոլոր ծառայությունների արժեք:</p> <p>Վերոնշյալ ցանկը սպառիչ չէ:</p>
--	--	--

<b>Ֆիզիկական անձանց դեպքում</b>		
1)	<b>Ֆիզիկական անձանց համապատասխանության ծախսեր</b>	<p>Այս ծախսերն առաջանում են կարգավորման պահանջների կատարման արդյունքում:</p> <p>Դրանց մեջ ներառվում են հետևյալ ծախսերը՝</p> <p>17) հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների վճարում,</p> <p>18) տեղեկատվության և փաստաթղթերի հավաքագրում, մշակում, ստուգում, պահպանում կամ փոխանցում,</p> <p>19) ծառայությունների ձեռք բերում,</p> <p>20) ստուգումներին առնչվող աշխատանքների իրականացում,</p> <p>21) հիմնական միջոցների ձեռք բերում,</p> <p>22) տրանսպորտային ծախսեր:</p> <p>Վերոնշյալ ցանկը սպառիչ չէ:</p>

Ստորև ներկայացված են ԿԱԳ վերլուծության իրականացման ընթացքում տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների գնահատման իրականացման մեթոդական քայլերը՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների մասով:

1. Շահառուների շրջանակի հստակեցում՝ ըստ խմբերի.

իրականացվում է ԿԱԳ վերլուծության ընթացքում շահառուների նույնականացման գործընթացի հիման վրա: Այս քայլի իրականացման արդյունքում շահառուների շրջանակը կարող է ընդլայնվել՝ ներառելով շահառուների նոր խմբեր,

2. Նշանակալի ազդեցությունների ցանկի հստակեցում.

իրականացվում է ԿԱԳ վերլուծության ընթացքում ազդեցությունների բացահայտման գործընթացի հիման վրա: Այս քայլի իրականացման արդյունքում նշանակալի ազդեցությունների ցանկը կարող է ընդլայնվել՝ ներառելով նոր նշանակալի ազդեցություններ,

3. Շահառուների քանակի վերլուծություն՝ ըստ հստակեցված խմբերի.

իրականացվում է շահառուների հստակեցված խմբերից յուրաքանչյուրում ընդգրկված՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների քանակի գնահատում՝ հիմք ընդունելով տեղեկատվության պաշտոնական աղբյուրը: Վիճակագրական տվյալների բացը կարելի է լրացնել լրացուցիչ վերլուծությունների, հանրային քննարկումների, մոտարկումների և այլնի իրականացման միջոցով,

4. Յուրաքանչյուր ազդեցության քանակական գնահատում՝ ըստ շահառուների խմբերի.

իրականացվում է՝ տվյալ խմբի տիպային շահառուի վրա ազդեցության (քանակական) չափը բազմապատկելով տվյալ խմբում ընդգրկված շահառուների քանակով,

5. Բոլոր ազդեցությունների գումարային գնահատում՝ ըստ կարգավորման յուրաքանչյուր տարբերակի.

իրականացվում է՝ գումարելով կարգավորման տարբերակի բոլոր ազդեցությունների քանակական գնահատականները,

6. Շահառուների խմբերի միջև անհամաչափության վերլուծություն՝ ըստ յուրաքանչյուր ազդեցության.

իրականացվում է համեմատական վերլուծություն յուրաքանչյուր ազդեցության չափի և շահառուների խմբերից յուրաքանչյուրում ընդգրկված տիպային շահառուի չափի միջև: Այս քայլի իրականացման արդյունքում կատարվում են եզրահանգումներ՝ յուրաքանչյուր ազդեցության անհամաչափության վերաբերյալ:

## **ՓՄՁ-ների վրա ազդեցությունների անհամաչափության վերլուծություն**

ԿԱԳ վերլուծության շրջանակներում սահմանված խնդրի լուծման տարբերակները միմյանցից տարբերվում են ոչ միայն սահմանված նպատակներին հասնելու գործիքներով, այլ նաև շահառուների տարբեր խմբերի/ենթախմբերի վրա ունեցած ազդեցություններով: Ընդհանուր առմամբ, Կառավարությունը շահագրգռված է ապահովել սահմանվող կարգավորումների՝ հնարավորինս արդար լինելը, սակայն կարգավորումների ազդեցությունները (ծախսեր ու օգուտներ) հազվադեպ են հավասարաչափ բաշխվում շահառուների միջև. հաճախ կարգավորումների կիրարկման արդյունքում ծախսեր կրողներն ու օգուտներ ստացողները շահառուների տարբեր խմբեր են: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՓՄՁ-ների և խոշոր ձեռնարկությունների միջև եղած տարբերությունները (աշխատակիցների քանակ, շրջանառության չափ և այլն), կարգավորումները կարող են ավելի շոշափելի ազդեցություններ ունենալ ՓՄՁ-ների վրա՝ խոշոր ձեռնարկությունների համեմատ:

Այդ իսկ պատճառով, մինչև կարգավորման տարբերակների վերաբերյալ որոշում կայացնելը, ԿԱԳ վերլուծության շրջանակներում տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության վրա ազդեցությունների գնահատման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել ազդեցությունների՝ ՓՄՁ-ների վրա անհամաչափության վերլուծություն:

Ազդեցությունների՝ ՓՄՁ-ների վրա անհամաչափության վերլուծությունը ներառում է չորս հիմնական քայլերի իրականացում.

### **1. ՓՄՁ ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների անցկացում.**

կարող է իրականացվել ինչպես համակարգված (կլոր սեղաններ, հանձնաժողովներ, քննարկումներ և այլն), այնպես էլ ոչ համակարգված ձևով՝ շահառուներից կարծիքների հավաքագրման և դրանց արձանագրման համար: Հիմք ընդունելով ՓՄՁ-ների աշխատակիցների համեմատաբար փոքր թիվը՝

կարելի է դիտարկել նրանց կողմից կարծիք ներկայացնելու համար ավելի երկար ժամանակահատված սահմանելու հնարավորությունը,

**2. Ազդեցությունն իրենց վրա կրող ՓՄՁ-ների բացահայտում.**

գործընթացի իրականացման ընթացքում անհրաժեշտ է բացահայտել, թե՛

- 1) արդյո՞ք ազդակիր են բոլոր ՓՄՁ-ները,
- 2) արդյո՞ք ազդակիր են բոլոր չափերի ՓՄՁ-ները,
- 3) արդյո՞ք ազդեցությունը տարբերվում է՝ ըստ ոլորտների/շուկաների,
- 4) ազդեկիր ձեռնարկությունների քանակը,

**3. ՓՄՁ-ների վրա ազդեցությունների գնահատում.**

գնահատման արդյունքում անհրաժեշտ է բացահայտել, թե՛

- 1) արդյո՞ք ազդեցությունները ՓՄՁ-ների վրա անհամաչափ են՝ խոշոր ձեռնարկությունների համեմատ,
- 2) արդյո՞ք անհամաչափ ազդեցությունների մեղմման համար պետք է կիրառել լրացուցիչ միջոցառումներ,

**4. ՓՄՁ-ների մասով կարգավորման այլընտրանքային տարբերակների կամ մեղմացնող միջոցառումների սահմանման հնարավորությունների դիտարկում և գնահատում.**

իրականացվում է կոնկրետ միջոցառումների (արտոնություններ, վերջնաժամկետների փոփոխություն, պարզեցում և այլն) մշակում և գնահատում՝ ըստ ազդակիր շահառուների խմբերի:

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում ֆիզիկական անձանց մասով նշանակալի ազդեցությունների գնահատումն իրականացվում է վերոնշյալ նույն մեթոդական քայլերի հիման վրա:

Ստորև ներկայացված են ազդեցությունների գնահատման գործնական օրինակներ՝ տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի վրա ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչներից յուրաքանչյուրի մասով:

**Օրինակ 1. Պետական հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարների փոփոխության ազդեցության գնահատում և ազդեցության անհամաչափության վերլուծություն՝ ըստ շահառուների խմբերի**

Դիցուք՝ կեղտաջրերում ճարպերի, յուղերի ու յուղանյութերի պարունակության մակարդակը սահմանվում է որպես խնդիր տեղական ինքնակառավարման մարմինների ու կեղտաջրերի հեռացման համակարգերի օպերատորների համար. դրանց առկայությունը՝

ա. բարձրացնում է համակարգի օպերատորների՝ կեղտաջրերի մշակման հետ կապված արտադրական ծախսերը,

բ. կարող է առաջացնել կոյուղու խողովակների խցանումներ, որի կանխարգելման համար համակարգի օպերատորներն իրականացնում են հավելյալ մեծ ծախսեր:

Ճարպերը, յուղերն ու յուղանյութերը կոյուղու ջրահեռացման համակարգ են լցվում հիմնականում հանրային սննդի ծառայություն մատուցող ձեռնարկությունների<sup>4</sup> կողմից:

<sup>4</sup> Ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման ու իրացման այլ օբյեկտներ:

Դիցուք՝ որպես խնդրի լուծման տարբերակ (Տարբերակ 1), առաջարկվում է հանրային սննդի յուրաքանչյուր օբյեկտի մասով սահմանել բնապահպանական վճարի պարտադիր վճարման պահանջ՝ տարեկան 2 մլն ՀՀ դրամի չափով:

Իրականացված ուսումնասիրությունների և հանրային քննարկումների արդյունքում պարզվել է, որ հանրային սննդի ոլորտում գործում են՝

1) 10 000 ՓՄՁ-ներ, որոնցից յուրաքանչյուրի՝

ա. աշխատակիցների միջին քանակը կազմում է 10,

բ. շահագործվող հանրային սննդի օբյեկտների քանակը կազմում է 1,

գ. միջին տարեկան շրջանառությունը կազմում է 50 մլն ՀՀ դրամ,

2) 50 խոշոր ձեռնարկություններ, որոնցից յուրաքանչյուրի՝

ա. աշխատակիցների միջին քանակը կազմում է 300,

բ. շահագործվող հանրային սննդի օբյեկտների միջին քանակը կազմում է 15,

գ. յուրաքանչյուր օբյեկտի միջին տարեկան շրջանառությունը կազմում է 100 մլն ՀՀ դրամ:

Առաջարկվող տարբերակի կիրարկման արդյունքում՝

1) ՓՄՁ-ների կողմից տարեկան վճարվող բնապահպանական վճարների ընդհանուր գումարը կկազմի՝  $10\ 000 * 2\ 000\ 000 = 20$  մլրդ ՀՀ դրամ,

2) խոշոր ձեռնարկությունների կողմից տարեկան վճարվող բնապահպանական վճարների ընդհանուր գումարը կկազմի՝  $50 * 15 * 2\ 000\ 000 = 1.5$  մլրդ ՀՀ դրամ,

3) հանրային սննդի ոլորտում գործող ձեռնարկությունների տարեկան ընդհանուր ծախսերը կկազմեն 21.5 մլրդ ՀՀ դրամ:

Ազդեցության անհամաչափության վերլուծություն.

1 աշխատակցի հաշվով հանրային սննդի օբյեկտների կողմից վճարվելիք բնապահպանական վճարների գումարը՝



1) ՓՄՁ-ների դեպքում՝  $1 * 2\,000\,000 : 10 = 200\,000$  ՀՀ դրամ,

2) խոշոր ձեռնարկությունների դեպքում՝  $15 * 2\,000\,000 : 300 = 100\,000$  ՀՀ դրամ:

Ազդեցության անհամաչափության վերլուծություն.

հանրային սննդի օբյեկտների կողմից վճարվելիք բնապահպանական վճարների գումարը՝ դրանց տարեկան շրջանառության համեմատ՝

1) ՓՄՁ-ների դեպքում՝  $2\,000\,000 : 50\,000\,000 * 100\% = 4\%$ ,

2) խոշոր ձեռնարկությունների դեպքում՝  $2\,000\,000 : 100\,000\,000 * 100\% = 2\%$ :

Իրականացված վերլուծությունների հիման վրա կարելի է եզրահանգել, որ առաջարկվող տարբերակն ունի անհամաչափ ազդեցություն ՓՄՁ-ների վրա՝ խոշոր ձեռնարկությունների համեմատ, մասնավորապես՝ ազդեցության չափը թե՛ դրամական և թե՛ տոկոսային առումով կրկնակի անգամ ավել է: Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել առաջարկվող տարբերակի վերաբերյալ որոշման կայացման ժամանակ:

**Օրինակ 2. Համապատասխանության (էական) ծախսերի վրա ազդեցության գնահատում և ազդեցության անհամաչափության վերլուծություն՝ ըստ շահառուների խմբերի**

Դիցուք՝ որպես կեղտաջրերում ճարպերի, յուղերի ու յուղանյութերի պարունակության մակարդակի խնդրի լուծման այլընտրանքային տարբերակ (Տարբերակ 2), առաջարկվում է սահմանել հանրային սննդի օբյեկտների կողմից կոյուղի թափվող կեղտաջրերի վերամշակման պարտադիր պահանջ՝ կեղտաջրերում ճարպերի, յուղերի ու յուղանյութերի պարունակության առավելագույն թույլատրելի մակարդակը չգերազանցելու նպատակով:

Կեղտաջրերի մաքրման սարքավորումների ձեռք բերման արժեքը կազմում է 5 մլն ՀՀ դրամ, իսկ դրանց շահագործման արժեքը, որն իր մեջ ներառում է նաև աշխատակիցների

ուսուցումն ու սարքավորումների տեխնիկական սպասարկման համար փորձագետների ներգրավումը, էլեկտրաէներգիայի և այլ ծախսերը, կազմում է տարեկան 1 մլն ՀՀ դրամ:

Իրականացված ուսումնասիրությունների և հանրային քննարկումների արդյունքում պարզվել է, որ հանրային սննդի ոլորտում գործող ՓՄՁ-ների 20%-ը և խոշոր ձեռնարկությունների հանրային սննդի օբյեկտների 50%-ն արդեն իսկ կահավորված են կեղտաջրերի մաքրման համապատասխան սարքավորումներով՝ դրանով իսկ համապատասխանելով առաջարկվող կարգավորման պահանջներին:

Հիմք ընդունելով Օրինակ 1-ում ներկայացված վիճակագրական տվյալները՝ առաջարկվող տարբերակի կիրարկման արդյունքում՝

ա. կեղտաջրերի մաքրման սարքավորումների ձեռք բերման և առաջին տարվա շահագործման ծախսերի ընդհանուր գումարը կկազմի՝  $5\ 000\ 000 * 1\ 000\ 000 = 6$  մլն ՀՀ դրամ,

բ. ՓՄՁ-ների կողմից տարեկան կատարվող համապատասխանության (էական) ծախսերի ընդհանուր գումարը կկազմի՝  $6\ 000\ 000 * 10\ 000 * 80 : 100 = 48$  մլրդ ՀՀ դրամ,

գ. խոշոր ձեռնարկությունների կողմից տարեկան կատարվող համապատասխանության (էական) ծախսերի ընդհանուր գումարը կկազմի՝  $6\ 000\ 000 * 50 * 15 * 50 : 100 = 2.25$  մլրդ ՀՀ դրամ,

դ. Հանրային սննդի ոլորտում գործող ձեռնարկությունների տարեկան ընդհանուր ծախսերը կկազմեն 50.25 մլրդ ՀՀ դրամ:

Ազդեցության անհամաչափության վերլուծություն.

1 աշխատակցի հաշվով հանրային սննդի օբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման սարքավորումների ձեռք բերման և առաջին տարվա շահագործման ծախսերը՝

ա. ՓՄՁ-ների դեպքում՝  $1 * 6\ 000\ 000 : 10 = 600\ 000$  ՀՀ դրամ,

բ. խոշոր ձեռնարկությունների դեպքում՝  $15 * 6\ 000\ 000 : 300 = 300\ 000$  ՀՀ դրամ:

Ազդեցության անհամաչափության վերլուծություն.

հանրային սննդի օբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման սարքավորումների ձեռք բերման և առաջին տարվա շահագործման ծախսերը՝ դրա տարեկան շրջանառության համեմատ՝

ա. ՓՄՁ-ների դեպքում՝  $6\,000\,000 : 50\,000\,000 * 100 \% = 12 \%$ ,

բ. խոշոր ձեռնարկությունների դեպքում՝  $6\,000\,000 : 100\,000\,000 * 100 \% = 6 \%$ :

Իրականացված վերլուծությունների հիման վրա կարելի է եզրահանգել, որ առաջարկվող տարբերակն ունի անհամաչափ ազդեցություն ՓՄՁ-ների վրա՝ խոշոր ձեռնարկությունների համեմատ, մասնավորապես՝ ազդեցության չափը թե՛ դրամական և թե՛ տոկոսային առումով կրկնակի անգամ ավել է: Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել առաջարկվող տարբերակի վերաբերյալ որոշման կայացման ժամանակ:

Օրինակ 3. Համապատասխանության (վարչական) ծախսերի վրա ազդեցության գնահատում և ազդեցության անհամաչափության վերլուծություն՝ ըստ շահառուների խմբերի

Դիցուք՝ որպես կեղտաջրերում ճարպերի, յուղերի ու յուղանյութերի պարունակության մակարդակի խնդրի լուծման այլընտրանքային տարբերակի (Տարբերակ 2) հավելում, առաջարկվում է սահմանել հանրային սննդի օբյեկտների կողմից կոյուղի թափվող կեղտաջրերի՝ ճարպերի, յուղերի ու յուղանյութերի պարունակության առավելագույն թույլատրելի մակարդակին համապատասխանության ստուգման համակարգ, մասնավորապես՝

ա. կեղտաջրերը պետք է ներկայացվեն քիմիական փորձաքննության համապատասխան փորձագիտական լաբորատորիաներում՝ տարեկան մեկ անգամ, իսկ փորձաքննության եզրակացությունը պետք է ներկայացվի համապատասխան տեսչական մարմնին.

բ. հանրային սննդի օբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման սարքավորումների շահագործման վերաբերյալ հաշվետվության կազմում և ներկայացում՝ տարեկան մեկ անգամ,

գ. տեսչական մարմնի կողմից տեղում ստուգայցի և ուսումնասիրության իրականացում՝ տարեկան մեկ անգամ:

Իրականացված ուսումնասիրությունների և հանրային քննարկումների արդյունքում հանրային սննդի օբյեկտների մասով բացահայտվել են հետևյալ հիմնական համապատասխանության (վարչական) ծախսերը՝

ա. աշխատակիցը պետք է քիմիական փորձաքննության հայտ ներկայացնի լաբորատորիա, ուղեկցի և վերահսկի լաբորատորիայի աշխատակիցների աշխատանքը, հավաքագրի լաբորատոր փորձաքննության եզրակացությունները:

Աշխատակցի ժամանակի ծախսը գնահատվել է 10 ժամ, 1 ժամվա վարձատրությունը միջինում կազմում է 4 000 ՀՀ դրամ և (25 %) 1 000 ՀՀ դրամ՝ որպես վերադիր ծախսեր.

բ. հաշվետվության կազմման և ներկայացման մասով աշխատակցի ժամանակի ծախսը գնահատվել է 15 ժամ,

գ. աշխատակիցը պետք է ուղեկցի տեսչական մարմնի աշխատակիցներին՝ ստուգայցի և ուսումնասիրության ժամանակ, պատասխանի նրանց հարցադրումներին և ներկայացնի համապատասխան հաշվետվությունը:

Աշխատակցի ժամանակի ծախսը գնահատվել է 5 ժամ:

դ. քիմիական փորձաքննության միջին արժեքը գնահատվել է 200 000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով Օրինակ 1-ում ներկայացված վիճակագրական տվյալները՝ առաջարկվող տարբերակի կիրարկման արդյունքում՝

ա. 1 հանային սննդի օբյեկտի մասով համապատասխանության (վարչական) ծախսերի տարեկան գումարը կկազմի՝  $(10 + 15 + 5) * (4\ 000 + 1\ 000) + 200\ 000 = 350\ 000$  ՀՀ դրամ,

բ. ՓՄՁ-ների կողմից տարեկան կատարվող համապատասխանության (վարչական) ծախսերի ընդհանուր գումարը կկազմի՝  $350\ 000 * 10\ 000 = 3.5$  մլրդ ՀՀ դրամ,

գ. խոշոր ձեռնարկությունների կողմից տարեկան կատարվող համապատասխանության (վարչական) ծախսերի ընդհանուր գումարը կկազմի՝  
 $350\ 000 * 50 * 15 = 262.5$  մլն ՀՀ դրամ,

դ. Հանրային սննդի ոլորտում գործող ձեռնարկությունների տարեկան ընդհանուր ծախսերը կկազմեն 3.76 մլրդ ՀՀ դրամ:

Ազդեցության անհամաչափության վերլուծություն.

1 աշխատակցի հաշվով հանրային սննդի օբյեկտների կողմից համապատասխանության (վարչական) ծախսերի տարեկան գումարը՝

ա. ՓՄՁ-ների դեպքում՝  $1 * 350\ 000 : 10 = 35\ 000$  ՀՀ դրամ,

բ. խոշոր ձեռնարկությունների դեպքում՝  $15 * 350\ 000 : 300 = 17\ 500$  ՀՀ դրամ:

Ազդեցության անհամաչափության վերլուծություն.

հանրային սննդի օբյեկտների կողմից համապատասխանության (վարչական) ծախսերի տարեկան գումարը՝ դրանց տարեկան շրջանառության համեմատ՝

ա. ՓՄՁ-ների դեպքում՝  $350\ 000 : 50\ 000\ 000 * 100\ \% = 0.7\ \%$ ,

բ. խոշոր ձեռնարկությունների դեպքում՝  $350\ 000 : 100\ 000\ 000 * 100\ \% = 0.35\ \%$ :

Իրականացված վերլուծությունների հիման վրա կարելի է եզրահանգել, որ առաջարկվող տարբերակն ունի անհամաչափ ազդեցություն ՓՄՁ-ների վրա՝ խոշոր ձեռնարկությունների համեմատ, մասնավորապես՝ ազդեցության չափը թե՛ դրամական և թե՛ տոկոսային առումով կրկնակի անգամ ավել է: Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել առաջարկվող տարբերակի վերաբերյալ որոշման կայացման ժամանակ:

**Օրինակ 4. Ֆիզիկական անձանց համապատասխանության ծախսերի վրա ազդեցության գնահատում**

Դիցուք՝ որպես COVID-19 համաճարակի դեմ պատվաստումների մակարդակի խնդրի լուծման տարբերակ, առաջարկվում է սահմանել պատվաստված լինելու պահանջ՝ որպես հանրային սննդի օբյեկտներ մուտք գործելու պարտադիր նախապայման:

Իրականացված ուսումնասիրությունների և հանրային քննարկումների արդյունքում բացահայտվել են՝

**1) հետևյալ վիճակագրական տվյալները՝**

ա. երկրում գրանցված աշխատողների թիվը կազմում է 500 000,

բ. աշխատողների մոտ 50%-ը ընդմիջմանը սնվում են հանրային սննդի օբյեկտներում, մյուս 50%-ը տանից են աշխատում կամ ընդմիջմանը սնվում են աշխատանքի վայրում,

գ. հանրային սննդի օբյեկտներում սնվում են ևս 200 000 մարդիկ, ովքեր չեն հանդիսանում աշխատողներ:

**2) հետևյալ հիմնական համապատասխանության ծախսերը՝**

ա. պատվաստվել ցանկացող անձանց կողմից պատվաստանյութի տեսակների, պատվաստման գործընթացի, պատվաստման վայրերի տեղակայման վերաբերյալ տեղեկատվություն ստանալը և պատվաստման համար գրանցվելը:

Աշխատողի ժամանակի ծախսը գնահատվել է 1 ժամ:

բ. պատվաստման համար պատվաստման վայր ներկայանալը, հերթում սպասելը և պատվաստում ստանալը: Գործընթացը իրականացվում է 2 անգամ՝ 14-21 օր ընդմիջումով:

Աշխատողի ժամանակի ծախսը գնահատվել է 1 ժամ՝ յուրաքանչյուր գործընթացի համար:

Աշխատողի 1 ժամվա վարձատրությունը միջինում կազմում է 4 000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով ներկայացված վիճակագրական տվյալները՝ առաջարկվող տարբերակի կիրարկման արդյունքում՝

ա. 1 ֆիզիկական անձի համապատասխանության ծախսերի գումարը կկազմի՝  $(1 + 4 + 4) * 4.000 = 36 000$  ՀՀ դրամ,

բ. պատվաստվող բոլոր անձանց ընդհանուր ծախսերի գումարը կկազմի՝  $36 000 * ((500 000 * 50 : 100) + 200 000) = 16.2$  մլրդ ՀՀ դրամ<sup>1</sup>:

Անհրաժեշտ է իրականացնել նաև ազդեցությունների անհամաչափության վերլուծություն՝ ըստ ֆիզիկական անձանց տարբեր ենթախմբերի: Օրինակ՝ կախված բնակության վայրից՝ պատվաստման վայրեր ներկայանալը կարող է հավելյալ ժամանակ պահանջել՝ այլ ենթախմբերի շահառուների համեմատ:

<sup>1</sup> Հաշվարկի հիմքում դրված է այն ենթադրությունը, որ հանրային սննդի օբյեկտներում սնվող բոլոր ֆիզիկական անձինք կմասնակցեն պատվաստման գործընթացին:

## 2. Մրցակցության վրա ազդեցությունների գնահատում

Ստորև տրված Աղյուսակ 2-ում ներկայացված է մրցակցության վրա ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչների ցանկն ու յուրաքանչյուրի նկարագրությունը:

*Աղյուսակ 2.*

*Մրցակցության վրա ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչներ և դրանց նկարագրություն*

	Նշանակալիության որոշման չափորոշիչներ	Չափորոշիչների նկարագրություն
1.	Տնտեսվարող սուբյեկտների թվի կամ շրջանակի սահմանափակում	<p>Տեղի է ունենում, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է հետևյալ դրույթներից մեկը կամ մի քանիսը՝</p> <p>1) տնտեսվարող սուբյեկտներին ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու բացառիկ իրավունքների շնորհում,</p> <p>2) լիցենզավորման, թույլտվության, արտոնագրման կամ հավաստագրման գործընթացի՝ որպես գործունեության իրականացման պահանջի սահմանում,</p> <p>3) առանձին տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հնարավորությունների սահմանափակում,</p> <p>4) տնտեսվարող սուբյեկտների՝ շուկա մուտք գործելու կամ շուկայից դուրս գալու հետ կապված ծախսերի էական բարձրացում,</p>



		<p>5) տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու, մարդկային ռեսուրսներ ներգրավելու կամ ներդրումներ կատարելու համար աշխարհագրական խոչընդոտների ստեղծում:</p>
<p>2.</p>	<p>Տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցության կարողությունների սահմանափակում</p>	<p>Տեղի է ունենում, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է հետևյալ դրույթներից մեկը կամ մի քանիսը՝</p> <p>1) տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների գինը սահմանելու հնարավորությունների սահմանափակում,</p> <p>2) տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ գովազդելու կամ շուկայահանելու հնարավորությունների սահմանափակում,</p> <p>3) ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների որակի նկատմամբ այնպիսի չափանիշների սահմանում, որոնք որոշ տնտեսվարող սուբյեկտներին տալիս են մրցակցային առավելություններ՝ այլ տնտեսվարող սուբյեկտների համեմատ, կամ գերազանցում են իրազեկ սպառողների կողմից նախընտրելի չափը,</p>

		4) շուկայում գործող և շուկա նոր մուտ գործող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցման սահմանում:
3.	Տնտեսվարող սուբյեկտների համար մրցակցելու խթանների նվազում	<p>Տեղի է ունենում, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է հետևյալ դրույթներից մեկը կամ մի քանիսը՝</p> <p>1) ինքնակարգավորման կամ համակարգավորման ռեժիմի սահմանում,</p> <p>2) տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ինքնարժեքի, գնի կամ վաճառքի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման պահանջի սահմանում կամ դրա իրականացման խրախուսում,</p> <p>3) տնտեսական գործունեության առանձին տեսակների կամ առանձին տնտեսվարող սուբյեկտների գործունեության ազատում՝ մրցակցությունը կարգավորող ընդհանուր օրենսդրական դաշտի պահանջներից:</p>
4.	Սպառողների ընտրության և նրանց հասանելի տեղեկատվության սահմանափակում	Տեղի է ունենում, երբ առաջարկվող կարգավորումը ներառում է հետևյալ դրույթներից մեկը կամ մի քանիսը՝

		<p>1) սպառողների կողմից շահառուներին ընտրելու վերաբերյալ որոշում կայացնելու հնարավորության սահմանափակում,</p> <p>2) ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող ձեռնարկությունների փոփոխության համար նախատեսված ուղղակի կամ անուղղակի ծախսերի բարձրացում, որը հանգեցնում է սպառողների և ձեռնարկությունների միջև շարժունակության նվազմանը,</p> <p>3) սպառողների կողմից արդյունավետ գնումներ կատարելու համար պահանջվող տեղեկատվության ստացման խոչընդոտներ (ապակողմնորոշիչ, ոչ վստահելի կամ արագ փոփոխվող տեղեկատվություն), որոնք մոլորության մեջ են գցում սպառողներին:</p>
--	--	--

Ստորև ներկայացված են ԿԱԳ վերլուծության իրականացման ընթացքում մրցակցության վրա նշանակալի ազդեցությունների գնահատման իրականացման հիմնական մեթոդական քայլերը՝

1. Ապրանքային շուկաների<sup>5</sup>, որտեղ գործունեություն են իրականացնում շահառուները, և նշանակալի ազդեցությունների ցանկի հստակեցում. իրականացվում է ԿԱԳ վերլուծության ընթացքում ազդեցությունների

<sup>5</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՕ-112 ՀՀ օրենքի 3-րդ Հոդվածի 4-րդ կետի համապատասխան - <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166229>

բացահայտման և շահառուների նույնականացման գործընթացների հիման վրա,

2. Ելակետային սցենարի նկարագրություն. իրականացվում է ներկա իրավիճակի՝ առանց լրացուցիչ միջամտության զարգացման նկարագրություն,
3. Մրցակցության վրա ազդեցությունների գնահատում՝ ըստ յուրաքանչյուր ազդեցության. իրականացվում է կարգավորման տարբերակի՝ մրցակցության վրա ազդեցությունների հանրագումարային գնահատում՝ հիմք ընդունելով բոլոր ազդեցությունների գնահատումները:

Մրցակցության վրա ազդեցությունների որակական գնահատման համար ընդունված է կիրառել ըստ ազդեցության նշանակալիության որոշման յուրաքանչյուր չափորոշի կազմված հարցադրումները, որոնց ցանկը ներկայացված է ստորև տրված Աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3.*

*Մրցակցության վրա ազդեցությունների որակական գնահատման հարցադրումներ՝  
ըստ ազդեցության նշանակալիության որոշման յուրաքանչյուր չափորոշի*

	Նշանակալիության որոշման չափորոշիչներ	Հիմնական հարցադրումներ
1.	Ազդեցություններ ձեռնարկատիրակա	1. Ինչպիսի՞ն է ազդեցությունը՝ կարգավորման պահանջների ապահովման հետ կապված ծախսերի վրա.

<p>ն գործունեությամբ զբաղվող՝ շուկայում գործող սուբյեկտների վրա</p>	<p>1) Արդյո՞ք կարգավորման տարբերակն առաջացնում է լրացուցիչ ծախսեր՝ գործող ձեռնարկությունների համար: Արդյո՞ք այդ ծախսերը հնարավոր է գնահատել:</p>
	<p>2) Ի՞նչ տեսակի ծախսեր են պահանջվում: Արդյո՞ք դրանք պարբերաբար կատարվող, թե՛ մեկանգամյա կատարվող ծախսեր են:</p>
	<p>3) Որքա՞ն են կազմում ծախսերը՝ ձեռնարկությունների տարեկան հասույթի համեմատ:</p>
	<p>4) Արդյո՞ք 3-րդ ենթակետի հարցին տրվող պատասխանը տարբեր է՝ կախված ձեռնարկության չափից: Օրինակ՝ գերփոքր կամ փոքր ձեռնարկությունները կարող են ավելի խոցելի լինել:</p>
	<p>5) Արդյո՞ք 3-րդ ենթակետի հարցին տրվող պատասխանը տարբեր է՝ կախված ձեռնարկության ակտիվների ծառայության ժամկետից (հին և նոր): Օրինակ՝ հին արտադրական շինություններ ունեցող ձեռնարկությունները կարող են ավելի մեծ ազդեցություն կրել:</p>
	<p>6) Արդյո՞ք 3-րդ ենթակետի հարցին տրվող պատասխանը տարբեր է՝ կախված ձեռնարկության կամ ապրանքային շուկայի այլ հատկանիշներից (տեղակայում, ուղղահայաց կամ հորիզոնական ինտեգրված լինելու հանգամանք և այլն): Օրինակ՝ տարբեր վայրերում (քաղաքային կամ գյուղական համայնքներում) տեղակայված ձեռնարկությունները կարող են տարբեր ազդեցություն կրել:</p>

		<p>7) Ինչպիսի՞ն է ազդեցությունը ձեռնարկությունների՝ շուկայից դուրս գալու հետ կապված գործընթացների վրա.</p> <p>ա) արդյո՞ք սահմանված պահանջները կամ ծախսերը հանգեցնում են որոշ ձեռնարկությունների՝ շուկայից դուրս գալուն,</p> <p>բ) ո՞ր ձեռնարկությունների՝ շուկայից դուրս գալու հավանականությունն է ավելի բարձր:</p> <p>Օրինակ՝ արդյո՞ք կարելի է կանխատեսել, որ փոքր կամ խոշոր ձեռնարկությունները, որոնք ունեն ավելի հին արտադրական շինություններ, դուրս կգան շուկայից:</p>
		<p>2. Ինչպիսի՞ն է ազդեցությունը տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու տեսանկյունից.</p> <p>1) արդյո՞ք կարգավորման տարբերակը սահմանափակում է շուկայում գործող ձեռնարկությունների բնականոն գործունեությունը,</p> <p>2) արդյո՞ք կարգավորման տարբերակով սահմանվող կարգավորումներն ավելի նպաստավոր են շուկայում գործող ձեռնարկությունների համար՝ շուկա նոր մուտք գործող ձեռնարկությունների համեմատ:</p>
		<p>3. Ինչպիսի՞ն է ազդեցությունը ձեռնարկությունների կողմից հակամրցակցային համաձայնությունների կայացման տեսանկյունից.</p> <p>1) արդյո՞ք կարգավորման տարբերակը կարող է նպաստել ձեռնարկությունների կողմից հակամրցակցային</p>

		<p>համաձայնությունների կայացմանը (գաղտնի պայմանավորվածություններ և այլն),</p> <p>2) արդյո՞ք կարգավորման ենթակա ոլորտում երբևէ եղել են հակամրցակցային համաձայնությունների կայացման դեպքեր: Եթե այո, ապա այս փաստն անհրաժեշտ է հաշվի առնել որոշումների կայացման գործընթացում:</p>
2.	<p>Ազդեցություններ ձեռնարկատիրակա ն գործունեությամբ զբաղվող սուբյեկտների՝ շուկա մուտք գործելու պայմանների վրա</p>	<p>1) Արդյո՞ք կարգավորման տարբերակը սահմանափակում է նոր ձեռնարկությունների մուտքը շուկա.</p> <p>ա) շուկա նոր մուտք գործող բոլոր տեսակի ձեռնարկությունների մասով:</p> <p>Օրինակ՝ եթե կարգավորման տարբերակը սահմանափակում է դեղատների թիվը (ոչ ավելի, քան մեկ դեղատուն՝ 5.000 բնակչի հաշվով), այս կարգավորումը տարածվում է բոլոր տեսակի դեղատների վրա՝ հստակ սահմանափակելով մրցակցությունը շուկայում,</p> <p>բ) արդյո՞ք կարգավորման տարբերակով սահմանվող կարգավորումներն ավելի շատ ազդում են շուկա նոր մուտք գործող, թե՛ շուկայում արդեն իսկ գործունեություն ծավալող ձեռնարկությունների վրա,</p> <p>գ) արդյո՞ք սահմանվող կարգավորումներն ավելի շատ ազդում են ՓՄՁ-ների, թե՛ խոշոր ձեռնարկությունների վրա,</p> <p>դ) արդյո՞ք սահմանվող կարգավորումներն օտարերկրյա ձեռնարկությունների վրա ազդում են ավելի շատ, քան տեղական ձեռնարկությունների վրա:</p>

		2) Արդյո՞ք կարգավորման տարբերակը սահմանափակում է որոշակի ռեսուրսների հասանելիությունը (հումք, «նոու-հաու», բաշխման ուղիներ և այլն):
3.	Ազդեցություններ գների (սպառողների) վրա	<p>1) Արդյո՞ք սպառողական ապրանքների գները կարող են աճել: Եթե այո, ապա որո՞նք են գնաճին նպաստող հիմնական գործոնները.</p> <p>ա) արդյո՞ք առկա է արտադրական ծախսերի աճ, բ) շուկայական դիրքի ամրապնդում, գ) արդյո՞ք առկա են գաղտնի պայմանավորվածություններ շուկայի տարբեր մասնակիցների միջև:</p>
4.	«Ոչ գնային» ազդեցություններ (սպառողների վրա)	<p>1) Արդյո՞ք կարգավորման տարբերակն ազդում է ապրանքների որակի, տեսականու կամ սպառողների ընտրության հնարավորության վրա:</p> <p>Օրինակ՝ եթե կարգավորման տարբերակը սահմանում է ապրանքների որակի նվազագույն չափանիշներ, դա կարող է ապրանքների՝ շուկա մուտք գործելու արգելք հանդիսանալ:</p> <p>2) Արդյո՞ք կարգավորման տարբերակն ազդում է նորարարական գործունեության վրա:</p> <p>Օրինակ՝ եթե կարգավորման տարբերակը սահմանափակում է նոր մասնակիցների մուտքը շուկա, ապա շուկայում գործող ձեռնարկությունները շահագրգռված չեն լինի զբաղվելու նորարարական գործունեությամբ՝ սեփական մրցակցային դիրքերը պահելու և ամրապնդելու համար:</p>



5.	<p>Ազդեցություններ մատակարարների և սպառողների (ձեռնարկություններ) շուկաների վրա</p>	<p>Հիմք ընդունելով, որ մատակարարների շուկան տվյալ ձեռնարկությանը մատակարարող բոլոր ձեռնարկությունների ամբողջությունն է, իսկ սպառողների շուկան՝ բոլոր հաճախորդների ամբողջությունը (թե՛ վերջնական սպառողներ, թե՛ միջանկյալ սպառողներ՝ այլ վերամշակող ձեռնարկություններ)՝</p> <p>1) Որքանո՞վ է տվյալ ոլորտն ուղղահայաց կերպով ինտեգրված, այսինքն՝ ձեռնարկությունները հանդիսանում են այլ ձեռնարկությունների սեփականատերեր կամ վերահսկում են դրանց՝ մատակարարների կամ սպառողների շուկաներում:</p> <p>Արդյո՞ք կարգավորման տարբերակով սահմանվող կարգավորումներն այլ կերպ են ազդում ուղղահայաց ինտեգրված ձեռնարկությունների վրա՝ ի համեմատություն ձեռնարկությունների, որոնք ուղղահայաց ինտեգրված չեն:</p> <p>Արդյո՞ք սահմանվող կարգավորումները կարող են նպաստել ոլորտում ուղղահայաց ինտեգրման ավելացմանը՝ դրանով իսկ ավելացնելով շուկա մուտք գործելու խոչընդոտները:</p> <p>2) Ինչպե՞ս կարգավորման տարբերակը կազդի սպառողների շուկայական իշխանության (բանակցելու հնարավորությունների) վրա:</p> <p>3) Ինչպե՞ս կարգավորման տարբերակը կազդի մատակարարների՝ շուկայական իշխանության (բանակցելու հնարավորությունների) վրա:</p>
----	---	---

**Օրինակ 5. Մրցակցության վրա ազդեցությունների որակական (և քանակական) գնահատում դեղատների քանակի սահմանափակման օրինակով**

Դիցուք՝ կարգավորման տարբերակով առաջարկվում է աշխարհագրորեն սահմանափակել շուկայում գործող դեղատների քանակը, մասնավորապես՝

ա. ըստ համայնքի բնակիչների թվի՝ 1 դեղատուն տվյալ համայնքի յուրաքանչյուր 5 000 բնակչի հաշվով,

բ. ըստ միմյանց միջև հեռավորության՝ դեղատների միջև նվազագույն հեռավորությունը պետք է կազմի 1 000 մ:

Ենթադրենք, ներկայումս գործող դեղատների քանակը կազմում է 1 000, որոնցից՝ 200-ը ՓՄՁ-ներ են, 800-ը պատկանում են 3 խոշոր դեղատների ցանցի: ՓՄՁ-ներին և խոշոր ձեռնարկություններին պատկանող դեղատներն աշխարհագրորեն հավասարաչափ են բաշխված: Առաջարկի կիրարկման արդյունքում սահմանված պահանջներին չհամապատասխանող դեղատները կամ պետք է տեղափոխվեն մեկ այլ վայր, կամ դադարեցնեն իրենց գործունեությունը:

Իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ՝

ա. շուկայում գործող դեղատների 50%-ը չի համապատասխանում առաջարկվող կարգավորման պահանջներին,

բ. 2 000 բնակչից պակաս ունեցող բնակավայրերում դեղատուն բացելը շահութաբեր չէ,

գ. առաջարկվող կարգավորման պահանջներին համապատասխան կարող են բացվել նոր դեղատներ. ընդհանուր առմամբ քաղաքային բնակավայրերում կարելի է բացել 200 նոր դեղատներ, սակայն գյուղական բնակավայրերում նման հնարավորությունը բացակայում է,

դ. յուրաքանչյուր դեղատան միջին տարեկան շրջանառությունը կազմում է 100 մլրդ ՀՀ դրամ,

ե. խոշոր ձեռնարկություններն իրականացնում են նաև դեղագործական ապրանքների ներմուծում և մեծածախ վաճառք, ինչի շնորհիվ ստանում են ավելի բարձր շահույթ՝ ՓՄՁ-ների համեմատ:

Մրցակցության վրա ազդեցությունների որակական (և քանակական) գնահատումն իրականացվել է՝ կիրառելով ստորև ներկայացված հարցադրումների ցանկն՝ ըստ ազդեցության նշանակալիության որոշման չափորոշիչների.

<p>Ազդեցություններ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող՝ շուկայում գործող սուբյեկտների վրա (դեղատներ)</p>	<p>1) Դեղատների (հաստատուն կամ փոփոխական) ծախսերի աճ.</p> <p>Դեղատների՝ գործունեության նոր վայր տեղափոխման հետ կապված (հաստատուն) ծախսեր: Տվյալ խումբ դեղատների առավելագույն քանակը կազմում է 200:</p>
	<p>2) Ազդեցության ենթարկվող շահառուների (դեղատներ) այդ թվում՝ ՓՄՁ-ների քանակը և տեսակարար կշիռը.</p> <p>Գործող շահառուների 50%-ը՝ 500 դեղատներ, որոնք չեն համապատասխանում սահմանվող կարգավորման պահանջներին, կենթարկվեն ուղղակի բացասական ազդեցության: Քանի որ դեղատներն՝ անկախ իրենց չափերից, աշխարհագրորեն հավասարաչափ են բաշխված, կարելի է կանխատեսել, որ ազդեցությունը շահառուների քանակի և տեսակարար կշռի վրա նույնպես կլինի հավասարաչափ<sup>1</sup>:</p>

	<p>Արդյունքում՝ ազդեցության կենթարկվեն ՓՄՁ-ներին և խոշոր ձեռնարկություններին պատկանող դեղատների 50%-ը, մասնավորապես՝ ՓՄՁ-ներին պատկանող 100 դեղատներ (200 * 50 : 100) և խոշոր ձեռնարկություններին պատկանող 400 դեղատներ (800 * 50 : 100):</p>
	<p>3) Ազդեցության ենթարկվող շահառուների (դեղատներ), այդ թվում՝ ՓՄՁ-ների շրջանառությունը.</p> <p>Ազդեցության ենթարկվող 500 դեղատների տարեկան շրջանառությունը կազմում է 50 մլրդ ՀՀ դրամ (100 * 50 : 100), որից ՓՄՁ-ների շրջանառությունը կազմում է 10 մլրդ ՀՀ դրամ (50 * 20 : 100), իսկ խոշոր ձեռնարկություններին՝ 40 մլրդ ՀՀ դրամ (50 * 80 : 100):</p>
	<p>4) Ազդեցության ենթարկվող շահառուների (դեղատներ), այդ թվում՝ ՓՄՁ-ների քանակը և տեսակարար կշիռը, որոնք կարող են դուրս գալ շուկայից.</p> <p>Առաջարկվող կարգավորման պահանջներին չհամապատասխանող 500 դեղատներից նվազագույնը 300-ը հնարավոր չի լինի տեղափոխել, ինչի արդյունքում այդ դեղատները դուրս կգան շուկայից: Քանի որ դեղատներն՝ անկախ իրենց չափերից, աշխարհագրորեն հավասարաչափ են բաշխված, կարելի է կանխատեսել, որ ազդեցությունը շուկայից դուրս եկող շահառուների քանակի և տեսակարար կշռի վրա նույնպես կլինի հավասարաչափ<sup>1</sup>:</p> <p>Արդյունքում՝ շուկայից դուրս կգան ՓՄՁ-ներին և խոշոր ձեռնարկություններին պատկանող դեղատների 30%-ը (300 : 1000 * 100), մասնավորապես՝ ՓՄՁ-ներին պատկանող 60</p>

	<p>դեղատներ (300 * 20 : 100) և խոշոր ձեռնարկություններին պատկանող 240 դեղատներ (300 * 80 : 100):</p> <p>5) Ազդեցության ենթարկվող շահառուների (դեղատներ), այդ թվում՝ ՓՄՁ-ների շրջանառությունը, որոնք կարող են դուրս գալ շուկայից.</p> <p>Ազդեցության ենթարկվող 300 դեղատների տարեկան շրջանառությունը կազմում է 30 մլրդ ՀՀ դրամ (100 * 30 : 100), որից ՓՄՁ-ների շրջանառությունը կազմում է 6 մլրդ ՀՀ դրամ (30 * 20 : 100), իսկ խոշոր ձեռնարկություններինը՝ 24 մլրդ ՀՀ դրամ (30 * 80 : 100):</p>
<p>Ազդեցություններ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների՝ շուկա մուտք գործելու պայմանների վրա</p>	<p>6) Ինչպիսի՞ն է առաջարկվող կարգավորման կիրարկման արդյունքում նոր ձեռնարկությունների, այդ թվում՝ ՓՄՁ-ների հնարավորությունները՝ շուկա մուտք գործելու հավանականությունը.</p> <p>Երկարաժամկետ տեսանկյունից առաջարկվող կարգավորումն ուղղակի կերպով սահմանափակում է նոր ձեռնարկությունների, այդ թվում՝ ՓՄՁ-ների, շուկա մուտք գործելու հնարավորությունը (սահմանելով շուկայում գործող տնտեսվարողների առավելագույն քանակ):</p> <p>Գործող կարգավորումների պարագայում եռամյա կտրվածքով շուկա մուտք էին գործում 10 նոր ՓՄՁ-ներ և 1 նոր խոշոր ձեռնարկություն՝ 10 նոր դեղատներից բաղկացած դեղատնային ցանց:</p> <p>Արդյունքում՝ եռամյա կտրվածքով կսահմանափակվի 20 նոր դեղատների մուտքը շուկա՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ, մասնավորապես՝</p>

	<p>բաց թողնված պետական հարկեր, տարածքների վարձակալական վճարներ, նոր աշխատատեղեր և այլն:</p>
<p>Ազդեցություններ սպառողների վրա</p>	<p>7) Որքա՞ն է ֆիզիկական անձ շահառուների թիվը և տեսակարար կշիռը.</p> <p>Հնարավոր շահառուներ են հանդիսանում դեղագործական ապրանքներ սպառող բոլոր անձինք. նրանք կարող են կրել ինչպես բացասական ազդեցություններ (կապված որոշ տարածքներում դեղատների փակման հետ), այնպես էլ դրական ազդեցություններ (կապված որոշ տարածքներում նոր դեղատների բացման հետ):</p> <p>8) Կան արդյո՞ք անհամաչափ ազդեցություն կրող շահառուների խմբեր/ենթախմբեր.</p> <p>Դեղատների հասանելիության նվազումը կարող է անհամաչափ ազդեցություն ունենալ տեղաշարժման դժվարություններ ունեցող շահառուների (տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք) ենթախմբերի վրա:</p> <p>9) Ինչպե՞ս են դրսևորվելու ազդեցությունները ֆիզիկական անձ շահառուների վրա.</p> <p>Որոշ դեղատների տեղափոխման ծախսերի փոխհատուցման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դեղագործական ապրանքների գները կարող են աճել:</p> <p>Դեղատների քանակի կրճատումը կարող է բացասական ազդեցություն ունենալ դեղագործական ապրանքների հասանելիության վրա և սպառողների ընտրության հնարավորության վրա՝ թե ումից գնում կատարել:</p>

	<p>Որոշ տարածքներում նոր դեղատների բացումը կարող է դրական ազդեցություն ունենալ դեղագործական ապրանքների հասանելիության վրա և սպառողների ընտրության հնարավորության վրա՝ թե ումից գնում կատարել:</p>
<p>Ազդեցություններ ձեռնարկությունների առաջնային (մատակարարներ) և երկրորդային (հաճախորդներ) շուկաների վրա</p>	<p>10) Ի՞նչ չափով են ձեռնարկությունների տարբեր խմբերն ուղղահայաց ինտեգրված.</p> <p>Խոշոր ընկերություններն ուղղահայաց ինտեգրված են (դեղագործական ապրանքների մատակարարների հետ) և նոր կարգավորման պահանջների կիրարկման արդյունքում այդ իրավիճակը փոփոխություն չի կրի: Ուղղահայաց ինտեգրումը խոշոր ձեռնարկություններին տալիս է առավելություններ՝ ՓՄՁ-ների համեմատ:</p>
	<p>11) Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ ուղղահայաց ինտեգրումը կարգավորման կիրարկման հետևանքների վրա: Շահառուների ի՞նչ խմբեր, այդ թվում՝ ՓՄՁ-ներ կարող են կրել բացասական հետևանքներ: Այդ շահառուների խմբերի տեսակարար կշիռը.</p> <p>Խոշոր ընկերությունները ձևավորում են լրացուցիչ եկամուտներ՝ դեղագործական ապրանքների ներմուծման և մեծածախ վաճառքի գործունեության արդյունքում: Լրացուցիչ եկամուտները դեղատների՝ նոր տարածքներ տեղափոխման մասով խոշոր ընկերություններին կարող են տրամադրել առավելություն՝ ՓՄՁ-ների համեմատ:</p> <p>Տարբեր վերլուծությունների և կանխատեսումների արդյունքում՝ ՓՄՁ-ները կարող են կրել շատ անհամաչափ</p>

	<p>ազդեցություն, մասնավորապես՝ նոր բացվող 200 դեղատները կարող են բացվել խոշոր ընկերությունների կողմից, ինչի արդյունքում ՓՄՁ-ներին պատկանող և կարգավորման պահանջներին չհամապատասխանող դեղատների մինչև 100 %-ը (100 դեղատներ) կարող են դուրս գալ շուկայից:</p>
<p><sup>1</sup> Անհրաժեշտ է գնահատել ՓՄՁ-ների վրա ազդեցության անհամաչափությունը, որի համար հարկավոր է լրացուցիչ ուսումնասիրությունների, վերլուծությունների և հանրային քննարկումների իրականացում: Արդյունքում, կարող է բացահայտվել, որ ազդեցության ենթարկվող ՓՄՁ-ների տեսակարար կշիռն ավելի մեծ է, քան իրականացված նախնական հաշվարկներում:</p>	

**3. Մրցակցության վրա ազդեցությունների քանակական գնահատման մեթոդներ**

Մրցակցության վրա ազդեցությունների քանակական գնահատման իրականացման ժամանակ ընդունված է ազդեցությունները հաշվարկել որպես սպառողական ավելցուկի փոփոխություն, հետևյալ բանաձևով՝

$$CCS = \left( \rho + \frac{1}{2} |\epsilon| \rho^2 \right) R$$

որտեղ՝

CCS – սպառողական ավելցուկի փոփոխություն է. կարող է գնահատվել ոլորտի/շուկայի՝ նախկինում իրականացված ուսումնասիրությունների կամ ստորև ներկայացված (Աղյուսակ 4) ուղենիշային գնի փոփոխությունների հիման վրա,



$p$  – կարգավորման հետ կապված գնի տոկոսային փոփոխություն է,

$R$  – ոլորտի/շուկայի մեծությունն է՝ դրամական արտահայտությամբ. տվյալները կարելի է հավաքագրել պաշտոնական վիճակագրական աղբյուրներից կամ իրականացված ուսումնասիրություններից: Տվյալների բացակայության պարագայում՝ ոլորտի/շուկայի մեծության գնահատումն առաջարկվում է իրականացնել շահառուների և փորձագետների հետ քննարկումների արդյունքների հիման վրա,

$|\epsilon|$  – պահանջարկի առաձգականության բացարձակ արժեքն է. կարելի է գնահատել կոնկրետ շուկաներում իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա:

Եթե պահանջարկը առաձգական չէ, այսինքն՝ գնի 1% փոփոխությունը հանգեցնում է պահանջարկի 1%-ից պակաս փոփոխության, ապա սպառողական ավելցուկի փոփոխությունը հաճախ համարժեք է գնի փոփոխությանը:

Օրինակ՝ հայտնի է, որ Հայաստանում հացն ունի ոչ առաձգական պահանջարկ, այսինքն՝ եթե նոր հարկատեսակի ներդրման արդյունքում հացի գինը բարձրանա 5%-ով, այլ հավասար պայմաններում հացի պահանջարկը նվազելու է 1%-ից ավելի պակաս չափով: Այս դեպքում գնի փոփոխության հիմնական բեռն իրենց վրա են կրելու սպառողները՝ սպառողական ավելցուկի փոփոխության հաշվին:

Միևնույն ժամանակ, միջին և բարձր մրցակցային շուկաների պարագայում, երբ սպառողներն ունեն ապրանքների իրական այլընտրանքներ, տիպային ապրանքի պահանջարկի առաձգականության բացարձակ արժեքն ընդունված է հաշվարկել 2: Այս դեպքում սպառողական ավելցուկի փոփոխության հաշվարկման բանաձևը կարելի փոխակերպել հետևյալ ձևով՝

$$CB = (\rho + \rho^2) R$$

**Աղյուսակ 4.**

**Ուղենիշային գնի փոփոխություններն՝ ըստ մրցակցության վրա ազդող գործոնների և ենթագործոնների**

	Մրցակցության վրա ազդող գործոններ և ենթագործոններ	Ուղենիշային գնի փոփոխություն
1.	Տնտեսվարող սուբյեկտների թվի կամ շրջանակի սահմանափակում	- 0.20
	1) տնտեսվարող սուբյեկտներին ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու բացառիկ իրավունքի շնորհում	- 0.19
	2) լիցենզավորման, թույլտվության, արտոնագրման կամ հավաստագրման գործընթացի՝ որպես գործունեության պահանջի սահմանում	- 0.23
	3) առանձին տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հնարավորության սահմանափակում	- 0.15
	4) տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկա մուտք գործելու կամ շուկայից դուրս գալու հետ կապված ծախսերի էական աճ	- 0.19
	5) տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու, մարդկային ռեսուրսով	- 0.12

	ապահովելու, ներդրում կատարելու համար աշխարհագրական խոչընդոտի ստեղծում	
2.	Տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցության կարողությունների սահմանափակում	- 0.18
	1) սահմանափակվում են տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքների, ծառայությունների, աշխատանքների համար գին սահմանելու հնարավորությունները	- 0.19
	2) սահմանափակվում են տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքներ, ծառայություններ, աշխատանքներ գովազդելու կամ շուկայահանելու հնարավորությունները	- 0.14
	3) սահմանում են ապրանքների, ծառայությունների, աշխատանքների որակի նկատմամբ այնպիսի չափորոշիչներ, որոնք որոշ տնտեսվարող սուբյեկտներին մյուսների նկատմամբ տալիս են մրցակցային առավելություններ կամ գերազանցում են իրազեկված սպառողների կողմից նախընտրելի չափը	- 0.16
	4) առանձին տնտեսվարող սուբյեկտների համար ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ինքնարժեքի էական աճի հանգեցնող պայմանների սահմանում այլ տնտեսվարող սուբյեկտների հետ համեմատ (մասնավորապես՝ տարբերակված մոտեցում դրսևորելով շուկայում գործողների և շուկա նոր մուտք գործողների միջև)	- 0.39
3.	Տնտեսվարող սուբյեկտների համար մրցակցելու խթանների նվազեցում	- 0.20

	1) ինքնակարգավորման կամ համակարգավորման ռեժիմի սահմանում	- 0.28
	2) տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գների, վաճառքի կամ ինքնարժեքի մասին տեղեկատվությունը հրապարակելու պահանջ կամ խրախուսում	- 0.10
	3) տնտեսական գործունեության առանձին տեսակի կամ առանձին տնտեսվարող սուբյեկտների գործունեության ազատում մրցակցության ընդհանուր օրենսդրության պահանջներից	- 0.25
4.	Սպառողների ընտրության և նրանց հասանելի տեղեկատվության սահմանափակում	- 0.20
	1) սպառողների կողմից շահառուներին ընտրելու վերաբերյալ որոշում կայացնելու հնարավորության սահմանափակում	- 0.32
	2) տնտեսվարող սուբյեկտների փոփոխության համար ուղղակի կամ անուղղակի ծախսերի բարձրացմամբ պայմանավորված՝ սպառողների և տնտեսվարող սուբյեկտների միջև դինամիկայի կրճատում	- 0.12
	3) գնորդների կողմից արդյունավետ գնումներ կատարելու համար պահանջվող տեղեկատվության շրջանակի հիմնարար փոփոխություն	- 0.16

**Օրինակ 6. Մրցակցության վրա ազդեցությունների գնահատում անվադողերի ներմուծման սահմանափակման կիրարկման օրինակով**

Դիցուք՝ ԿԱԳ վերլուծության շրջանակներում որպես խնդիր է սահմանվել ներմուծվող անվադողերի վերահսկողության մակարդակը: Կառավարության կողմից որպես խնդրի լուծման տարբերակ առաջարկվում է սահմանել լիցենզիայի ձեռք բերման պարտադիր պահանջ անվադողերի ներմուծման գործունեության իրականացման համար:

Անվադողերի ներմուծման ոլորտի մեծությունը (ներմուծման տարեկան ծավալը) գնահատվում է 700 մլն ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով, որ «լիցենզավորման գործընթացի՝ որպես գործունեության պահանջի սահմանում» ենթագործոնի արդյունքում գների փոփոխման ուղենիշային մեծությունը կազմում է  $|-0.23|$ , իսկ անվադողերի պահանջարկի առաձգականությունը գնահատվում է  $|-2|$ ՝ սպառողական ավելցուկի փոփոխության հաշվարկը կունենա հետևյալ տեսքը՝

$$CCS = (0.23 + 0.23^2) * 700\ 000\ 000 = 198\ \text{մլն ՀՀ դրամ:}$$

**Օրինակ 7. Մրցակցության վրա ազդեցությունների գնահատում դեղատների քանակի սահմանափակման կիրարկման օրինակով**

Դիցուք՝ նոր կարգավորմամբ նախատեսվում է սահմանափակել գործող և շուկա մուտք գործել ցանկացող դեղատների քանակը:

Դեղատնային գործունեության շուկայի մեծությունը (շրջանառության տարեկան ծավալը) գնահատվում է 100 մլրդ ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով, որ «տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու, մարդկային ռեսուրսով ապահովելու, ներդրում կատարելու համար աշխարհագրական խոչընդոտի ստեղծում» ենթագործոնի արդյունքում գների փոփոխման ուղենիշային մեծությունը

կազմում է  $|-0.12|$ , իսկ դեղորայքի պահանջարկի առաձգականությունը գնահատվում է  $0'$  սպառողական ավելցուկի փոփոխության հաշվարկը կունենա հետևյալ տեսքը՝

$$CCS = 0.12 * 100\ 000\ 000\ 000 = 12 \text{ մլրդ } \llcorner\llcorner \text{ դրամ:}$$

Կարգավորման կիրարկման արդյունքում դեղորայք սպառողները նույն քանակությամբ դեղորայք ձեռք բերելու համար ստիպված կլինեն տարեկան 12 մլրդ  $\llcorner\llcorner$  դրամ ավելի ծախսել:

**4. Տնտեսական միջավայրի վրա այլ ազդեցությունների գնահատման մեթոդներ**

Ստորև տրված Աղյուսակ 5-ում ներկայացված է տնտեսական միջավայրի վրա այլ ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչների ցանկն ու յուրաքանչյուրի նկարագրությունը:

*Աղյուսակ 5.*

*Տնտեսական միջավայրի վրա այլ ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչներ և դրանց նկարագրություն*

	Նշանակալիության որոշման չափորոշիչներ	Չափորոշիչների նկարագրություն
1.	Տեղական կամ արտաքին առևտուր	Ընդգրկում են տեղական և միջազգային առևտրային հոսքերը:

		Գնահատման նպատակով ուսումնասիրվում են ներքին և արտաքին առևտրաշրջանառության ծավալներն ու դրանց հնարավոր փոփոխությունները:
2.	Պետական աջակցության ծրագրեր	Գնահատման նպատակով ուսումնասիրվում է ներպետական աջակցությամբ ծրագրերի ներդրման, փոփոխությունների կամ դադարեցման ազդեցությունը:

Ստորև ներկայացված են ԿԱԳ վերլուծության իրականացման ընթացքում տնտեսական միջավայրի վրա այլ ազդեցությունների գնահատման իրականացման մեթոդական քայլերը՝

**1. Տեղական կամ արտաքին առևտրի վրա ազդեցություններ.**

- 1) Ազդեցությունների մեխանիզմների հստակեցում,
- 2) Տեղական առևտրի և ներմուծման ու արտահանման ընթացիկ ծավալների վերլուծություն և գնահատում,
- 3) Տեղական առևտրի և ներմուծման ու արտահանման ընթացիկ ծավալների փոփոխության գնահատում՝ ըստ կարգավորման յուրաքանչյուր տարբերակի.

իրականացվում է տարբեր պաշտոնական աղբյուրներից ստացվող տեղեկատվության վերլուծության և հանրային քննարկումների իրականացման հիման վրա: Հնարավորության առկայության դեպքում գնահատումներն անհրաժեշտ է իրականացնել՝ ըստ ոլորտների և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների ենթախմբերի:

**2. Պետական աջակցության ծրագրերի ներդրման, փոփոխությունների կամ դադարեցման ազդեցություններ.**

1) Ծրագրերի վերաբերյալ ամբողջական և համապարփակ տեղեկատվության հստակեցում.

իրականացվում է ծրագրերի բնույթի, ֆինանսավորման չափի, շահառուների քանակի՝ ըստ ենթախմբերի, և այլ տեղեկատվության ամբողջական հավաքագրում և վերլուծություն,

2) Ծրագրերի իրականացման ոլորտների/ուղղությունների վերաբերյալ ընթացիկ իրավիճակի վերլուծություն (նոր ծրագրերի պարագայում).

իրականացվում է տվյալների ամբողջական և համապարփակ հավաքագրում և վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության նաև վերջին 5-10 տարվա կտրվածքով:

Օրինակ՝ եթե պետական աջակցության նոր ծրագրով առաջարկվում է դրամաշնորհներ տրամադրել որոշակի չափորոշիչներին համապատասխանող ձեռնարկություններին՝ նոր աշխատատեղերի ստեղծման համար, ապա անհրաժեշտ է հավաքագրել և վերլուծել վերջին տասնամյակում տվյալ ձեռնարկությունների կողմից (առանց աջակցության ծրագրերի) ստեղծված նոր աշխատատեղերի տարեկան քանակն՝ ըստ գործունեության վայրերի և ոլորտների: Նման վերլուծությունները հիմք են հանդիսանում նախատեսվող նոր ծրագրերի ակնկալվող արդյունավետության գնահատման համար:

3) Ծրագրերի ներդրմամբ, փոփոխություններով կամ դադարեցմամբ պայմանավորված ազդեցությունների գնահատում՝ ըստ շահառուների խմբերի/ենթախմբերի:

Ստորև ներկայացված են ազդեցությունների գնահատման գործնական օրինակներ՝ տնտեսական միջավայրի վրա այլ ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչներից յուրաքանչյուրի մասով:



## Օրինակ 8. Տեղական առևտրի վրա ազդեցությունների գնահատում

Դիցուք՝ գործող կարգավորումների համաձայն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի կազմակերպությունների համար կիրառվում է հարկման պարզեցված համակարգ. կազմակերպությունները վճարում են միասնական շրջանառության հարկ՝ 10%-ի չափով, որն իր մեջ ներառում է բոլոր հարկերը: Միևնույն ժամանակ, այլ ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների համար ընդհանուր հարկային բեռը կազմում է շուրջ 36%:

Հաշվի առնելով, որ SS ոլորտի հիմնական ծախսերը կազմում են աշխատավարձերը և որ ոլորտի ներդրողները խուսափում են բյուրոկրատական քայլերից ու նախընտրում են վճարել մեկ պարզեցված հարկ՝ գործող կարգավորումների կիրարկման արդյունքում SS ոլորտ են ներգրավվել նշանակալի ներդրումներ՝ նպաստելով դրա աճին:

Մասնավորապես՝ SS ոլորտում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2023 թվականին՝

- 1) ոլորտի շրջանառությունը՝ նախորդ տարվա համեմատ, աճել է 20%-ով,
- 2) ոլորտի շրջանառությունը կազմել է 500 մլրդ ՀՀ դրամ,
- 3) գործունեություն ծավալող կազմակերպությունների քանակը կազմել է 1 200:

SS ոլորտի վերջին 5 տարիների ցուցանիշների համապարփակ վերլուծության արդյունքում կանխատեսվում է, որ հաջորդող 8 տարիների ընթացքում ոլորտի շրջանառությունը կշարունակի աճել՝ տարեկան միջինում 10%-ի չափով:

Պետական բյուջե լրացուցիչ եկամուտներ ներգրավելու նպատակով՝ առաջարկվում է բարձրացնել SS ոլորտի միասնական շրջանառության հարկը՝ սահմանելով այն 15%:

Իրականացված վերլուծությունների և հանրային քննարկումների արդյունքում կանխատեսվում է, որ միասնական շրջանառության հարկի բարձրացումը կնվազեցնի SS

ուլորտի՝ հաջորդող տարիների կանխատեսվող աճը՝ 10%-ից այն դարձնելով 3%: Դա հիմնավորվում է նրանով, որ էականորեն կնվազի ուլորտի ներդրումային գրավչությունն ու գործող (և հնարավոր) ներդրողների մեծ մասը կտեղափոխվի ավելի բարենպաստ հարկային համակարգ ունեցող երկրներ:

Ստորև ներկայացված է առաջիկա 8 տարիների կտրվածքով SS ուլորտի կանխատեսվող աճի ու պետական բյուջե վճարվելիք հարկերի բացարձակ արժեքների հաշվարկվելու թույլտվությունն՝ ըստ Ելակետային և Առաջարկվող տարբերակների\*.

Ցուցանիշի անվանում	Դիտարկվող տարեթիվ								
	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
<b>Ելակետային տարբերակ (առանց լրացուցիչ գործողությունների)</b>									
SS ուլորտի կանխատեսվող շրջանառություն (մլրդ ՀՀ դրամ)	500	550	605	666	732	805	886	974	1 072
Պետական բյուջե վճարվող հարկեր (10%) (մլրդ ՀՀ դրամ)	50	55	61	67	73	81	89	97	107
<b>Առաջարկվող տարբերակ</b>									
SS ուլորտի կանխատեսվող շրջանառություն (մլրդ ՀՀ դրամ)	-	515	530	546	563	580	597	615	633

Պետական բյուջե վճարվող հարկեր (15%) (մլրդ ՀՀ դրամ)		77	80	82	84	87	90	92	95
Ստորև ներկայացված է առաջիկա 8 տարիների կտրվածքով SS ոլորտի կողմից պետական բյուջե վճարվող հարկերի՝ Ելակետային և Առաջարկվող տարբերակների բացարձակ ու ներկա (դիսկոնտավորված) արժեքների տարբերությունների (Ելակետային տարբերակի ցուցանիշ – Առաջարկվող տարբերակի ցուցանիշ) հաշվարկ-վերլուծությունը՝									
	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Տարբերությունը՝ բացարձակ արժեքով (մլրդ ՀՀ դրամ)	-	-22	-19	-15	-11	-6	-1	5	12
Դիսկոնտավորման գործակից **	-	0.909	0.826	0.751	0.683	0.621	0.564	0.513	0.467
Տարբերությունը՝ բերված ներկա արժեքի (մլրդ ՀՀ դրամ)	-	-20	-16	-12	-8	-4	-1	3	6

\* Հաշվարկներն ավելի մատչելի դարձնելու նպատակով բոլոր թվերը կլորացվել են:

\*\* Դիսկոնտավորման դրույքաչափը հաշվարկվել է 10%:

Հաշվարկ-վերլուծությունների հիման վրա կարելի է եզրահանգել, որ Ելակետային տարբերակի համեմատ՝ Առաջարկվող տարբերակի կիրարկման արդյունքում՝

ա. SS ոլորտի շրջանառությունն ամեն տարի կնվազի,

բ. պետական բյուջե վճարվող հարկերը կավելանան, սակայն միայն առաջիկա 6 տարիների կտրվածքով: 7-րդ տարվանից սկսած պետական բյուջե վճարվող հարկերը կնվազեն:

Հիմք ընդունելով հաշվարկ-վերլուծության արդյունքներն՝ անհրաժեշտ է գնահատել Առաջարկվող տարբերակի կիրարկման արդյունավետությունը և համադրել սահմանված նպատակին հասնելու այլընտրանքային տարբերակների արդյունավետության հետ:

### Օրինակ 9. Պետական աջակցության գործող ծրագրի դադարեցման ազդեցությունների գնահատում

Դիցուք՝ նոր կարգավորմամբ նախատեսվում է գյուղական համայնքներում իրականացնել զբոսաշրջության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացման պետական աջակցության ծրագիր: Իրականացվող ծրագրի համաձայն՝ Կառավարությունը տրամադրվում է դրամաշնորհներ գյուղական համայնքներում զբոսաշրջության ոլորտի ներդրումային նախագծերի իրականացման համար: Դրամաշնորհը տրամադրվում է իրականացվող ներդրումային ծախսերի 50%-ի չափով՝ առավելագույնը 25 մլն ՀՀ դրամ:

Պետական աջակցության ծրագրի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների և կազմակերպությունների հետ հանրային քննարկումների արդյունքում պարզվել է, որ՝

- 1) տարեկան կտրվածքով ծրագրի շահառու են դառնում շուրջ 100 նոր կազմակերպություններ,
- 2) 1 կազմակերպության տարեկան շրջանառությունը կազմում է շուրջ 100 մլն ՀՀ դրամ,

3) ծրագրի դադարեցման դեպքում՝ գյուղական համայնքներում զբոսաշրջության ոլորտի ներդրումային նախագծերի տարեկան առավելագույն քանակը կկազմի 20:

Գործող պետական աջակցության ծրագրի պայմաններում գյուղական համայնքների զբոսաշրջության ոլորտի՝ տարեկան կտրվածքով հիմնական արդյունքային ցուցանիշները հետևյալն են՝

1) իրականացվում են ընդհանուր շուրջ (100 \* 50 000 000) 5 մլրդ ՀՀ դրամի չափով հավելյալ նոր ներդրումներ, որոնցից շուրջ 2.5 մլրդ ՀՀ դրամը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին (տրամադրվող դրամաշնորհներ)\*,

2) ընդհանուր շրջանառությունն ավելանում է շուրջ (100 \* 100 000 000) 10 մլրդ ՀՀ դրամի չափով:

\* Ենթադրվում է, որ 1 ներդրումային նախագծի ընդհանուր գումարը կազմում է 50 մլն ՀՀ դրամ:

Պետական բյուջեի ծախսերի խնայողության նպատակով՝ առաջարկվում է դադարեցնել կառավարության կողմից պետական աջակցության ծրագրի իրականացումը:

Պետական աջակցության ծրագրի դադարեցման դեպքում գյուղական համայնքների զբոսաշրջության ոլորտի՝ տարեկան կտրվածքով ակնկալվող հիմնական արդյունքային ցուցանիշներն՝ ընթացիկ իրավիճակի համեմատ, կլինեն հետևյալը՝

ա. պետական բյուջեի ծախսերը կնվազեն (100 \* 25 000 000) 2.5 մլրդ ՀՀ դրամով (100%),

բ. ներդրումային նախագծերի տարեկան քանակը կնվազի (100 – 20) 80–ով (80%),

գ. իրականացվող հավելյալ նոր ներդրումների ընդհանուր չափը կնվազի (80 \* 50 000 000) 4 մլրդ ՀՀ դրամով (80 %),

դ. ընդհանուր շրջանառությունը կնվազի (80 \* 100 000 000) 8 մլրդ ՀՀ դրամով (80%):

### Օրինակ 10. Պետական աջակցության նոր ծրագրի ներդրման ազդեցությունների գնահատում

Դիցուք՝ նոր կարգավորմամբ առաջարկվում է ներդնել պետական աջակցության ծրագիր՝ արդյունաբերության ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով: Առաջարկվող ծրագրի համաձայն՝ ծրագրի շահառու կհանդիսանան արդյունաբերության ոլորտի այն ձեռնարկությունները, որոնք կստեղծեն տարեկան 100 կամ ավելի նոր աշխատատեղեր և կպահպանեն դրանք 3 տարիների ընթացքում: Ծրագրի շահառուները 3 տարվա ընթացքում՝ տարեկան կտրվածքով կստանան 50 000 ՀՀ դրամ դրամաշնորհ՝ ստեղծված յուրաքանչյուր նոր աշխատատեղի համար: Ծրագրի իրականացման հիմանական (շահառուների ներգրավման) փուլի գործողության ժամկետն առաջարկվում է սահմանել 3 տարի:

Արդյունաբերական ոլորտի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների և ձեռնարկությունների հետ հանրային քննարկումների արդյունքում պարզվել է, որ՝

- 1) 2023 թվականի դրությամբ ոլորտում գործող ձեռնարկությունների ընդհանուր քանակը կազմում է 200,
- 2) (առանց պետական աջակցության ծրագրի ներդրման) նախորդ 5 տարիների ընթացքում՝ տարեկան կտրվածքով ոլորտում գործող միջինում 40 ձեռնարկություններ ստեղծում են 100 կամ ավելի նոր աշխատատեղեր և պահպանում դրանք 3 տարիների ընթացքում,

3) ծրագրի ներդրման պարագայում՝ ոլորտում գործող ձեռնարկությունների մոտ 10%-ը (20 ձեռնարկություններ) շահագրգռված կլինի դառնալ ծրագրի շահառու:

Ստորև ներկայացված է պետական աջակցության ծրագրի ներդրման պարագայում կանխատեսվող հիմնական արդյունքների վերաբերյալ հաշվարկ-վերլուծությունը՝ ըստ տարիների.

Ծրագրի իրականացման դիտարկվող տարիները	Ծրագրի իրականացման հիմնական արդյունքային ցուցանիշները					
	Նախորդ տարիներից ծրագրի իրականացման շահառու հանդիսացող կազմակերպությունների քանակը	Կազմակերպությունների քանակը, որոնք նոր աշխատատեղեր են ստեղծում՝ անկախ պետական աջակցության ծրագրերի առկայությունից	Տվյալ տարում ծրագրի շահառու դարձած կազմակերպությունների քանակը	* Ստեղծված նոր աշխատատեղերի քանակն, այդ թվում՝		Պետական բյուջեից կատարվող՝ ծրագրի իրականացման ծախսերի չափը (<< դրամ)
Առանց լրացուցիչ խթանի (անկախ ծրագրի իրականացումից)	Պետական աջակցության ծրագրի ներդրման պարագայում					
Տարի 1	0	40	20 (200 * 10 : 100)	4 000 (40 * 100)	2 000 (20 * 100)	300 000 000 ((4 000 + 2 000) * 50 000)
Տարի 2	60	40	20	4 000 (40 * 100)	2 000	600 000 000

			(200 * 10 : 100)		(20 * 100)	((4 000 + 2 000) * 50 000 + 6 000 * 50 000)
Տարի 3	120	40	20 (200 * 10 : 100)	4 000 (40 * 100)	2 000 (20 * 100)	900 000 000 ((4 000 + 2 000) * 50 000 + 12 000 * 50 000)
Տարի 4 **	120	40	-	4 000 (40 * 100)	-	600 000 000 (12 000 * 50 000)
Տարի 5 **	60	40	-	4 000 (40 * 100)	-	300 000 000 (6 000 * 50 000)
<b>Ընդամենը</b>				<b>20 000</b>	<b>6 000</b>	<b>2 700 000 000</b>

\* Ենթադրվում է, որ յուրաքանչյուր կազմակերպության կողմից ստեղծվող նոր աշխատատեղերի քանակը կազմելու է 100:

\*\* Ծրագրի իրականացման հիմնական (շահառուների ներգրավման) փուլի գործողության ժամկետը 3 տարի է: Ըստ էության, տվյալ տարիներին պետական աջակցության ծրագիրն իրականացվում է միայն ծրագրի իրականացման նախորդ տարիներին ստեղծված նոր աշխատատեղերի մասով շահառու կազմակերպություններին ծրագրով նախատեսված գումարների վճարման մասով:



Հաշվարկ-վերլուծության հիման վրա կարելի է եզրահանգել, որ պետական աջակցության ծրագրի ներդրման արդյունքում 3 տարվա կտրվածքով արդյունաբերության ոլորտում կստեղծվեն 6 000 նոր աշխատատեղեր, իսկ ծրագրի իրականացման վրա պետական բյուջեից ծախսվող գումարի ընդհանուր չափը 5 տարվա ընթացքում կկազմի 2 700 000 000 ՀՀ դրամ:

Այսինքն՝ 1 հավելյալ աշխատատեղ ստեղծելու համար պետությունը 5 տարվա ընթացքում ծախսելու է 450 000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով հաշվարկ-վերլուծության արդյունքներն՝ անհրաժեշտ է գնահատել ծրագրի իրականացման արդյունավետությունը և համադրել սահմանված նպատակին հասնելու այլընտրանքային տարբերակների արդյունավետության հետ:

## ԳԼՈՒԽ 2

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

#### 1. Սոցիալական ազդեցությունների գնահատման մեթոդներ

##### 1) Ազդեցությունների բաշխման վերլուծություն

Կարգավորման տարբերակի սոցիալական ազդեցությունները գնահատելիս կարևոր է հասկանալ դրանց բաշխումը բնակչության տարբեր սոցիալական խմբերի միջև, որոշել օգուտներ ստացող և կորուստներ կրող խմբերը:

Հասարակության տարբեր խմբերի վրա կարգավորման տարբերակների ազդեցության գնահատումը նկարագրելու համար օգտագործվում է «բաշխման վերլուծություն» հասկացությունը: Տարբերակները կարող են տարբեր ազդեցություններ ունենալ անհատների վրա՝ ըստ նրանց բնութագրերի (օրինակ՝ սեռ, եկամտի մակարդակ, բնակության վայր (քաղաքային/գյուղական բնակավայր), տարիք և այլն):

Բաշխման վերլուծությունը կարևոր է այն դեպքերում, երբ տարբերակի ընդունման արդյունքում կարող են ի հայտ գալ նշանակալի վերաբաշխումներ հասարակության տարբեր խմբերի միջև: Միևնույն ժամանակ, վերլուծության խորությունը պետք է համաչափ լինի ազդակիրների վրա հավանական ազդեցություններին: Այսինքն՝ ազդեցությունների բաշխումը բոլոր դեպքերում հաշվարկելը նպատակահարմար չէ, պետք է հաշվի առնել համաչափ վերլուծության սկզբունքը: Եթե տարբերակի ազդեցությունն ազդակիր խմբերի վրա աննշան է, ապա ազդեցության, դրա հավանական մասշտաբի, ինչպես նաև ազդեցություններից խուսափելու կամ դրանց

մեղման հնարավոր տարբերակների մասին ընդամենն անհրաժեշտ է տեղեկացնել որոշում կայացնողներին:

**ԿԱԳ-ի շրջանակներում ե՞րբ պետք է իրականացվի սոցիալական ազդեցությունների բաշխման վերլուծություն**

Կարգավորումների մեծ մասը տարբեր ազդեցություններ է ունենում հասարակության տարբեր սոցիալական խմբերի վրա: Սակայն դա չի նշանակում, որ բոլոր ԿԱԳ-երը պետք է ներառեն բաշխման վերլուծություն: Բաշխման վերլուծություն իրականացնելու վերաբերյալ որոշում ընդունելիս պետք է հաշվի առնել ազդակիրների վրա կարգավորման տարբերակի հավանական հետևանքները, ինչպես նաև համաչափ վերլուծության սկզբունքը: Ընդհանուր առմամբ, ԿԱԳ-ի շրջանակներում բաշխման վերլուծություն անհրաժեշտ է իրականացնել հետևյալ դեպքերում.

ա. եթե ազդակիրների վրա ազդեցությունը մեծ է, պետք է վերլուծել ազդեցությունների բաշխումը և քննարկել բացասական ազդեցություններից խուսափելու կամ դրանք մեղմելու տարբերակները:

բ. եթե ԿԱԳ-ը բացահայտում է նշանակալի «կողմնակի» ազդեցություն քաղաքացիների խմբերի վրա, կարող է պահանջվել վերլուծություն:

գ. եթե վերաբաշխումը (օրինակ՝ քաղաքացիներին տրվող նպաստները) կարգավորման նպատակներից մեկն է:

Նման դեպքերում բաշխման վերլուծությունը շատ կարևոր է, քանի որ կարգավորման տարբերակներն ազդում են ազդակիր անձանց եկամուտների վրա: Անհրաժեշտ է իրականացնել կշռված և համարժեք եկամուտների բաշխման վերլուծություն:

Այսպիսով, ազդեցությունների բաշխումը նշանակալի լինելու դեպքում դրանք գնահատվում են: ԿԱԳ շրջանակներում ազդեցությունների բաշխումը գնահատում են տարբեր ձևերով, այդ թվում՝ պարզ որակական մոտեցումներով, երբ ազդեցության մասշտաբը փոքր է, իսկ ավելի մեծ ազդեցությունների դեպքում՝ անցկացնելով բաշխման խորը վերլուծություն: Այն դեպքում, երբ բաշխման էֆեկտը նշանակալի է որոշակի խմբի համար, բաշխման վերլուծությունը բացահայտում է, թե կարգավորման առաջարկվող տարբերակի արդյունքում որ խմբերն են հայտնվում շահավետ և որոնք՝ անբարենպաստ վիճակում:

## 2) Եկամտի համարժեքության վերլուծական մեթոդ

Սոցիալական քաղաքականությանն առնչվող շատ խնդիրներ լուծելիս անհրաժեշտություն է առաջանում համեմատել տարբեր կազմ ունեցող տնային տնտեսությունների բարեկեցության աստիճանը: Որպեսզի տնային տնտեսության եկամուտը կարողանա արտահայտել տվյալ ընտանիքի բարեկեցության աստիճանը, այն պետք է նախապես ճշգրտվի: Օրինակ՝ այն մեթոդը, երբ տնային տնտեսությունների բարեկեցության աստիճանը համեմատվում է ըստ ընտանիքի անդամների մեկ շնչին ընկնող միջին եկամտի, ակնհայտ թերություններ ունի: Այս մոտեցման դեպքում բարեկեցության նույն մակարդակն ապահովելու համար չորս անձից բաղկացած ընտանիքի եկամուտը պետք է չորս անգամ ավելի լինի մեկ անձից բաղկացած ընտանիքի եկամտից: Ակնհայտ է, որ այս մոտեցումը թերի է:

Նախ, ընտանիքի բոլոր անդամների պահանջմունքները նույնը չեն, դրանք կարող են տարբերվել՝ կախված նրա անդամների սեռից, տարիքից, աշխատունակ անդամների կրթությունից, բնակության վայրից և այլ գործոններից: Օրինակ՝ փոքր

երեխան կարիք չունի նույն քանակի սննդի, ինչքան չափահաս անձը, կամ հագուստի և տրանսպորտային ծախսերի պահանջարկը կախված է աշխատում է արդյոք տվյալ չափահասը, թե ոչ, և այլն:

Բացի այդ ընտանիքը խնայում է համատեղ ապրելու միջոցով: Երկու անձից բաղկացած ընտանիքը մեկ անձից բաղկացած ընտանիքի համեմատությամբ կարող է ծախսել երկու անգամ ավելի սննդի կամ հագուստի վրա, սակայն նույնը չի կարելի ասել օրինակ գույքահարկի կամ կոմունալ վճարումների դեպքում: Այսպիսով, օրինակ՝ ամսական 350 000 դրամ եկամուտ ունեցող հինգ անձից բաղկացած տնային տնտեսությունն ավելի ապահովված է, քան մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունը, որի ամսական եկամուտը կազմում է 70 000 դրամ՝ սպառման ցուցանիշում մասշտաբից տնտեսման հաշվին: Մասշտաբից բխող տնտեսումները արտացոլում են այն իրողությունը, որ բարեկեցության այս կամ այն մակարդակին հասնելու համար անհրաժեշտ սպառումը տնային տնտեսության չափի հետ գծային կապով չի աճում:

Այսպիսով, եթե կարգավորման առաջարկվող տարբերակը կարող է ազդել տարբեր չափի և կազմի խմբերի վրա, կարող է համարժեքացման կարիք առաջանալ: Համարժեքացումը ենթադրում է գործակիցների կիրառում՝ խմբերի տարբերվող կազմը ճշգրտելու նպատակով: Նշված գործակիցները կարող են հիմնված լինել սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների վրա, ինչպիսիք են եկամուտը և տարիքը: Համարժեքացումը թույլ է տալիս համեմատելի դարձնել տարբեր կառուցվածք ունեցող խմբերը:

Եկամուտների համարժեքացման համար օգտագործվող բանաձևի համաձայն՝ խմբի ընդհանուր եկամուտը բաժանվում է խմբի բոլոր անդամների գործակիցների գումարի վրա.

$$EI = \frac{\sum_{f=1}^N I_f}{\sum_{f=1}^N S_f}$$

որտեղ EI-ն համարժեք եկամուտն է, f-ը խմբի անդամների թիվն է, որը կարող է լինել 1-ից մինչև N,  $I_f$ -ը f-րդ անդամի եկամուտն է, իսկ  $S_f$ -ը՝ f-րդ անդամի գործակիցը:

### Օրինակ 11. Աղքատության նպաստների բաշխման վերլուծության օրինակ

Կառավարությունն իրականացնում է նպաստների վերաբերյալ ԿԱԳ:

Այս օրինակում համարժեքացումը թույլ է տալիս համեմատություն կատարել տարբեր չափերի խմբերում ընդգրկված տարբեր տարիքի անհատների միջև: Խմբի յուրաքանչյուր անդամին տրվում է գործակից: Օրինակ՝ հետևյալ անդամներից բաղկացած ընտանիքում 1-ին չափահասին տրվում է 0.6, 2-րդին՝ 0.4, 1-ին երեխային տրվում է 0.2, իսկ 2-րդ երեխային՝ 0.1 միավոր: Մինչ համարժեքացումը ընտանիքի ամսական եկամուտը կազմում է 200 000 ՀՀ դրամ:

Համարժեք եկամուտը ԿԱԳ-ում օգտագործվում է երկու խմբերը տարբերակելու համար: 1-ին խումբը երեխա չունեցող զույգն է, իսկ 2-րդը՝ երեխաներով զույգը:

1-ին խմբի (երեխա չունեցող զույգ) համարժեք եկամուտը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$EI = \frac{\sum_{f=1}^2 I_f}{\sum_{f=1}^2 S_f} = \frac{200,000}{0.6+0.4} = 200\ 000 \ll \text{դրամ}$$

2-րդ խմբի (երկու երեխա ունեցող զույգ) համարժեք եկամուտը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$EI = \frac{\sum_{f=1}^4 I_f}{\sum_{f=1}^4 S_f} = \frac{200,000}{0.6+0.4+0.2+0.1} = 153\ 846 \ll \text{դրամ}$$

Այսպիսով, 1-ին խմբի համարժեք եկամուտն ավելի բարձր է, քան 2-րդ խմբինը:

Միջազգային վիճակագրական պրակտիկայում կիրառվում են համարժեքության տարբեր սանդղակներ, օրինակ՝ Եվրամիության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրների մեծ մասում եկամուտների համարժեքացման համար առավել հաճախ կիրառվում է ՏՀԶԿ եկամուտների համարժեքացման մոդիֆիկացված սանդղակը, ըստ որի տնային տնտեսության 1-ին չափահաս անդամին տրվում է 1 գործակից, յուրաքանչյուր հաջորդ չափահաս անդամին կամ 14 տարեկանից մեծ երեխային՝ 0.5 գործակից, իսկ 14 տարեկանից փոքր յուրաքանչյուր երեխային՝ 0.3 գործակից:

### 3) Բաշխման կշիռների վերլուծական մեթոդ

Բնակչության ցածր եկամուտ ունեցող խմբերի կենսամակարդակին առնչվող տարբերակների ազդեցությունների ուսումնասիրությանն ուղղված հիմնական վերլուծական գործիքը բաշխման կշիռների կիրառումն է:

Բաշխման կշիռները կարող են կիրառվել տարբեր տեսակի քանակական ազդեցությունների գնահատման համար, սակայն դրանք առավել հարմար են այն ազդեցությունների գնահատման համար, որոնք արդեն արտահայտվել են դրամական արտահայտությամբ՝ որպես ծախսեր կամ օգուտներ: Ծախս-օգուտ վերլուծություն իրականացնելիս ծախսերն ու օգուտները չեն կշռվում: Սակայն որոշ դեպքերում տարբերակների ծախսերն ու օգուտները գնահատելիս կարող է անհրաժեշտ կամ ցանկալի լինել «կշռել» այդ ծախսերն ու օգուտները՝ կախված նրանից, թե հասարակության որ խմբերին են դրանք առնչվում:

Բաշխման կշռված վերլուծության մեջ ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների ֆինանսական օգուտներին տրվում է ավելի բարձր սոցիալական

արժեք, քան բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համարժեք օգուտներին: Կշռված գնահատումները պետք է ներկայացվեն չկշռված գնահատումների հետ մեկտեղ՝ ցույց տալու համար կշռման գործընթացի ազդեցությունը:

Բաշխման կշիռների հիմքում ընկած է եկամտի նվազող սահմանային օգտակարության տնտեսական սկզբունքը, ըստ որի ցածր եկամուտ ստացողի համար լրացուցիչ 1 դրամ եկամտի արժեքն ավելի բարձր է, քան բարձր եկամուտ ստացողի համար: Օրինակ՝ ամսական 100 000 դրամ վաստակող անձի ստացած լրացուցիչ 1 դրամն ավելի շատ կարժենա, քան ամսական 200 000 դրամ վաստակողինը: Եկամտի սահմանային օգտակարության առավել բարձր արժեքը կնշանակի, որ լրացուցիչ դրամի արժեքն ավելի արագ կնվազի եկամտի աճի համեմատ:

Այսպիսով, բաշխման կշիռների միջոցով ավելացվում են ցածր եկամուտ ունեցող խմբերի օգուտների կամ ծախսերի արժեքները: Բաշխման կշիռները կարող են օգտագործվել որպես բաշխման վերլուծության մաս:

Բաշխման կշիռները կարող են հաշվարկվել հետևյալ կերպ.

$$d_i = \left( \frac{\bar{Y}}{Y_i} \right)^n$$

որտեղ  $d_i$  -ն բաշխման կշիռն է դրամական եկամուտների տվյալ խմբի համար,  $\bar{Y}$ -ն բոլոր քաղաքացիների միջին եկամուտն է,  $Y_i$ -ն  $i$  դրամական եկամուտների տվյալ խմբի միջին եկամուտն է, իսկ  $n$ -ը եկամտի սահմանային օգտակարության առաձգականությունն է եկամտի աճի նկատմամբ:

#### Օրինակ 12. Բաշխման կշիռների հաշվարկման օրինակ

Ենթադրենք, որ տվյալ անձի ամսական դրամական եկամուտը կազմում է 50 000 դրամ, իսկ Հայաստանի Հանրապետությունում մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտը 70



000 դրամ է, այդ դեպքում տվյալ եկամուտ ունեցող անձի համար բաշխման կշիռը՝  $d_i =$

$$\left(\frac{70000}{50000}\right)^n = 1.4^n:$$

Այսպիսով, եթե օրինակ  $n=0.8$ , ապա 50 000 դրամ եկամուտ ունեցող անձի համար օգուտները/վնասները պետք է կշռել  $1.4^{0.8} = 1.3$  գործակցով:

Կամ, եթե տվյալ անձի ամսական դրամական եկամուտը կազմում է 200 000 դրամ, ապա՝ տվյալ եկամուտ ունեցող անձի համար բաշխման կշիռը՝  $d_i = \left(\frac{70000}{200000}\right)^n = 0.35^n$ :

Հետևաբար, եթե կրկին ենթադրենք, որ  $n = 0.8$ , ապա 200 000 դրամ եկամուտ ունեցող անձի համար օգուտները/վնասները պետք է կշռել  $0.35^{0.8} = 0.43$  գործակցով:

Բաշխման կշիռների որոշումից հետո անհրաժեշտ է յուրաքանչյուր խմբի համար տարբերակից բխող օգուտը կամ կորուստը (ծախսը) բազմապատկել այդ կշիռներով: Ստացվում են կշռված օգուտներ կամ կորուստներ (ծախսեր)՝ ըստ խմբերի: Գումարելով այդ օգուտները և կորուստները (ծախսերը)՝ կարելի է ստանալ տարբերակի զուտ կշռված սոցիալական օգուտը: Կարգավորման տարբերակների համեմատման դեպքում ընտրում են ամենամեծ զուտ կշռված օգուտով տարբերակը:

### Օրինակ 13. Բաշխման կշիռների կիրառման օրինակ

Կառավարությունը ներկայացնում է առաջարկ՝ ամբողջ երկրում բնակչությանը վաճառվող բնական գազի գինը փոխհատուցելու վերաբերյալ: Ուղեկցող ԿԱԳ-ի գնահատմամբ՝ այդ կարգավորման շնորհիվ բնակչության կողմից գազի սպառման համար կատարվող վճարների ընդհանուր գումարը կնվազի 10%-ով: Սպառողների համար պահանջարկի գնային առաձգականության վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայության պարագայում գնահատումը միջինացված է բոլոր սպառողների համար:

ԿԱԳ-ն իրականացվում է գազի սպառման դիմաց վճարումները կրճատելու նպատակով: Ընտրություն է կատարվում մի քանի տարբերակների միջև, ընդ որում՝ բոլոր դեպքերում առաջարկի ընդհանուր նպատակներն են՝ (1) տնտեսական արդյունավետությունը և (2) եկամուտների բաշխման բարելավումը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է կարգավորման երեք տարբերակ (Ա, Բ և Գ) և դրանցից յուրաքանչյուրի հետ կապված օգուտները՝ ցածր և բարձր եկամուտներ ունեցող խմբերի համար:

**Օգուտներն ըստ կարգավորման տարբերակի**

Կարգավորման տարբերակ	Օգուտ՝ բարձր եկամուտ ունեցող խմբի համար (մլն. դրամ)	Օգուտ՝ ցածր եկամուտ ունեցող խմբի համար (մլն. դրամ)	Ընդհանուր օգուտ (մլն. դրամ)
Կարգավորման տարբերակ Ա	60	40	100
Կարգավորման տարբերակ Բ	50	30	80
Կարգավորման տարբերակ Գ	20	80	100

Կարգավորման յուրաքանչյուր տարբերակ տարբեր կերպ է ազդում եկամտի բաշխման վրա: Հաջորդ քայլով ԿԱԳ-ը փորձում է եկամուտների բաշխումը ներառել բաշխման վերլուծության մեջ: Ենթադրելով, որ կարգավորման տարբերակների ծախսերը նույն մակարդակի են, կարգավորման Բ տարբերակը չի ընտրվի, քանի որ առաջին նպատակը (այսինքն՝ տնտեսական արդյունավետության բարձրացումը) չի կատարվել: Այնուհետև, տարբերակ Ա-ի և տարբերակ Գ-ի միջև ընտրություն կատարելու համար ներմուծվում են բաշխման կշիռները: Ենթադրենք, որ ավելի ցածր եկամուտ ունեցող խմբի կողմից

ստացված յուրաքանչյուր հավելյալ դրամի զուտ օգուտի կշիռը երեք անգամ ավելին է, քան բարձր եկամուտ ունեցող խմբի կողմից ստացված յուրաքանչյուր հավելյալ մեկ դրամի զուտ օգուտը:

**Բաշխիչ կշիռներ**

<b>Բաշխիչ կշիռ՝ բարձր եկամուտ ունեցող խումբ</b>	<b>Բաշխիչ կշիռ՝ ցածր եկամուտ ունեցող խումբ</b>
<b>1</b>	<b>3</b>

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս կշռված օգուտները բարձր և ցածր եկամուտ ունեցող խմբերի համար:

**Բարձր և ցածր եկամուտ ունեցող խմբերի կշռված օգուտներ**

<b>Կարգավորման տարբերակ</b>	<b>Բարձր եկամուտ ունեցող խմբի կշռված օգուտ (մլն. դրամ)</b>	<b>Ցածր եկամուտ ունեցող խմբի կշռված օգուտ (մլն. դրամ)</b>	<b>Ընդհանուր կշռված օգուտ (մլն. դրամ)</b>
<b>Կարգավորման տարբերակ Ա</b>	<b>60 * 1</b>	<b>40 * 3</b>	<b>180</b>
<b>Կարգավորման տարբերակ Բ</b>	<b>50 * 1</b>	<b>30 * 3</b>	<b>140</b>
<b>Կարգավորման տարբերակ Գ</b>	<b>20 * 1</b>	<b>80 * 3</b>	<b>260</b>

Այսպիսով, նախընտրելի է կարգավորման Գ տարբերակը, քանի որ մյուս տարբերակների համեմատությամբ ունի առավել բարձր ընդհանուր կշռված օգուտներ:

Ազդեցությունների բաշխման վերլուծություն կարող է անհրաժեշտ լինել տարածաշրջանային բաշխման էֆեկտ ունեցող միջամտությունների համար (օրինակ՝ բարեկեցության վերաբաշխում Հայաստանի տարբեր մասերի միջև), որոնք առնչվում են մեկ կամ մի քանի տեսակի աշխարհագրական տարածքների (օրինակ՝ գյուղական վայրեր, սահմանամերձ գյուղեր) կամ մեկ կամ մի քանի աշխարհագրական տարածքի (օրինակ՝ կոնկրետ գյուղ, կոնկրետ քաղաք):

Եթե ակնկալվում է, որ կարգավորիչ միջամտության արդյունքում ազդեցությունները կարող են տարբերվել ըստ տարածաշրջանների, ապա ազդեցությունների ընդհանուր հաշվարկին զուգահեռ ներկայացվում են նաև տարածաշրջանային բաշխման կշիռների վերաբերյալ արդյունքները, ինչը թույլ է տալիս հստակորեն ներկայացնել տարածաշրջանային ազդեցությունները:

## 2. Սոցիալական ազդեցություններ, որոնք հնարավոր չէ գնահատել քանակական կամ դրամական եղանակով

ԿԱԳ-ում սոցիալական ազդեցությունների գնահատումների մեծ մասը կարող են որակական լինել: Քանակական տվյալների բացակայությունն ընդհանուր առմամբ կարելի է փոխհատուցել պարզ հետազոտական աշխատանքի միջոցով: Միևնույն ժամանակ, հետազոտական աշխատանքը կարող է ավելի շատ ժամանակ և ռեսուրսներ պահանջել, քան հասանելի է ԿԱԳ գործընթացի համար: Սոցիալական ազդեցությունների թվում են մի շարք մարդկային կարևոր արժեքներ, ինչպիսիք են արժանապատվությունը, արդարությունը և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Չափազանց դժվար է քանակականացնել, թե ինչպես են կապված նման արժեքների փոփոխությունները և կարգավորման տարբերակը: Լավագույն դեպքում հնարավոր է հաշվել ազդակիր մարդկանց քանակը:

Որակական մոտեցումը թույլ է տալիս ճշգրիտ պատկերացում կազմել սոցիալական ազդեցությունների մասին՝ անկախ քանակական տվյալների առկայությունից: Կարգավորման յուրաքանչյուր տարբերակ կարող է տարբեր ազդեցություն ունենալ տվյալ սոցիալական խմբի վրա՝ անդրադառնալով նրանց եկամուտների կամ կյանքի որակի վրա: Սոցիալական ազդեցությունների որակական գնահատման ժամանակ, ազդեցության ենթակա սոցիալական խմբերը վերհանելուց հետո, ԿԱԳ-ը պետք է ներկայացնի ազդեցության ուղղությունը: Օրինակ՝ արդյունքները կարող են մատնանշել աղքատության մակարդակի աճ կամ հասարակական կյանքում մարդկանց լիարժեք մասնակցության հնարավորությունների վրա բացասական ազդեցություն: Ազդեցության ենթարկվող բնակչության խմբերի սկզբնական վերհանման և ազդեցության ուղղության (դրական կամ բացասական) որոշման համար կարող են օգտագործվել սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության վերաբերյալ հարցերը: Սոցիալական ազդեցությունների գնահատումը, որը հնարավոր չէ անցկացնել քանակական կամ դրամային եղանակով, կարելի է անցկացնել խնդրի ծառի, կարգավորման տարբերակների տրամաբանության վրա հիմնված համեմատությունների և ոչ քանակական ազդեցությունների աղյուսակների միջոցով:

### 3. Սոցիալական ազդեցությունների գնահատում

Այս բաժնում ներկայացվում է տեղեկատվություն սոցիալական ազդեցությունների գնահատման վերաբերյալ, մասնավորապես՝

- 1) կենսաթոշակային ապահովություն և ժամանակավոր անաշխատունակություն,

- 2) երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանություն,
- 3) ընտանիքի և կանանց իրավունքների արդյունավետ պաշտպանություն,
- 4) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն և սոցիալական աջակցության երաշխիքներ,
- 5) տարեցների համար սոցիալական աջակցության երաշխիքներ,
- 6) զբաղվածություն, աշխատանքային հարաբերություններ և աշխատավարձ,
- 7) առանցքային ժողովրդագրական խնդիրներ,
- 8) կյանքի որակի բարելավում,
- 9) սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխում:

**Աղյուսակ 6.**

***Սոցիալական ազդեցությունների գնահատման հարցադրումներ՝ ըստ ազդեցության նշանակալիության որոշման յուրաքանչյուր չափորոշիչի***

	Նշանակալիության որոշման չափորոշիչներ	Հիմնական հարցադրումներ
1.	Ազդեցություններ կենսաթոշակային ապահովություն և	1) արդյո՞ք կփոփոխվի հիմնական կենսաթոշակի չափը 2) արդյո՞ք կփոփոխվի աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը կամ ժամանակավոր

	<p><b>ժամանակավոր անաշխատունակության վրա</b></p>	<p>անաշխատունակության դեպքում նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի նվազագույն շեմը</p>
		<p>3) արդյո՞ք կփոփոխվի նվազագույն կենսաթոշակի և նվազագույն աշխատավարձի չափերի հարաբերությունը</p>
		<p>4) արդյո՞ք կփոփոխվի նվազագույն կենսաթոշակի և աղքատության վերին գծի դրամական չափի հարաբերությունը</p>
		<p>5) արդյո՞ք կփոփոխվի նվազագույն կենսաթոշակի և աղքատության ստորին գծի դրամական չափի հարաբերությունը</p>
		<p>6) արդյո՞ք կփոփոխվի կենսաթոշակառուների թվի և եկամտային հարկ վճարողների թվի հարաբերությունը</p>
<p>2.</p>	<p><b>Ազդեցություններ երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրացման վրա</b></p>	<p>1) արդյո՞ք կբարելավվի երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը</p> <p>2) արդյո՞ք կապահովվեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական երաշխիքները</p> <p>3) արդյո՞ք կապահովվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական երաշխիքները</p> <p>4) արդյո՞ք կապահովվի երեխաների կրթական իրավունքների իրացումը</p> <p>5) արդյո՞ք կապահովվի երեխաների առողջապահական ծառայությունների մատչելիությունը</p> <p>6) արդյո՞ք կապահովվի երեխաների առողջապահական ծառայությունների հասցեականությունը</p>

3.	<p>Ազդեցություններ ընտանիքի և կանանց իրավունքների պաշտպանության արդյունավետ իրացման վրա</p>	1) արդյո՞ք կկանխարգելվի մարդկանց թրաֆիքինգը և շահագործումը
		2) արդյո՞ք կնպաստի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի բացահայտմանը
		3) արդյո՞ք կկանխարգելվի գենդերային բռնությունը, ընտանիքում բռնությունը
		4) արդյո՞ք կնպաստի գենդերային բռնության, ընտանիքում բռնության դեպքերի բացահայտմանը
		5) արդյո՞ք կբարելավվի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին տրամադրվող աջակցությունը
		6) արդյո՞ք կբարելավվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրվող աջակցությունը
		7) արդյո՞ք կապահովվեն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքները (օրինակ, արդյո՞ք կփոխվի կանանց և տղամարդկանց միջև եկամուտների անհավասար բաշխման գործելակերպը կամ կանանց և տղամարդկանց միջև ժամանակի անհավասար օգտագործումը, արդյո՞ք կաճի կանանց զբաղվածության մակարդակը, արդյո՞ք կկրճատվի գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում և այլն:)
		8) արդյո՞ք կապահովվի ընտանիքների կարողությունների զարգացումը
		9) արդյո՞ք կապահովվեն երիտասարդ ընտանիքներին սոցիալական աջակցության երաշխիքները



4.	<p>Ազդեցություններ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական աջակցության երաշխիքների ապահովման վրա</p>	1) արդյո՞ք կպաշտպանվեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները
		2) արդյո՞ք կապահովվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունները, հավասար պայմանները և մատչելիությունը
		3) արդյո՞ք կբացառվի հաշմանդամության հիմքով խտրականությունը
		4) արդյո՞ք կապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը
		5) արդյո՞ք կբարելավվեն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-կենցաղային պայմանները
		6) արդյո՞ք կբարելավվեն հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սպասարկման ծառայությունները (տնային պայմաններում և խնամքի հաստատություններում)
		7) արդյո՞ք կապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականությունը և մատչելիությունը
5.	<p>Ազդեցություններ տարեցների սոցիալական աջակցության երաշխիքների ապահովման վրա</p>	1) արդյո՞ք կապահովվեն տարեցների համար հավասար հնարավորությունները և հավասար պայմանները
		2) արդյո՞ք կբարելավվեն տարեց անձանց սոցիալական ներառման հնարավորությունները
		3) արդյո՞ք կբարելավվեն տարեցների սոցիալ-կենցաղային պայմանները

		4) արդյո՞ք կբարելավվեն տարեցների խնամքի և սպասարկման ծառայությունները (տնային պայմաններում և խնամքի հաստատություններում)
		5) արդյո՞ք կապահովվի տարեցներին մատուցվող ծառայությունների մատչելիությունը
6.	Ազդեցություններ զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների և աշխատավարձի վրա	1) արդյո՞ք կփոփոխվի գործազուրկների թիվը
		2) արդյո՞ք կփոփոխվի զբաղվածների թիվը
		3) արդյո՞ք կփոփոխվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման իրավական մեխանիզմները
		4) արդյո՞ք կփոփոխվի նվազագույն աշխատավարձի փաստացի մակարդակը
		5) արդյո՞ք կփոփոխվի միջին ամսական անվանական աշխատավարձը
		6) արդյո՞ք աշխատողների համար կապահովվեն սոցիալ-աշխատանքային երաշխիքները
		7) արդյո՞ք կզարգանա և կխորանա սոցիալական գործընկերությունը
		8) արդյո՞ք կզարգանա մասնագիտական կողմնորոշման համակարգը
7.	Ազդեցություններ ժողովրդագրության հիմնախնդիրների վրա	1) արդյո՞ք կփոփոխվի բնակչության թվաքանակը
		2) արդյո՞ք կփոփոխվի բնակչության միգրացիան
		3) արդյո՞ք կփոփոխվի բնակչության ռեմիգրացիան
		4) արդյո՞ք կմեղմվեն ՀՀ մարզերում և Երևան քաղաքում բնակչության բաշխման անհամամասնությունները

		5) արդյո՞ք կմեղմվեն գյուղական և քաղաքային համայնքներում բնակչության բաշխման անհամամասնությունները
		6) արդյո՞ք կխրախուսվի ծնելիությունը
		7) արդյո՞ք կփոփոխվի մահացության թիվը
		8) արդյո՞ք կփոփոխվի ամուսնությունների թիվը
		9) արդյո՞ք կփոփոխվի ամուսնալուծությունների թիվը
		10) արդյո՞ք կփոփոխվի կյանքի միջին տևողությունը
8.	Ազդեցություններ կյանքի որակի բարելավման վրա	1) արդյո՞ք կապահովվեն բնակչության կրթական իրավունքի իրացման երաշխիքները
		2) արդյո՞ք կապահովվեն բնակչության աշխատանքային իրավունքի իրացման երաշխիքները
		3) արդյո՞ք կապահովվեն բնակչության առողջապահական ծառայություններ ստանալու իրավունքի իրացման երաշխիքները
		4) արդյո՞ք կփոփոխվի նպաստառու ընտանիքների (նպաստառուների) թիվը
		5) արդյո՞ք կփոփոխվի աղքատության մակարդակը
		6) արդյո՞ք կփոփոխվի նպաստի հասցեականությունը
		7) արդյո՞ք կփոփոխվի նպաստների նշանակման և վճարման ընթացակարգերի մատչելիությունը
		8) արդյո՞ք կապահովվի բնակչության համար մշակութային ծառայությունների հասանելիությունը
		9) արդյո՞ք կապահովվեն և/կամ կբարելավվեն սոցիալական խոցելի խմբերի բնակարանային պայմանները

		10) արդյո՞ք կբարելավվի սոցիալական խոցելի խմբերի սոցիալական աջակցության իրավունքի իրացումը
		11) արդյո՞ք կապահովվի ենթակառուցվածքների մատչելիություն և բարելավում
9.	Ազդեցություններ սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների վրա	1) արդյո՞ք կապահովվի ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման համակարգի կառավարումը
		2) արդյո՞ք կապահովվի ծառայությունների տրամադրման ընթացակարգերի, մեխանիզմների բարելավումը, հեշտացումը, թափանցիկությունը
		3) արդյո՞ք կապահովվի ծառայությունների մասին հանրային իրազեկումը և հաշվետվողականությունը
		4) արդյո՞ք կբարելավվի սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական դերակատարների միջև համագործակցությունը
		5) արդյո՞ք կապահովվի ծառայությունների և դրանցից օգտվող թիրախային խմբերի ներառման կրկնման/վերաձածկերի բացառումը
		6) արդյո՞ք կապահովվի քաղաքացիների կենսագործունեության ակտիվացման խթանումը
		7) արդյո՞ք կուժեղանա համայնքներում սոցիալական աշխատողի ինստիտուտի դերը

**1) Կենսաթոշակային ապահովություն և ժամանակավոր անաշխատունակություն**

Կենսաթոշակի գումարի փոփոխության (այսինքն՝ կենսաթոշակային եկամուտ ստանալը կամ կորցնելը) արժեքը ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար ավելի

բարձր է, քան բարձր եկամուտ ունեցող մարդկանց: Այդ օրինաչափությունը ԿԱԳ-ում հնարավոր է հաշվի առնել բաշխման կշիռների կիրառման միջոցով, որտեղ ավելի ցածր եկամուտ ունեցող խմբերի համար դրամական արդյունքները կշռվում են ավելի բարձր, քան ավելի բարձր եկամուտ ունեցող խմբերի դեպքում: Արդյունքում՝ սոցիալական ազդեցությունների գնահատման մեջ (օրինակ՝ զբաղվածության ծրագրերի) ավելի մեծ կշիռ է տրվում ծրագրի մասնակիցների դրամական եկամուտներին՝ համեմատած ծրագրերը ֆինանսավորող հարկատուների ծախսերի հետ: Որպես կանոն, հետազոտական տվյալների բացակայության դեպքում ընդունվում է, որ ծրագրի մասնակիցների բարեկեցության կշիռը կազմում է մոտ 2-3՝ միջին հարկատուի համեմատ: Այս կշիռը կիրառվում է զբաղվածության ծրագրի արդյունքում մասնակիցների կողմից կենսաթոշակային եկամուտների ցանկացած ավելացման կամ կորստի նկատմամբ: Նույն կշիռները կարող են կիրառվել ժամանակավոր անաշխատունակության հետ կապված վճարումների նկատմամբ:

## 2) Երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացում

ԿԱԳ-երը օգտակար են հասկանալու կարգավորումների ազդեցությունը փոքրամասնությունների տարբեր խմբերի՝ ներառյալ երեխաների, և նրանց իրավունքների պաշտպանության վրա: Երեխաների իրավունքները պահանջում են հատուկ պաշտպանություն և այդ իրավունքները երաշխավորելու համար անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ, հաճախ՝ կարգավորումների տեսքով: Կարգավորման որոշ տարբերակներ այնպիսի ոլորտներում, ինչպիսին է օրինակ ընտանեկան իրավունքը, կարող են ակնհայտ ազդեցություն ունենալ երեխաների վրա, որը պետք է գնահատվի ԿԱԳ շրջանակներում: Այլ ոլորտներում կարգավորումները կարող են անուղղակի ազդեցություններ ունենալ երեխաների վրա, և իրականացվող ԿԱԳ-ում դրանք ևս պետք է բացահայտվեն:

ԿԱԳ շրջանակներում տրվող հարցերը ներկայացված են ստորև.

ա. Ո՞ր երեխաները կամ երեխաների խմբերը կհանդիսանան տարբերակի ազդակիրներ:

բ. Ի՞նչ ուղղակի կամ անուղղակի, դրական կամ բացասական ազդեցություն կունենա կամ կարող է ունենալ տարբերակը երեխաների և երիտասարդների իրավունքների վրա:

գ. Արդյո՞ք տարբերակն ավելի շատ կազդի երեխաների և երիտասարդների որևէ մի խմբի, քան մեկ այլ խմբի իրավունքների վրա:

Կարգավորման տարբերակի ազդեցությունը երեխաների և երիտասարդների վրա գնահատելիս կարևոր է ուսումնասիրել ազդեցությունը մինչև 18 տարեկանների ամբողջ խմբի վրա, սակայն ոչ պակաս կարևոր է նաև ուսումնասիրել, թե արդյոք տարբերակը տարբեր կերպ է ազդում երեխաների որոշակի խմբերի վրա:

Երեխաները միատարր խումբ չեն: Հետևաբար պետք է հաշվի առնել, թե արդյոք տարբերակի հնարավոր ազդակիր երեխաները բացարձակապես կամ գերակշռորեն՝

ա. տարբեր, թե նույն տարիքի են,

բ. աղջիկներ են, թե տղաներ,

գ. ունեն տարբեր ռասայական, էթնիկ կամ մշակութային ծագում,

դ. ունեն տարբեր սոցիալ-տնտեսական ծագում,

ե. ապրում են տնից հեռու, օրինակ՝ մանկատանը կամ խնամատար ընտանիքում,

զ. ունեն հատուկ կարիքներ:

Այն դեպքում, երբ կարգավորման տարբերակը կարող է բացասական ազդեցություն ունենալ երեխաների և երիտասարդների իրավունքների վրա, ԿԱԳ-ում

դիտարկվում է, թե արդյոք այդ ազդեցությունն արդարացված է՝ ելնելով սահմանված նպատակներից: Հնարավոր է առաջարկել փոխհատուցման միջոցներ, որոնք թույլ կտան չեզոքացնել կամ մեղմել բացասական ազդեցությունները: Պետք է քննարկել, թե արդյոք հնարավոր է նպատակին հասնելու համար ձեռնարկել այլընտրանքային միջոցներ, որոնք երեխաների վրա բացասական ազդեցություն չեն ունենա կամ առավել կնպաստեն երեխաների իրավունքներին: Հնարավոր է նույնիսկ, որ «ոչինչ չանելու» տարբերակի դեպքում երեխաների իրավունքներն ավելի լավ պաշտպանված կլինեն, և, հետևաբար, պետք է հաշվի առնել, թե արդյոք այդ մոտեցումը նախընտրելի կլինի:

### 3) Ընտանիքի և կանանց իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացում

Գենդերային քաղաքականությանն առնչվող կարգավորման տարբերակներն ազդում են կանանց և տղամարդկանց կենսապայմանների և նրանց համար ռեսուրսների հասանելիության վրա: Այդ ազդեցությունը հաճախ կոչվում է «գենդերային ազդեցություն»: ԿԱԳ-ում կարգավորման տարբերակի գենդերային ազդեցության գնահատումը ներառում է վերլուծություն՝ կանանց և տղամարդկանց արդյունավետ հավասարության վրա կարգավորիչ միջամտության հնարավոր ազդեցությունը որոշելու նպատակով: Ըստ էության, գենդերային հարցերով ԿԱԳ-ի ուսումնասիրությունն իրականացվում է երկու փուլով:

Նախ, անհրաժեշտ է ուսումնասիրել առկա գենդերային իրավիճակը՝ առանց պետական կարգավորիչ միջամտության: Առկա գենդերային իրավիճակը վերլուծելու համար լավ մեկնարկային կետ են հանդիսանում գենդերային տարաբաժանված վիճակագրական տվյալները: Միաժամանակ կարող են դիտարկվել վիճակագրական

ծառայության կողմից տրամադրվող կամ հետազոտական նյութերում և ոլորտային քաղաքականությունների վերաբերյալ հաշվետվություններում առկա քանակական տվյալները, ինչպես նաև ուսումնասիրությունների կամ հանրային քննարկումների ընթացքում ձեռք բերված որակական տեղեկատվությունը: Վերոնշյալ քանակական տվյալները և որակական տեղեկատվությունը լրացնում են միմյանց՝ հնարավորություն ընձեռելով իրականացնել առավել արդյունավետ վերլուծություն:

Երկրորդ, վերլուծությունը պետք է հնարավորինս ճշգրիտ գնահատի առկա իրավիճակի վրա առաջարկվող կարգավորման ակնկալվող ազդեցությունը: Դա ներառում է հնարավոր գենդերային անհավասարությունների բացահայտումը՝

- 1) ռեսուրսների հասանելիություն (աշխատանք, փող, իշխանություն, առողջապահություն, բարեկեցություն, անվտանգություն, գիտելիք-կրթություն, շարժունակություն, ժամանակ և այլն),
- 2) իրավունքների իրացում (քաղաքացիական, սոցիալական և քաղաքական իրավունքներ)՝ ելնելով սեռից կամ տղամարդկանց և կանանց վերագրվող գենդերային դերերից: Կարգավորման տարբերակների գենդերային ազդեցությունների գնահատման համար կարող են մասնավորապես դիտարկվել հետևյալ հարցերը.

ա. Արդյո՞ք կարգավորման տարբերակը բավարարում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց կարիքները՝ հաշվի առնելով նրանց տարբեր շահերը, դերերը և դիրքերը:

բ. Ինչպե՞ս կարելի է առավել արդյունավետ նպաստել կանանց և տղամարդկանց կարիքների բավարարմանը:



գ. Արդյո՞ք կփոխվի կանանց և տղամարդկանց միջև եկամուտների անհավասար բաշխման գործելակերպը: Եթե այո, ապա ո՞ր ուղղությամբ են ընթանալու փոփոխությունները:

դ. Արդյո՞ք կփոխվի կանանց և տղամարդկանց միջև ժամանակի անհավասար բաշխումը: Եթե այո, ապա ո՞ր ուղղությամբ են ընթանալու փոփոխությունները:

ե. Արդյո՞ք կաճի՞ կանանց զբաղվածության մակարդակը: Եթե այո, ապա ո՞ր ուղղությամբ են ընթանալու փոփոխությունները:

զ. Արդյո՞ք կկրճատվի՞ գենդերային անհավասարությունը աշխատաշուկայում: Եթե այո, ապա ո՞ր ուղղությամբ են ընթանալու փոփոխությունները:

#### 4) Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն և սոցիալական աջակցության երաշխիքներ

ԿԱԳ-ում գնահատվում է, թե արդյոք կարգավորման տարբերակի ներքո որևէ դժվարության կամ խոչընդոտի պարագայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և սոցիալական աջակցության տրամադրումը երաշխավորվում են, և, թե արդյոք դա հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում վերանայել տարբերակը կամ դրա իրականացման մոտեցումը, որպեսզի այն ավելի լավ բավարարի ազդակիր բնակչության կարիքները:

Այդ առումով հաշվի են առնվում հինգ հիմնական քայլերը:

1. Որոշել, թե արդյոք կարգավորման տարբերակն ազդեցություն կունենա հաշմանդամություն ունեցող անձանց վրա: Առաջարկվում է դա անել հետևյալ հարցերի միջոցով.

1) Անձանց առանձին խմբին ուղղված լինելու դեպքում, արդյո՞ք այդ խումբը կարող է ներառել հաշմանդամություն ունեցող անձանց:

2) Հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված լինելու դեպքում, արդյո՞ք դա կարող է տարբեր կերպ ազդել տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց վրա:

3) Արդյո՞ք դա կարող է ազդել թիրախային խմբից բացի այլ անձանց վրա: Արդյո՞ք այդ անձինք հաշմանդամություն ունեն:

2. Նկարագրել այն փաստերը/ապացույցները, որոնց վրա հիմնված է հաշմանդամություն ունեցող անձանց վրա հնարավոր ազդեցության գնահատումը: Այս քայլը ներառում է հաշմանդամության վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունների գնահատմանն առնչվող համապատասխան տվյալների և տեղեկատվության հավաքը և վերլուծությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել հնարավոր ազդեցությունները կառուցվածքի, բովանդակության և տեղեկատվության ներկայացման առումով:

3. Եթե կարգավորման տարբերակը կարող է ազդել հաշմանդամություն ունեցող անձանց վրա, անհրաժեշտ է ուրվագծել, թե այդ ազդեցությունն ինչպիսին կլինի: Մասնավորապես՝ համառոտ նշել, թե ինչպիսի ազդեցություններ կունենա կարգավորման տարբերակը՝ և՛ դրական, և՛ բացասական, ընդ որում պետք է հաշվի առնել, որ տարբեր ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական խնդիրներ ունեցող մարդիկ (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք) կարող են ազդեցության ենթարկվել տարբեր ձևերով: Պետք է հաշվի առնել, որ վերոնշյալ խնդիրներ ունեցող անձինք միատարր խումբ չեն հանդիսանում,

ավելին՝ նույն հաշմանդամություն ունեցող անձանց խմբում նույնպես կարող են տարբերություններ լինել: Օրինակ՝ կարիքները կարող են տարբեր լինել անվասայլակից օգտվող կանանց և տղամարդկանց, լսողության խնդիրներ ունեցող տարեց և երիտասարդ տղամարդկանց, մտավոր հաշմանդամությամբ տղամարդկանց և կանանց, հաշմանդամություն ձեռք բերած միգրանտ աշխատողների մոտ և այլն:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց վրա հնարավոր բացասական ազդեցության դեպքում անհրաժեշտ է նկարագրել, թե այն ինչպես պետք է մեղմել: Այս քայլով նախատեսվում է յուրաքանչյուր բացահայտված/վերհանված բացասական ազդեցության ուսումնասիրություն, ինչպես նաև տարբերակի փոփոխման ուղիների որոնում՝ փորձելով կարգավորման նպատակին հասնել այնպես, որ բացասական ազդեցությունները հաղթահարվեն: Նման այլընտրանքներ մշակելիս պետք է հաշվի առնել նաև այն ականա անցանկալի հետևանքները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ այլ անձանց վրա:

5. Անհրաժեշտ է նկարագրել հաշմանդամություն ունեցող անձանց վրա ազդեցությունը ժամանակի ընթացքում վերահսկելու համար ձեռնարկվող ցանկացած գործողություն: Հաշվի է առնվում նաև, թե արդյոք կարգավորումը ենթակա է մշտադիտարկման և կարող է արդյոք այն մշտադիտարկվել ավելի երկարաժամկետ ազդեցությունների առումով՝ միջազգային լավագույն փորձին համահունչ:

5) Տարեցների համար սոցիալական աջակցության երաշխիքներ

Սոցիալական աջակցության կարիք ունեցող տարեցներն ունեն առանձնահատուկ խնդիրներ, հետևաբար, նրանց մատուցվող սոցիալական և խնամքի ծառայությունները պետք է գտնվեն ԿԱԳ-ի ուշադրության կենտրոնում: Ընդ որում, կյանքի տևողության աճին զուգահեռ սոցիալական աջակցության կարիք ունեցող տարեցների թիվն աճում է: Կարիքների գնահատման և բժշկական ծառայությունների հասանելիության հետ կապված խնդիրները կարող են հանգեցնել խտրականության՝ տարեցներին առողջապահական և սոցիալական խնամքի միջոցների բաշխման հարցում, և ԿԱԳ-ը պետք է քայլեր ձեռնարկի՝ լուծելու այդ խնդիրը: Պետք է հիշել նաև, որ մարդիկ, այդ թվում՝ տարեցները, միմյանցից տարբերվում են: Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հինգ կարևոր հարցերը.

1. Արդյո՞ք առաջարկվող տարբերակը ազդեցություն կունենա տարեցների վրա: Առաջարկվում է այս խնդրին մոտենալ հետևյալ հարցադրումների միջոցով ա) եթե կարգավորումն ընդհանուր կիրառություն ունի, պետք է հաշվի առնել, որ այն ազդում է նաև տարեցների վրա, բ) եթե այն ուղղված է բնակչության առանձին խմբի, արդյո՞ք այդ խումբը կարող է ներառել նաև տարեց մարդկանց, գ) եթե այն ուղղված է տարեց մարդկանց, արդյո՞ք այն կարող է տարբեր ձևով ազդել նրանց վրա, դ) արդյո՞ք այն կարող է ազդել թիրախային խմբից բացի այլ մարդկանց վրա: Արդյո՞ք դա կարող են տարեցները լինել:

2. Նկարագրել այն փաստերը/ապացույցները, որոնց վրա հիմնված է տարեցների վրա հնարավոր ազդեցության գնահատումը: Այս քայլը ներառում է տարեց բնակչության վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունների գնահատմանն առնչվող համապատասխան տվյալների և տեղեկատվության հավաքը և վերլուծությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել հնարավոր ազդեցությունները կառուցվածքի, բովանդակության և տեղեկատվության ներկայացման առումով:

3. Եթե կարգավորման տարբերակը կարող է ազդել տարեց անձանց վրա, անհրաժեշտ է ուրվագծել, թե այդ ազդեցությունն ինչպիսին կլինի: Մասնավորապես՝ համառոտ նշել, թե ինչպիսի ազդեցություններ կունենա կարգավորման տարբերակը՝ և՛ դրական, և՛ բացասական, ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ տարեց մարդիկ կարող են ազդեցության ենթարկվել տարբեր ձևերով: Պետք է հաշվի առնել, որ տարեցները միատարր խումբ չեն հանդիսանում: Օրինակ՝ կարիքները կարող են տարբեր լինել անգործունակ տարեցների, հաղորդակցման դժվարություններ և/կամ զգայական խանգարումներ ունեցող տարեցների, երկարատև հոգեկան առողջական խնդիրներ, դեմենցիա ունեցող տարեցների մոտ:

4. Տարեցների վրա հնարավոր բացասական ազդեցության դեպքում նախանշվում է, թե ինչպես կարելի է մեղմել այն: Այս քայլով նախատեսվում է յուրաքանչյուր բացահայտված/վերհանված բացասական ազդեցության ուսումնասիրություն, ինչպես նաև տարբերակի փոփոխման ուղիների որոնում՝ փորձելով կարգավորման նպատակին հասնել այնպես, որ բացասական ազդեցությունները հաղթահարվեն: Նման այլընտրանքներ մշակելիս պետք է հաշվի առնել նաև այն ակամա անցանկալի հետևանքները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ այլ անձանց վրա:

5. Անհրաժեշտ է նկարագրել տարեց անձանց վրա ազդեցությունը ժամանակի ընթացքում վերահսկելու համար ձեռնարկվող ցանկացած գործողություն: Հաշվի է առնվում նաև, թե արդյոք կարգավորումը ենթակա է մշտադիտարկման և կարող է արդյոք այն մշտադիտարկվել ավելի երկարաժամկետ ազդեցությունների առումով՝ միջազգային լավագույն փորձին համահունչ: Հանրային քննարկումները առանցքային դեր կարող են խաղալ հետագա պլանավորման, իրականացման և դիտարկման փուլերում:

## 6) Զբաղվածություն, աշխատանքային հարաբերություններ և աշխատավարձ

Եթե կարգավորման տարբերակներն առնչվում են զբաղվածության ծրագրերին, ազդում են զբաղվածության մակարդակի վրա կամ առնչվում են նվազագույն աշխատավարձին, աշխատանքային իրավունքներին, ապա ԿԱԳ շրջանակներում պետք է գնահատել ազդեցությունը զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների և աշխատավարձի վրա:

ԿԱԳ-ը հաշվի է առնում զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների և աշխատավարձի հետ կապված բացասական և դրական սոցիալական ազդեցությունները:

Ծախսեր (բացասական ազդեցություններ)`

ա. հարկման միջոցով ծրագրերի ֆինանսավորման սոցիալական ծախսեր, և

բ. աշխատանքին առնչվող ծախսեր, օրինակ՝ երեխաների խնամքի և ճանապարհային ծախսեր:

Ինչ վերաբերում է աշխատանքին առնչվող ծախսերին, երբ գործազուրկ անձը աշխատանքի է անցնում, առաջանում են որոշակի անխուսափելի ծախսեր, որոնք նա պետք է կրի: Դրանք ներառում են աշխատանքի գնալու և աշխատանքից վերադառնալու ճանապարհային ծախսերը, ինչպես նաև միայնակ ծնողների կամ երկու աշխատող ծնող ունեցող ընտանիքների համար երեխայի խնամքի հնարավոր ծախսերը: Այս ծախսերը նվազեցնում են աշխատանքից իրական հասույթը: Դրանք պետք է հանվեն աշխատանքից ստացված եկամուտից:

Հարկերի միջոցով ծրագրերի ֆինանսավորման հետ կապված սոցիալական ծախսերը վերաբերում են այն հանգամանքին, որ եկամտային հարկը նվազեցնում է

մարդկանց զուտ աշխատավարձը: Հետևաբար, հարկման միջոցով զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների և աշխատավարձի բարելավման քաղաքականության տարբերակները կարող են հետևանքներ ունենալ բարեկեցության առումով, և ցանկալի է, որ այդ ազդեցությունը ներկայացվի ԿԱԳ-ում:

Օգուտներ (դրական ազդեցություններ)`

ա. առողջության բարելավում,

բ. հանցագործությունների թվի նվազում,

գ. տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն,

դ. արտադրության ծավալների աճի արժեք:

Զբաղվածությունը հանգեցնում է առողջական վիճակի բարելավման, և ԿԱԳ շրջանակներում նշվածը կարող են փաստել բժշկական ծառայություններից օգտվելու վերաբերյալ տվյալները: Միջոցների խնայողության մասին այդ տվյալները հնարավորության դեպքում ներառվում են ԿԱԳ-ում: Եկամուտների աճը նվազեցնում է հանցագործություն կատարելու հակվածությունը: Հետևաբար, աշխատանք գտնելու հարցում օժանդակությունը կնվազեցնի հանցավորության մակարդակը` մարդկանց եկամուտների ավելացման շնորհիվ: Հանցագործությունների թվի նվազեցման առումով դրական ազդեցությունների վերաբերյալ հաշվարկները կարող են ներառվել ԿԱԳ-ում: Ինչ վերաբերում է տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություններին, ապա պետական ծախսերի ազդեցությունը զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների և աշխատավարձերի վրա կարող է տարածվել տնտեսության այլ ոլորտների վրա` մուլտիպլիկատիվ ազդեցության միջոցով: Զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների և աշխատավարձերի բարելավմանն ուղղված կարգավորման տարբերակների իրականացման համար կատարված ծախսերը ցույց են տալիս, թե ինչպես կարող է աշխատանքը խթանել տնտեսության աճը պահանջարկի ավելացման միջոցով: Գործնականում շատ դժվար է քանակապես

գնահատել մուլտիպլիկատիվ ազդեցությունները, քանի դեռ տեղեկություններ չկան այլ շուկաներում ծախսերի կառուցվածքի վերաբերյալ, որոնք թույլ կտան որոշակի ճշգրտությամբ կանխատեսել ազդեցությունը տնտեսական աճի վրա: Արտադրության ծավալների աճի արժեքի առումով դա ցույց է տալիս, թե ինչպես աշխատողների կողմից արտադրված արտադրանքի արժեքը կարող է ավելի մեծ լինել, քան նրանց ստացած աշխատավարձը: Այս դեպքում զբաղվածության, աշխատանքային հարաբերությունների և աշխատավարձերի վրա դրական ազդեցությունների գնահատումները, որոնք հիմնված են բացառապես եկամուտների վրա, կթերագնահատեն աշխատանքի անցած մասնակիցների ընդհանուր տնտեսական օգուտները:

#### 7) Առանցքային ժողովրդագրական խնդիրներ

**Ժողովրդագրական ազդեցությունները, որոնք դիտարկվում են ԿԱԳ-ում՝**

**ա. տարիք,**

**բ. անաշխատունակություն,**

**գ. հղիություն և մայրություն,**

**դ. կրոն կամ հավատք:**

Տարբերակների ազդեցությունը ժողովրդագրական տարբեր խմբերի վրա գնահատելու համար ԿԱԳ-ում կարող է օգտագործվել բաշխման վերլուծությունը: Միջամտությունները կարող են տարբեր ազդեցություններ ունենալ անհատների վրա՝ ըստ վերջիններիս հատկանիշների: Կարևոր է դիտարկել այն հավանականությունը և չափը, թե որքանով են միջին ազդեցությունները տարբերվելու՝ ըստ ժողովրդագրական խմբերի՝ ներառյալ այն դեպքերը, երբ մի քանի բաշխման



գործոններ կարող են կիրառվել միասին: Կարգավորման տարբերակները պետք է հաշվի առնեն բաշխման անբարենպաստ ազդեցություններից խուսափելու կամ մեղմելու հնարավորությունը: Այն դեպքում, երբ բաշխման ազդեցությունները (օրինակ՝ եկամտի վրա) նշանակալի են, դրանք ենթակա են գնահատման: Դա կարող է արվել նկարագրական որակական մոտեցման կամ պարզ քանակական գնահատման միջոցով: Այն դեպքերում, երբ տվյալ խմբի համար ազդեցությունները նշանակալի են, ԿԱԳ-ում կատարվում է վերլուծություն՝ ներկայացնելով շահող և տուժող ժողովրդագրական խմբերը և գնահատելով դրանց վրա ազդեցությունները:

## 8) Կյանքի որակ

Կյանքի որակի վրա կարգավորման տարբերակների բացասական և դրական ազդեցությունները գնահատելը դյուրին չէ: Ի լրումն ազդեցությունների որակական գնահատականների, կան նաև այդ փոփոխությունների քանակական գնահատման ուղիներ՝ կյանքի որակի (ԿՈ/QoL) ցուցանիշների միջոցով: Եթե կարգավորման տարբերակն ազդում է հիմնականում բնակչության որևէ խմբի, օրինակ՝ շատ երիտասարդ կամ շատ տարեց մարդկանց վրա, ԿԱԳ-ի սոցիալական ազդեցությունների գնահատման ժամանակ պետք է կատարել լրացուցիչ վերլուծություն՝ հիմնվելով Որակով ճշգրտված կյանքի տարիների (ՈՃԿՏ) ակնկալվող արժեքի գնահատումների վրա: Երեխաներին կամ տարեցներին վերաբերող կարգավորման տարբերակները պետք է ներառեն ՈՃԿՏ:

ՈՃԿՏ-ները հաշվարկվում են ԿՈ-ի փոփոխությունը բազմապատկելով տևողությամբ (տարիներով), օրինակ՝ ԿՈ-ի կրճատումը 1-ից մինչև 0.5՝ 6 ամսվա ընթացքում հավասար է 0.25 կորստի:

$$\text{ՈՃԿՏ}_1 = 0.5 \text{ (այն է՝ 6 ամիս)} * 1 = 0.5$$

$$\text{ՈՃԿՏ}_2 = 0.5 (\text{այն է՝ } 6 \text{ ամիս}) * 0.5 = 0.25$$

$$\text{ՈՃԿՏ}_1 - \text{ՈՃԿՏ}_2 = 0.25$$

## 9) Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխում

Սոցիալական պաշտպանության համակարգի վրա ազդող կարգավորման տարբերակները պահանջում են համախմբված փաստերի և ապացույցների առկայություն: Դա պայմանավորված է նրանով, որ սոցիալական պաշտպանության նախկին համակարգը ճանաչվել է որպես մասնատված և թերֆինանսավորվող՝ նպաստների փոքր չափերով, սոցիալական ծրագրերի ու ծառայությունների սահմանափակ ծածկույթով, ընդ որում՝ սոցիալական աջակցությունը և նվազագույն եկամտի ապահովումը խոցելի խմբերի մեծ մասի համար արժանապատիվ կյանք չի ապահովել: Այս համատեքստում հիմնական մարտահրավերներն է սոցիալական պաշտպանության համակարգն առավել ներառական դարձնելը: Այս կարգի բարեփոխումների ազդեցության ցանկացած գնահատում, բացի պետական հատվածի ծախսերից, պետք է հաշվի առնի հետևյալը.

ա. համընդհանուր (օրինակ՝ սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսեր, զբաղվածության մակարդակ), այլ ոչ թե առանձին ուղղություններով (օրինակ՝ սոցիալական ներառում, կենսաթոշակներ) ազդեցությունները.

բ. կարգավորման նախընտրելի տարբերակի և սոցիալական համախմբվածության վերջնական արդյունքների միջև կապը.

գ. սոցիալական արդյունքների վրա ազդեցությունների համակցությունը (օրինակ՝ աղքատության ռիսկի ցուցանիշներ, այլ եկամուտ և կենսապայմաններ,

գործազրկության ցուցանիշներ, կրթական մակարդակ և այլն) և սոցիալական քաղաքականության միջամտությունների մասշտաբները (օրինակ՝ սոցիալական պաշտպանության ծախսերը և այլն) :

### ԳԼՈՒԽ 3

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Դրական և բացասական առողջապահական ազդեցություններ կարող են ունենալ տարբեր բնույթի օրենսդրական կարգավորումները, այդ թվում՝ առողջապահության ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմնի կողմից չնախաձեռնված կարգավորումները:

1. Առողջապահական ազդեցությունների քանակական վերլուծության և գնահատման մեթոդներ

ԿԱԳ-ում կարգավորման առաջարկվող տարբերակների առողջապահական ազդեցությունների գնահատման առաջնային նպատակը առողջապահական ազդեցությունների վերաբերյալ փաստերի վերլուծությունն է: Առողջապահական դրական և բացասական ազդեցությունները հաշվարկելու համար անհրաժեշտ է նախ գնահատել կարգավորման յուրաքանչյուր առաջարկվող տարբերակի հետ կապված առողջության վրա ազդեցության ռիսկի փոփոխությունը՝ ելակետային տարբերակի համեմատ (ռիսկի փոփոխությունը կարելի է գնահատել օրինակ, շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման՝ ազդեցության (պատճառահետևանքային) ուղիների վերլուծության մեթոդում կիրառվող շրջակա միջավայրի աղտոտիչների կոնցենտրացիաների փոփոխությունների գնահատման միջոցով), իսկ այնուհետև գնահատել դրա դրամական արժեքը:

Ըստ էության, կարգավորման յուրաքանչյուր առաջարկվող տարբերակի ցանկացած առողջապահական ազդեցության գնահատում կարող է արտահայտվել

որպես միջին վիճակագրական ազդակիր անհատի հիվանդացության կամ մահացության հավանականության փոփոխություն: Ազդեցության դրամական արժեքը կարող է հաշվարկվել որպես միջին վիճակագրական անհատի համար հիվանդացության կամ մահացության հավանականության փոփոխություն՝ բազմապատկած յուրաքանչյուր վիճակագրական դեպքի արժեքով և ամփոփված ազդակիր բնակչության թվաքանակի համար:

Գործնականում տեղեկատվությունն այն մասին, թե որքանով է ռիսկի նվազեցումը կամ յուրաքանչյուր վիճակագրական դեպքի արժեքը տարբերվում ըստ անհատների, սահմանափակ է: Ընդունված է կարգավորման առաջարկվող տարբերակի իրականացման արդյունքում կանխված վիճակագրական դեպքերի թիվը հաշվարկելու համար ազդակիր բնակչության շրջանում ռիսկի փոփոխությունների տվյալները համախմբել: Օրինակ՝ եթե քաղաքականության տարբերակը կնվազեցնի անհատական մակարդակով որոշակի հիվանդացության կամ մահացության ռիսկը 300 000 բնակչության շրջանում տարեկան 10/10 000-ով (10 000 դեպքի մեջ 10-ով), ապա ամեն տարի կկանխարգելվի 300 վիճակագրական դեպք: Հաշվարկը կատարվում է հետևյալ եղանակով.

$$\begin{aligned} \text{կանխված վիճակագրական դեպքեր} &= \text{տարեկան } 10/10\ 000 \text{ ռիսկի նվազում} * 300 \\ &000 \text{ անհատներ} = 300 \end{aligned}$$

Պետք է հիշել, որ կարգավորման ընտրված տարբերակի շնորհիվ վիճակագրական դեպքերի կանխումը, ըստ էության, հավանականություն է, այլ ոչ թե դեպքերի փաստացի կանխում:

Առողջապահական ազդեցությունների մասով ԿԱԳ-ի հիմնական խնդիրն է պարզել, թե ինչպես կարելի է լավագույնս գնահատել ռիսկերի փոփոխության

մեծությունը: Ելնելով հիվանդացության և մահացության համակցված ռիսկը գնահատելու համար անհրաժեշտ բարձրորակ, կիրառելի ուսումնասիրությունների բացակայությունից՝ խորհուրդ է տրվում առանձին-առանձին գնահատել վաղաժամ մահացության և հիվանդացության կանխարգելման վիճակագրական դեպքերի քանակները, այնուհետև դրամական արժեքները կիրառել յուրաքանչյուրի նկատմամբ առանձին ու հետո գումարել արդյունքները:

Առողջապահական ռիսկերի փոփոխության գնահատման հիմնական մեթոդները, այն է՝ Փրկված վիճակագրական կյանքի արժեքը, կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքը և Որակով ճշգրտված կյանքի տարիները, ներկայացված են ստորև:

#### 1) Փրկված վիճակագրական կյանքի արժեք/Value of a Saved Statistical Life

Փրկված վիճակագրական կյանքի արժեքը (ՓՎԿԱ) գնահատում է կյանքին սպառնացող ռիսկի փոփոխությունների արժեքը: ՓՎԿԱ-ն կարող է սահմանվել որպես առավելագույն գումար, որը ողջամիտ է, որպեսզի անհատը վճարի կյանքին սպառնացող ռիսկի նվազեցման համար, ինչն էլ մեկով կնվազեցնի բնակչության շրջանում կանխարգելելի վաղաժամ մահերի ակնկալվող թիվը: ՓՎԿԱ-ն հիմնված է անհատական մահացության ռիսկի փոքր կրճատումների համար վճարելու պատրաստակամության վրա, որոնք, ակնկալվում է, որ կկանխեն մահացության մեկ վիճակագրական դեպք (այսինքն՝ կփրկեն մեկ վիճակագրական կյանք) ազդակիր խմբի շրջանում: Ըստ էության, կանխարգելված մահացության օգուտները կարող են արտահայտվել ՓՎԿԱ-ի տեսքով, որը ներկայացնում է այն արժեքը, որը բնակչությունը պատրաստ է նախապես վճարել որևէ չնույնականացված անձի մահից խուսափելու համար: ՓՎԿԱ-ն հիմնված է այն գումարի վրա, որը յուրաքանչյուր անհատ պատրաստ է վճարել վաղաժամ մահացության ռիսկի որոշակի նվազեցման համար, օրինակ՝ օդի աղտոտվածության հետ կապված հիվանդություններից:

Մեկնակետը անհատական մակարդակում դիտարկումն է, որի հիման վրա հաշվարկվում է, թե անհատը որքան է պատրաստ վճարել ռիսկի որոշակի փոփոխության համար: Մահացության ռիսկի նվազեցման արժեքները արտացոլում են ռիսկի փոքր փոփոխությունների և գումար ծախսելու պատրաստակամության միջև կապը, որը կոչվում է «բարեկեցության և ռիսկի միջև փոխանակման սահմանային մակարդակ»: ՓՎԿԱ-ն կարող է ներկայացվել ՀՀ դրամով (կանխված մեկ մահացության դեպքի հաշվով) և հաշվարկվել՝ բաժանելով ռիսկի փոքր նվազեցման արժեքը ռիսկի փոփոխության չափի վրա:

#### Օրինակ 14. Անհատի համար ՓՎԿԱ-ի հաշվարկման օրինակ

Օրինակ՝ եթե անձը պատրաստ է վճարել 30 000 ՀՀ դրամ ընթացիկ տարում իր մահացության ռիսկը 10 000 դեպքի մեջ 1-ով նվազեցնելու համար, ապա հաշվարկը հետևյալն է.

$$\text{ՓՎԿԱ} = 30\ 000 \text{ ՀՀ դրամ} : 1/10,000 \text{ ռիսկի փոփոխություն} = 300\ 000\ 000 \text{ ՀՀ դրամ}$$

Այն, ինչը անհատը պատրաստ է վճարել ռիսկը 10 000-ի մեջ 1-ով նվազեցնելու համար (այսինքն՝ 30 000 ՀՀ դրամ) ՓՎԿԱ-ի որոշման առանցքային գործոնն է: ՓՎԿԱ-ն անհատի կյանքը երաշխավորված փրկելու արժեքը չէ, դա մահացության հավանականության նվազեցման արժեքն է:

Ռիսկի փոքր փոփոխությունների շրջանակ գնահատելու համար կարող է օգտագործվել մեկ միասնական ՓՎԿԱ: Եթե ռիսկի փոփոխությունը նվազում է 10 գործակցով՝ 1/10 000-ից մինչև 1/100 000, ապա ենթադրվում է, որ անհատի վճարելու պատրաստակամությունը նույնպես նվազում է 10 գործակցով: Արդյունքում ՓՎԿԱ-ն կրկին կկազմի 300 000 000 ՀՀ դրամ (= 3 000 ՀՀ դրամ ÷ 1/100 000 ռիսկի փոփոխություն), այսինքն՝ կմնա նույնը:

ԿԱԳ-ում ՓՎԿԱ-ն օգտագործվում է մահացության ռիսկերի փոքր փոփոխությունները գնահատելու համար, երբ մարդկանց անվտանգության ապահովման մակարդակները տարբերվում են ըստ կարգավորման տարբերակների: Դա ոչ թե կյանքի արժեքն է, այլ ռիսկի կամ վիճակագրական կյանքի կորստի հավանականության փոփոխության արժեքն է: Այն դեպքերում, երբ կարգավորման դիտարկվող տարբերակներն ընդգրկում են մահացության ռիսկի այլընտրանքային մակարդակներ, դա կարող է հաշվի առնվել ՓՎԿԱ-ի միջոցով: Այն հայտնի է որպես «վիճակագրորեն կանխված մահացության ռիսկի արժեք»:

ՓՎԿԱ-ի կիրառումը ԿԱԳ-ում ենթադրում է հետևյալ երեք քայլերը.

1. ԿԱԳ-ը գնահատում է տվյալ տարում մահացության դեպքերի ակնկալվող կանխարգելումը՝ բազմապատկելով ռիսկի միջին տարեկան կրճատումը կարգավորման ազդակիր մարդկանց թվով,
2. ՓՎԿԱ-ն (մեկ թիվ կամ միջակայք) կիրառվում է այդ տարում կանխված յուրաքանչյուր մահացության համար՝ տարեկան օգուտը գնահատելու համար,
3. տարեկան օգուտներն ամփոփվում են կարգավորման ամբողջ ժամանակահատվածի ներկա արժեքով՝ օգտագործելով դիսկոնտավորման դրույքաչափը (10%):

**Օրինակ 15. ՓՎԿԱ-ի կիրառման օրինակ Covid-19-ի հետևանքների մեղմմանն ուղղված կարգավորման ԿԱԳ-ի համար**

Ակնկալվում է, որ Covid-19-ի հետևանքների մեղմմանն ուղղված կարգավորումը թույլ կտա 2 մլն բնակչության շրջանում մահացության ռիսկը նվազեցնել 10 000-ի մեջ 1-ով՝ դրա դիմաց վճարելով 10 000 ՀՀ դրամ: Նման կարգավորման օգուտների լավագույն գնահատականը կազմում է 20 մլրդ ՀՀ դրամ ( $2 \text{ մլն մարդ} * 0.0001 * 10 \text{ 000 ՀՀ դրամ} : 0.0001$ ): Մահացության ռիսկը 10 000-ի մեջ 1-ով նվազեցնելու դիմաց 6 500 ՀՀ դրամից 25 000 ՀՀ դրամ վճարելու



պատրաստակամության դեպքում բնակչության շրջանում ընդհանուր օգուտի (ՓՎԿԱ-ների հանրագումարի) նվազագույն արժեքը կլինի 13 մլրդ ՀՀ դրամ, իսկ առավելագույն արժեքը՝ 50 մլրդ ՀՀ դրամ:

### Ինչպիսի՞ ՓՎԿԱ է կիրառելի Հայաստանի համար

Երկրներից շատերում բացակայում են արտահայտված նախապատվությունների վերաբերյալ արժանահավատ հետազոտություններ կամ աշխատաշուկայի ուսումնասիրություններ՝ բնակչության միջին ՓՎԿԱ սահմանելու համար:

ՏՀՁԿ հետազոտությունից հետևում է, որ ՓՎԿԱ-ն գնահատող նշանակալի ուսումնասիրություններ Հայաստանում չեն իրականացվել<sup>6</sup>: Միևնույն ժամանակ, եկամտով ճշգրտված ՓՎԿԱ-ի միջազգային գնահատումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ՓՎԿԱ-ն կազմում է 668 000 ԱՄՆ դոլար: Սակայն, բոլոր այն երկրների համար, որոնք օգտագործում են 1-ի հավասար եկամտի առաձգականության ցուցանիշ, ստացված ՓՎԿԱ գնահատումները շատ ավելի բարձր են քան ՏՀՁԿ-ի հետազոտությունում երկրների համար կիրառված վիճակագրական արժեքները: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարածաշրջանների և Համաշխարհային բանկի եկամտային խմբերի՝ բնակչության կշռված միջին ՓՎԿԱ-ն ցույց է տալիս, որ ցածր եկամուտ ունեցող երկրներում ՓՎԿԱ-ն կազմում է 41 756 ԱՄՆ դոլար, մինչդեռ միջին եկամուտ ունեցող երկրների ստորին խմբում այն կազմում է 324 325 ԱՄՆ դոլար:

Ընդհանուր առմամբ, ՓՎԿԱ-ն Հայաստանի համար կարող է հաշվարկվել՝ իրականացնելով արտահայտած նախապատվությունների նպատակային հարցումներ, որոնց հարցադրումների

<sup>6</sup> [https://www.oecd.org/env/tools-evaluation/mortalityriskvaluationinenvironmenthealthandtransportpolicies.htm#How to obtain this publication](https://www.oecd.org/env/tools-evaluation/mortalityriskvaluationinenvironmenthealthandtransportpolicies.htm#How_to_obtain_this_publication)

ներքո քաղաքացիները կատասխանեն, թե որքան գումար են պատրաստ ծախսել ընդհանուր մահացության ռիսկը մեղմելու համար:

Այդ նպատակով սովորաբար կիրառվում է մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) բազմապատկիչի եղանակը: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը սահմանում է միջամտությունը որպես (բարձր) ծախսարդյունավետ, եթե դրա արժեքն՝ ըստ մեկ տարվա փրկված կյանքերի, կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի արժեքի մինչև եռապատիկը՝ հիմնվելով տնտեսական արտադրողականության արժեքի, ինչպես նաև հանգստի ժամանակի լրացուցիչ արժեքի, շուկայական սպառման, երկարակեցության զուտ հետևանքների և հիվանդությանը վերագրվող ցավի ու տառապանքի արժեքի վերաբերյալ փորձագիտական համաձայնության վրա: Առողջապահության ոլորտի կարգավորման առաջարկվող տարբերակների արդյունավետությունը կարելի է համեմատել՝ հիմնվելով դրանց դրամական ծախսերի և փրկված կյանքերով արտահայտված օգուտների վրա: Հետազոտության եղանակից կախված՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի բազմապատկիչի գնահատականները ՓՎԿԱ-ի համար տատանվում են 3.5-ից մինչև 33.5<sup>7</sup>: Ըստ այս մոտեցման՝ 2020 թվականին մեկ շնչի հաշվով 4267.45 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ի դեպքում Հայաստանում ՓՎԿԱ-ն տատանվում է 150 000-ից մինչև 343 000 ԱՄՆ դոլարի սահմաններում:

Այսպիսով, Հայաստանի ՓՎԿ արժեքի հաշվարկի համար այլ երկրների ՓՎԿ արժեքի մոտարկման եղանակից կախված՝ վերջինիս միջակայքը տատանվում է 72 667 240-ից մինչև 323 586 608 ՀՀ դրամի սահմաններում<sup>8</sup>:

ՓՎԿԱ-ն օգտակար է, օրինակ, ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ կանխված մահացությունների արժեքը գնահատելու համար, որի ռիսկը բնակչության շրջանում մեծամասամբ նույնն է: Օգտակար է նաև այլ դեպքերում,

<sup>7</sup> <https://pophealthmetrics.biomedcentral.com/articles/10.1186/s12963-021-00275-y>

<sup>8</sup> Հաշվարկներում կրառվել է 03.04.2022 դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքի կուրսը՝ 484:

օրինակ՝ քաղցկեղի դեպքերի կրճատմանը, ախտորոշմանը և բուժմանն ուղղված կարգավորումների ԿԱԳ-երում, աշխատատեղերի և կենսամակարդակի վրա ազդեցությունների համատեքստում երկարաժամկետ հիվանդացության և մահացության դեպքերի վրա ազդող կարգավորումների ԿԱԳ-երում, ինչպես նաև երեխաների և երիտասարդների կրթության վրա ազդեցություն ունեցող կարգավորումների ԿԱԳ-երում:

**Օրինակ 16. ՓՎԿԱ-ի կիրառման օրինակ ճանապարհների բարեկարգման ներդրումային ծրագրի համար**

Ենթադրենք 100 000 բնակիչ ունեցող մի քաղաքում պետության կողմից նախատեսվում է իրականացնել ներդրումային ծրագիր, որը կբարելավի ճանապարհների անվտանգությունը: Հայտնի է, որ յուրաքանչյուր տարի այս քաղաքի ճանապարհներին 5 մարդ է մահանում, և ծրագրի իրականացման արդյունքում կանխատեսվում է, որ մահացությունների թիվը կնվազի 3-ով՝ 5-ից դառնալով 2: Այժմ ենթադրենք, որ այս քաղաքի յուրաքանչյուր բնակիչ պատրաստ է տարեկան վճարել 6 000 ՀՀ դրամ ծրագրի իրականացմամբ պայմանավորված մահացության դեպքերի կրճատման համար: Այսպիսով՝ ՓՎԿ-ի արժեքը կլինի 200 մլն ՀՀ դրամ (6 000 ՀՀ դրամ : 3/100 000), իսկ ծրագրի իրականացմամբ պայմանավորված ընդհանուր օգուտը կկազմի 600 մլն ՀՀ դրամ (200 000 000 ՀՀ դրամ \* 3):

Կյանքի վրա ազդեցության դրամական գնահատումների տրամադրումը, այլ ազդեցությունների հետ մեկտեղ, ԿԱԳ-ի ընթացքում հնարավորություն է տալիս ընտրել կարգավորման այն տարբերակը, որն ապահովում է առավելագույն օգուտ (կամ նվազագույն կորուստ): Օրինակ՝ որոշումն այն մասին, թե արդյոք երեխաները

պետք է վերադառնան դպրոց Covid-19 համաճարակի ժամանակ, կարող է կայացվել կրթություն ստանալու երեխաների օգուտների և Covid-19-ից ավելի շատ մարդկանց մահացության ռիսկի բարձրացման համեմատության հիման վրա (մահացության դեպքերի կանխարգելմամբ պայմանավորված օգուտներ՝ գնահատված ՓՎԿԱ-ի միջոցով):

### ՓՎԿԱ-ի գնահատման մանրամասն ցուցումներ

Այսպիսով, Հայաստանում մահացության ռիսկերի փոփոխություն պարունակող օրենսդրական նախաձեռնությունների ԿԱԳ-երում օգտագործման նպատակով կարելի է իրականացնել ՓՎԿԱ-ի գնահատում: ՓՎԿԱ-ի ցուցանիշների հաշվարկման համար գոյություն ունի երկու մեթոդաբանական մոտեցում՝

ա. մահացության ռիսկի և նման ռիսկերը նվազեցնելու համար վճարելու պատրաստակամության վերաբերյալ առաջնային ուսումնասիրությունների իրականացում,

բ. գոյություն ունեցող ուսումնասիրությունների հիման վրա ՓՎԿԱ-ով արտահայտված օգուտների մոտարկում:

Մահացության ռիսկի և նման ռիսկերը նվազեցնելու համար վճարելու պատրաստակամության վերաբերյալ առաջնային ուսումնասիրությունների իրականացումը զգալի ռեսուրսներ և ժամանակ պահանջող երկարատև գործընթաց է, որը ԿԱԳ-ի ընթացքում հազվադեպ դեպքերում է հնարավոր իրականացնել:

ՓՎԿԱ-ով արտահայտված օգուտների մոտարկման համար ԿԱԳ-ում անհրաժեշտ է. ա) առաջնային գնահատման ուսումնասիրությունների տվյալների բազայի առկայություն, բ) օգուտների մոտարկման համար մեթոդաբանական քայլերի կիրառում:

Առաջնային գնահատման ուսումնասիրությունների տվյալների բազաների առումով՝ դրանք պետք է պարունակեն բավականաչափ մանրամասներ՝ առաջնային ուսումնասիրությունների և կարգավորման միջև համապատասխանության վերաբերյալ դատողություններ անելու և մոտարկման միջոցով օգուտների գնահատման համար: Ամբողջ աշխարհում ՓՎԿԱ-ի ուսումնասիրությունների համար ՏՀԶԿ-ն առաջարկում է առաջնային գնահատման հետազոտությունների<sup>9</sup> հանրությանը հասանելի տվյալների բազա՝ օգուտների մոտարկման բոլոր եղանակների համար անհրաժեշտ մանրամասն տեղեկություններով:

Օգուտների մոտարկման մեթոդաբանական քայլերի կիրառման առնչությամբ՝ առաջ են քաշվում հետևյալ վեց քայլերը՝

1. ԿԱԳ-ում գնահատվելիք մահացության ռիսկի փոփոխության որոշում,
2. ազդակիր բնակչության նույնականացում (ըստ թվաքանակի և սոցիալ-տնտեսական բնութագրերի),
3. գրականության ուսումնասիրություն՝ համապատասխան առաջնային հետազոտությունները վեր հանելու համար,
4. ուսումնասիրություններում առկա անհրաժեշտ տվյալների ամփոփում՝ ըստ ուսումնասիրության ենթատեքստի,
5. ուսումնասիրություններում առկա տվյալների մոտարկում ԿԱԳ-ի համատեքստում,
6. ընդհանուր օգուտների կամ ծախսերի հաշվարկ:

---

<sup>9</sup> [www.oecd.org/env/policies/VSL](http://www.oecd.org/env/policies/VSL)

**1. ԿԱԳ-ում գնահատվելիք մահացության ռիսկի փոփոխության որոշում. առաջին քայլը բաղկացած է ռիսկի փոփոխության բնութագրերի, մեծության և ուղղության որոշումից:**

Նախ, կատարվում է մահացության ռիսկի տեսակի որոշում՝

ա. լատենտային շրջան (այսինքն՝ վտանգի նվազեցմանն ուղղված միջոցառման և ազդեցության միջև ընկած ժամանակահատվածը),

բ. ազդակիր բնակչության տարիքային խումբը,

գ. այլ ռիսկերը և բնակչության բնութագրերը,

Երկրորդ՝ ներկայացվում է մահացության ռիսկի ակնկալվող փոփոխությունը՝

ա. ելակետային մակարդակ (որից տեղի են ունենում փոփոխություններ),

բ. փոփոխության մեծությունը և ուղղությունը (օգուտ կամ վնաս):

**2. Ազդակիր բնակչության նույնականացում (ըստ թվաքանակի և սոցիալ-տնտեսական բնութագրերի). ՓՎԿԱ-ի մոտարկված օգուտը պետք է վերաբերի ազդակիր բնակչության նույն խմբին: Բնակչության բնութագրերը նույնպես պետք է լինեն նույնը, որպեսզի ապահովեն, որ նրանք ունենան նույն տեսակի և մակարդակի բարեկեցության չափորոշիչներ: Մահացության ռիսկերի առումով անհատների թիվը պետք է լինի համապատասխան աշխարհագրական մակարդակով (համայնքային, տարածքային/մարզային կամ ներպետական) ագրեգացված միավոր:**

**3. Գրականության ուսումնասիրություն՝ համապատասխան առաջնային հետազոտությունները վեր հանելու համար. նախընտրելի է, որ ուսումնասիրությունը**

հիմնված լինի տվյալների բազայի վրա: Ընդհանուր տվյալների բազաների թվում են EVRI (տե՛ս [www.evri.ca](http://www.evri.ca)) և ՓՎԿԱ-ի ուսումնասիրությունների ՏՀԶԿ տվյալների գլոբալ բազան (տե՛ս [www.oecd.org/env/policies/VSL](http://www.oecd.org/env/policies/VSL)):

*4. Ուսումնասիրություններում առկա անհրաժեշտ տվյալների ամփոփում՝ ըստ ուսումնասիրության ենթափեքստի. քայլ 3-ում դիտարկված ուսումնասիրությունները պետք է ապահովեն ցածր և բարձր գնահատականներ, որոնց հիման վրա կարող են սահմանվել մոտարկված գնահատման ստորին և վերին շեմերը: Հնարավորության դեպքում ներկայացվում են նաև միջին գնահատականի և ստանդարտ շեղման վերաբերյալ տվյալներ: Ուսումնասիրվում են նաև համապատասխան մետավերլուծությունները՝ պարզելու համար, թե արդյոք արժեքները բավականաչափ համահունչ են գնահատումների մոտարկման համար:*

*5. Ուսումնասիրությունների համափեքստից առկա տվյալների մոտարկում ԿԱԳ-ի համափեքստին. այն դեպքում, երբ ԿԱԳ-ը բոլոր առումներով շատ մոտ է ուսումնասիրության համատեքստին, կարող է օգտագործվել միավոր արժեքի մոտարկում: Մահացության ռիսկի փոփոխությունների համար մոտարկման առաջարկվող միավոր արժեքը ՓՎԿԱ-ն է: Կյանքի փրկված վիճակագրական տարիների արժեքը (տե՛ս ստորև ԿՓՎՏԱ-ի նկարագրությունը), որպես միավոր արժեք օգտագործելու դեպքում, այն պետք է հիմնված լինի առաջնային ուսումնասիրությունների վրա, որոնք ուղղակիորեն գնահատում են ԿՓՎՏԱ-ն: Որպես տարբեր երկրների ուսումնասիրությունների արդյունքների մոտարկման ամենապարզ և թափանցիկ եղանակ՝ առաջարկվում է (անհրաժեշտության դեպքում) եկամտի ճշգրտմամբ միավոր արժեքի մոտարկումը:*

6. *Ընդհանուր օգուտների հաշվարկ*. կարգավորման առաջարկվող տարբերակների ընդհանուր օգուտները գնահատելու համար մոտարկված ՓՎԿԱ-ի գնահատականը պետք է բազմապատկվի վերլուծված աշխարհագրական տարածքի մակարդակով (տեղական, տարածքային/մարզային, ներպետական) կանխված մահացությունների ակնկալվող թվով: Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$O_{տ} = n * \PhiՎԿԱ$$

որտեղ  $O_{տ}$ -ն տարեկան օգուտներն են,  $n$ -ն մահացությունների կրճատման ակնկալվող թիվն է, իսկ ՓՎԿԱ-ն կանխված մահացության դեպքերի արժեքն է, որը ստացվել է օգուտների մոտարկման եղանակի միջոցով:

Ճիշտ նույն տրամաբանությամբ ՓՎԿԱ-ն կարող է օգտագործվել նաև ծախսերի (մահացությունների ավելացման) գնահատման համար:

## 2) Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեք/Value of a Statistical Life-Year Saved

Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքը (ԿՓՎՏԱ) իրենից ներկայացնում է մահացության ռիսկի և այլ ծախսերի ու օգուտների միջև կապի տնտեսական չափորոշիչ՝ կարգավորման առաջարկվող տարբերակների համար: Այն ԿԱԳ-ի ընթացքում օգտագործվող՝ ռիսկերի նվազեցման գնահատման հիմնական միջոցներից է: Մարդկանց որոշակի խմբի համար ԿՓՎՏԱ-ն գնահատելիս նրանց ԿՓՎՏԱ-ի միջինացումն ապահովում է չափորոշիչ, որը կարող է օգտագործվել այդ խմբի առնչությամբ ԿԱԳ-ում՝ առանց կարգավորման յուրաքանչյուր առաջարկվող



տարբերակի համար դրա արժեքը բազմիցս գնահատելու անհրաժեշտության: Դիտարկվող խմբի միջին ԿՓՎՏԱ-ն կարևոր գործիք է ռիսկերի նվազեցման ծախս-օգուտ վերլուծության իրականացման համար:

ԿՓՎՏԱ-ն բխում է նույն էմպիրիկ փաստերից, ինչ ՓՎԿԱ-ն: ԿՓՎՏԱ-ները թույլ են տալիս գնահատել այն տարբերակները, որտեղ ռիսկի տակ գտնվող կյանքի սպասվող տևողության տարիների թիվը տարբերակից տարբերակ փոխվում է: Ազդեցությունների գնահատումը ԿՓՎՏԱ-ով այս տարբերությունը հաշվի առնելու միջոց է:

Մինչ ՓՎԿԱ-ն ցույց է տալիս, թե որքան գումար է անհատը պատրաստ վճարել ընթացիկ մահացության ռիսկի կրճատման համար (ընթացիկ տարվում կամ այլ կարճ ժամանակահատվածում), ԿՓՎՏԱ-ն ցույց է տալիս, թե որքան գումար է անհատը պատրաստ վճարել կյանքի սպասվող տևողության ավելացման համար: Սակայն ընթացիկ մահացության ռիսկի նվազեցումը, միևնույն ժամանակ, ենթադրում է կյանքի սպասվող տևողության համապատասխան աճ և, հետևաբար, կյանքի տարիների համապատասխան ավելացում:

ԿՓՎՏԱ-ի հաշվարկման նախընտրելի մեթոդը կյանքի տևողության աճի համար վճարելու պատրաստակամությունը գնահատող ուսումնասիրություններն են: Սակայն, քանի որ նման ուսումնասիրությունները շատ չեն, սովորաբար ԿՓՎՏԱ-ի հաշվարկը կատարվում է անմիջապես ՓՎԿԱ-ի գնահատականների հիման վրա: Եթե ԿՓՎՏԱ-ն հաշվարկվում է այս եղանակով, այն պետք է արտացոլի դիտարկվող բնակչության կյանքի մնացած միջին տարիները: ԿՓՎՏԱ-ի հաշվարկը կարող է ենթադրել, որ փրկված կյանքի սուբյեկտը չափահաս է, ում մնացել է 40 տարվա կյանք: ԿՓՎՏԱ-ն մեծություն է, որի գումարը 40 տարվա համար ունի ՓՎԿԱ-ին հավասար արժեք:

ԿՓՎՏԱ-ի մոտեցման համաձայն՝ մահացության ռիսկի նվազեցումը սովորաբար գնահատվում է՝ հաշվարկելով կյանքի տևողության համապատասխան աճը և այն

բազմապատկելով ԿՓՎՏԱ-ով: Թ՛ե ԿՓՎՏԱ-ն, և թ՛ե ՓՎԿԱ-ն տարբերվում են՝ կախված անհատի բնութագրերից և ռիսկից, և կարող են աճել, նվազել կամ մնալ նույնը՝ կախված ազդակիր անհատի տարիքից (և մնացած կյանքի սպասվող տևողությունից): Միևնույն ժամանակ, առաջնային հետազոտական ուսումնասիրություններում ԿՓՎՏԱ-ի ուղղակի գնահատում հազվադեպ կարելի է հանդիպել, և այն, սովորաբար, ստացվում է ՓՎԿԱ-ի գնահատականից՝ պարզ ենթադրությունների հիման վրա:

Երբ կարգավորման առաջարկվող տարբերակները տարբեր ազդեցություններ են թողնում կյանքի սպասվող տարիների վրա, դրանց գնահատումը ցանկալի է անցկացնել ՓՎԿԱ-ի փոխարեն ԿՓՎՏԱ-ների միջոցով՝ նշելով, որ կյանքի փրկված վիճակագրական տարիների արժեքը հաշվարկվել է ՓՎԿԱ-ի հաշվարկման համար օգտագործված մեթոդների կիրառմամբ (օրինակ՝ ԿՓՎՏԱ-ն կարող է անուղղակիորեն հաշվարկվել ՓՎԿԱ-ից):

#### Ինչպիսի՞ ԿՓՎՏԱ է կիրառելի Հայաստանի համար

Սկզբունքորեն, հնարավոր է կիրառել «ընդհանրացված» ԿՓՎՏԱ: Այն կլինի մի արժեք, որը հատուկ չէ որոշակի կոնկրետ կարգավորմանը կամ ռիսկի նվազեցմանը: Այսինքն՝ գնահատման տիրույթն (օրինակ՝ ճանապարհ, օդի աղտոտվածություն, սնունդ) ընտրված չի լինի:

Գործնականում, Մեծ Բրիտանիայի ներկայիս գնահատականը կազմում է 60 000 ֆունտ ստեռլինգ: Եվրոպական Միությունում ԿՓՎՏԱ-ն տատանվում է 50 000-ից մինչև 100 000 եվրո<sup>10</sup>:

<sup>10</sup> <https://www.oecd.org/env/tools-evaluation/49447312.pdf>

Եկամուտը ԿՓՎՏԱ-ի հիմնական որոշիչ գործոնն է: Հետևաբար, միջազգային արժեքների հիման վրա Հայաստանի համար ԿՓՎՏԱ-ն գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել եկամուտների տարբերություններն, ինչպես նաև մահացության ռիսկի նվազեցման համար վճարելու պատրաստակամության առաձգականությունն՝ ըստ եկամտի: Հայաստանի ԿՓՎՏԱ-ի հաշվարկը կարող է կատարվել (որոշակի տարվա համար Հայաստանի և ԿՓՎՏԱ-ի հաշվարկային առաջնային երկրի) մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) կիրառմամբ: Ըստ եկամտի ԿՓՎՏԱ-ի առաձգականության վերաբերյալ գրականության մեջ հետևողականություն չկա: Ուսումնասիրությունների մեծամասնությունը բարձր եկամուտ ունեցող երկրների համար գնահատում է առաձգականությունը 0.3-ից 0.8-ի միջակայքում և 1-ից 1.2-ի միջակայքում՝ ցածր եկամուտ ունեցող երկրների համար:

Այսպիսով, Հայաստանի ՓՎԿԱ-ն հաշվարկելու համար այլ երկրների արժեքները մոտարկելու օգտագործված եղանակներից կախված՝ ԿՓՎՏԱ-ի միջակայքը տատանվում է 5 812 933 ՀՀ դրամից մինչև 32 453 944 ՀՀ դրամ:

Որպես ելակետ կիրառվել է ըստ եկամտի առաձգականության 1.0 մեծությունը: ՓՎԿԱ-ի և ԿՓՎՏԱ-ի բոլոր գնահատումները փոխարկվել են ՀՀ դրամի՝ օգտագործելով գնահատման տարվա գնողունակության համարժեքները, և ճշգրտվել մինչև 2022 թվականը:

Կարգավորման առաջարկվող յուրաքանչյուր տարբերակի ընդհանուր ազդեցությունը գնահատելու համար օգտագործելով կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքը, այլ ոչ թե վիճակագրական կյանքի արժեքը՝ կարելի է ավելի հստակ պատկերացում ստանալ համապատասխան տարբերակի ազդեցությունների մասին: Գործնականում, օրինակ, դա կարող է ավելի քիչ առաջնահերթություն տալ Covid-19-ից մահերը կանխելու կարգավորմանը և ավելի մեծ առաջնահերթություն՝ այն կարգավորումներին, որոնք նվազեցնում են ազդեցությունը առողջական այլ պայմանների ու ընդհանուր առմամբ մարդկանց կյանքի վրա: Ընդհանուր առմամբ մոտեցումը հետևյալն է. եթե միջամտության արժեքը

յուրաքանչյուր շահառուի հաշվով, օրինակ՝ 2 500 000 ՀՀ դրամ է, և այն կերկարացնի յուրաքանչյուր շահառուի կյանքը 1 տարով, որի ԿՓՎՏԱ-ն, օրինակ՝ 6 000 000 ՀՀ դրամ է, ապա միջամտությունը համարվում է արդյունավետ:

**Օրինակ 17. ԿՎՏԱ-ի հաշվարկման օրինակներ**

Սովորաբար ՓՎԿԱ-ն դիտարկվում է որպես կյանքի սպասվող 40 տարվա ներկա արժեք (40 տարի կյանքի սպասվող տևողությամբ փրկված վիճակագրական կյանքի արժեք): Իսկ ԿՓՎՏԱ-ն դիտարկվում է որպես որոշակի տարեկան հաստատուն արժեք, որի՝ ըստ տարիների բերված արժեքների գումարը հավասար է ՓՎԿԱ-ին: Այսպիսով, եթե 40 տարի կյանքի սպասվող տևողությամբ առողջ մարդու ՓՎԿԱ-ն լինի 73.343 մլն ՀՀ դրամ, ապա 10% դիսկոնտավորման տոկոսադրույքի դեպքում առողջ կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքը կլինի 7 500 000 ՀՀ դրամ:

$$\text{ՓՎԿԱ} = \text{ԿՓՎՏԱ} / (1+r) + \text{ԿՓՎՏԱ} / (1+r)^2 + \dots + \text{ԿՓՎՏԱ} / (1+r)^n$$

$$73\,343\,000 \text{ ՀՀ դրամ} = \text{ԿՓՎՏԱ} / 1.1 + \text{ԿՓՎՏԱ} / 1.1^2 + \dots + \text{ԿՓՎՏԱ} / 1.03^{40} = 7\,500\,000 \text{ ՀՀ դրամ} / 1.1 + 7\,500\,000 \text{ ՀՀ դրամ} / 1.1^2 + \dots + 7\,500\,000 \text{ ՀՀ դրամ} / 1.1^{40}$$

Նաև կարելի է օգտագործել արդեն իսկ գնահատված ԿՓՎՏԱ-ն՝ որոշակի կոնկրետ տարիքում ՓՎԿԱ-ն հաշվարկելու համար:

$$\text{ՓՎԿԱ}(a) = \text{ԿՓՎՏԱ} / (1+r) + \text{ԿՓՎՏԱ} / (1+r)^2 + \dots + \text{ԿՓՎՏԱ} / (1+r)^n$$

Որտեղ a-ն տվյալ տարիքն է, որի համար ցանկանում ենք հաշվել ՓՎԿԱ-ն, r-ը դիսկոնտավորման տոկոսադրույքն է, n-ը՝ կյանքի սպասվող տևողությունը: Եթե գնահատված ԿՓՎՏԱ-ն 7 500 000 ՀՀ դրամ է, ներկա տարիքը՝ 65 տարեկան, իսկ կյանքի ակնկալվող ընդհանուր տևողությունը 80 տարի, ապա 65 տարեկանում ՓՎԿԱ-ն կլինի 57 մլն ՀՀ դրամ:

$$\text{ՓՎԿԱ}(65) = 7\,500\,000 \text{ ՀՀ դրամ} / (1+0.3) + 7\,500\,000 \text{ ՀՀ դրամ} / (1+0.3)^2 + \dots + 7\,500\,000 \text{ ՀՀ դրամ} / (1+0.3)^{15} = 57\,046\,000 \text{ ՀՀ դրամ}$$

Սա նշանակում է, որ ՓՎԿԱ-ն ուղղակիորեն կախված է տարիքից:

Կյանքի սպասվող տարիների ավելացումը կարելի է հաշվարկել նաև ոչ դրամական եղանակով: Եթե ակնկալվում է, որ կարգավորման կիրառման արդյունքում կփրկվի, օրինակ՝ 10 կյանք՝ յուրաքանչյուրի կյանքի սպասվող տևողությունը 20 տարի, ապա փրկված կյանքի տարիների քանակը կլինի  $10 \text{ կյանք} * 20 \text{ տարի} = 200 \text{ տարի}$ :

### 3) Որակով ճշգրտված կյանքի տարիները/Quality Adjusted Life Years

Որակով ճշգրտված կյանքի տարիները (ՈՃԿՏ) ոչ դրամական գնահատման միջոց է, որը միավորում է հիվանդության տևողությունը և ծանրությունը: Կյանքի տևողությունը (մահացությունը) և կյանքի որակը (հիվանդացությունը) ներկայացվում են որպես մեկ համախմբված ցուցանիշ: ՈՃԿՏ-ն ցույց է տալիս, թե ընդունելի որակի քանի լրացուցիչ ամիս կամ տարի մարդ կարող է ապրել՝ կարգավորման շնորհիվ բուժման կամ առողջության բարելավման արդյունքում: ՈՃԿՏ-ները լայնորեն օգտագործվում են հանրային առողջապահական ծրագրերը դասակարգելու և դրանց առաջնահերթություն տալու, առողջապահական քաղաքականության և բժշկական բուժման որոշումների ծախսարդյունավետությունը վերլուծելու և անհատների կամ բնակչության խմբերի միջև առողջական վիճակը համեմատելու համար: Այս համատեքստում ՈՃԿՏ-ներին սովորաբար դրամական արժեք չի տրվում, սակայն ԿԱԳ-ում այս գնահատումները կիրառելու համար նախընտրելի է դրանց դրամականացումը, որը կարելի է իրականացնել՝ օգտագործելով ԿՓՎՏԱ-ն:

ՈՃԿՏ-ները անհատի՝ առողջ վիճակում գտնվելու ժամանակաշրջանի տարիների քանակի բազմապատկումն է այդ վիճակում գտնվելու ընթացքում առողջական առումով կյանքի որակի (ԱԱԿՈ) ցուցանիշի հետ: Բանաձևը հետևյալն է՝

$$\text{ՈՃԿՏ} = \text{Կյանքի տարիներ} * \text{ԱԱԿՈ}$$

ԱԱԿՈ-ն տատանվում է 1-ի (որը համապատասխանում է կատարյալ առողջությանը) և 0-ի (որը համարժեք է մահվանը) միջև: Ընդհանուր առմամբ, առողջական առումով կյանքի որակը, առողջական վիճակից կախված, անհատների միջև կարող է տարբեր լինել, սակայն գործնականում յուրաքանչյուր առողջական վիճակի համար օգտագործվում է մեկ ընդհանուր արժեք:

### Օրինակ 18. ՈՃԿՏ-ի հաշվարկման օրինակներ

1 տարվա ընթացքում Ա անհատն ունի կատարյալ առողջություն.

$$1 \text{ կյանքի տարի} * 1 \text{ ԱԱԿՈ} = 1 \text{ ՈՃԿՏ}$$

Անհատ Բ-ն ունի կատարյալ առողջություն միայն կես տարի.

$$0.5 \text{ կյանքի տարի} * 1 \text{ ԱԱԿՈ} = 0.5 \text{ ՈՃԿՏ}$$

Անհատ Գ-ն 1 տարի ապրում է առողջության 0.5 գործակցով (կատարյալ առողջության կեսը).

$$1 \text{ կյանքի տարի} * 0.5 \text{ ԱԱԿՈ} = 0.5 \text{ ՈՃԿՏ}$$

Կոնկրետ առողջական վիճակի համար ԱԱԿՈ-ն որոշելուց և այդ վիճակի տևողության վրա բազմապատկելուց հետո, ստացված ՈՃԿՏ-ները գումարվում են՝ որպես որոշակի հիվանդության հետ կապված բոլոր առողջական վիճակների (օրինակ՝ սուր և քրոնիկ փուլերի) ընդհանուր ցուցանիշ: Օրինակ՝ սննդային թունավորման դեպքում ՈՃԿՏ-ները կարող են հաշվարկվել որպես ստամոքս-աղիքային տրակտի սուր հիվանդության բոլոր դեպքերի հանրագումար՝ ներառյալ հոսպիտալացում պահանջող և չպահանջող դեպքերը, ինչպես նաև ավելի ծանր հետևանքներով դեպքերը: ԿԱԳ-ում կարգավորման առաջարկվող տարբերակի

իրականացման արդյունքում առաջացող առողջական վիճակը համեմատվում է կարգավորման այդ տարբերակի բացակայության դեպքում առողջական վիճակի հետ, որը, հավանաբար, առողջության կատարյալ վիճակից ավելի վատ վիճակ է (սովորաբար առողջական վիճակը վատթարանում է նաև տարիքի հետ, ուստի տարեցների միջին ԱԱԿՈ-ն ևս 1-ից ցածր է):

**Օրինակ 19. ՈՃԿՏ-ի հաշվարկի օրինակ ԿԱԳ-ում՝ կարգավորման առաջարկվող տարբերակի առկայության դեպքում և առանց դրա**

**ա. Կարգավորման բացակայության դեպքում միջին ազդակիր անհատը առողջության առումով կունենա 0.7 կյանքի որակի ցուցանիշ՝ իր գնահատված սպասվող 20 տարվա կյանքի ընթացքում.**

$$\text{ՈՃԿՏ0} = 20 \text{ կյանքի տարի} * 0.7 \text{ ԱԱԿՈ} = 14$$

**բ. Կարգավորման առկայության դեպքում միջին ազդակիր անհատը առողջության առումով կունենա 0.9 կյանքի որակի ցուցանիշ՝ նույն ժամանակահատվածի համար.**

$$\text{ՈՃԿՏկ} = 20 \text{ կյանքի տարի} * 0.9 \text{ ԱԱԿՈ} = 18$$

Կարգավորմանը վերագրվող ՈՃԿՏ-ի օգուտը 18 ՈՃԿՏ-ի և 14 ՈՃԿՏ-ի տարբերությունն է, որը հավասար է 4 ՈՃԿՏ-ի:

Կամ, եթե կարգավորման ծախսը յուրաքանչյուր շահառուի հաշվարկով, օրինակ՝ 2 500 000 ՀՀ դրամ է, և այն կերկարացնի յուրաքանչյուր շահառուի կյանքը 1 տարով, սակայն առողջության 0.5 գործակցով, ապա միջամտությունը համարվում է արդյունավետ, քանի որ այդ 1 տարվա ԿՓՎՏԱ-ն կկազմի կատարյալ առողջ վիճակով 1 տարվա ԿՓՎՏԱ

(օրինակ՝ 6 մլն ՀՀ դրամ) \* 0.5 ԱԱԿՈ = 6 000 000 ՀՀ դրամ \* 0.5 ԱԱԿՈ = 3 000 000 ՀՀ դրամ,  
ինչը գերազանցում է միջամտության արժեքը:

Սովորաբար, գոյություն ունեն բազմաթիվ առողջապահական հետազոտություններ, ինչպես նաև բնակչության տվյալների բազաներ, որտեղ ամփոփվում են ՈՃԿՏ-ի տվյալները լայն շրջանակների համար: Հետևաբար, ընդհանուր առմամբ, ԿԱԳ-ը կարող է հիմնվել առկա առողջապահական հետազոտությունների վրա՝ տարբեր հիվանդությունների գծով ռիսկերի նվազեցման արդյունքում ՈՃԿՏ-ի ավելացումը գնահատելու համար: Հայաստանում մահացության տվյալները, որոնք կարող են օգտագործվել ՈՃԿՏ-ի (կյանքի սպասվող տարիների և ԱԱԿՈ-ի) գնահատման նպատակներով, ներկայացված են ըստ հետևյալ կատեգորիաների՝

- ա. արյան շրջանառության համակարգի հիվանդություններ,
- բ. չարորակ նորագոյացություն,
- գ. էնդոկրին համակարգի հիվանդություններ,
- դ. էկզոգեն պատճառներ (վթար, թունավորում, վնասվածք և այլն),
- ե. շնչառական համակարգի հիվանդություններ,
- զ. մարսողական համակարգի հիվանդություններ,
- է. վարակիչ և մակաբուծական հիվանդություններ,
- ը. այլ հիվանդություններ:

Հայաստանում կյանքի որակի վերաբերյալ առկա տվյալների աղբյուրները, որոնք կարող են օգտագործվել ՈՃԿՏ-ի գնահատման նպատակներով, հետևյալն են՝



ա. շենքերի ներսում և դրսում օդի աղտոտմանը վերագրվող մահացության ցուցանիշն՝ ըստ մարզերի և տարիների,

բ. բնակչության բավարարվածությունը շրջակա միջավայրի վիճակով՝ ըստ բողոքի տեսակի, մարզերի և տարիների,

գ. քաղաքային բնակավայրերում փոշու միջին տարեկան մակարդակներն՝ ըստ քաղաքների, դիտակայանների և տարիների,

դ. աղտոտված ջրի, ոչ անվտանգ սանիտարական պայմանների ու հիգիենայի խսպառ բացակայության պատճառով բնակչության մահացությունն՝ ըստ մարզերի և տարիների,

ե. ոչ դիտավորյալ թունավորումների պատճառով մահացությունն՝ ըստ մարզերի և տարիների,

զ. աղետների հետևանքով տուժածների թվաքանակը (զոհվածներ, անհետ կորածներ)՝ ըստ աղետի տեսակի, մարզերի և տարիների,

է. բնակչության համամասնությունը, որն օգտվում է անվտանգ կառավարվող խմելու ջրի ծառայություններից՝ ըստ մարզերի և տարիների,

ը. բնակչության համամասնությունը, որը ենթարկվում է քաղաքային բնակավայրերում մթնոլորտային օդի որակի չափանիշների գերազանցմանն՝ ըստ մթնոլորտային օդի աղտոտիչների, մարզերի և տարիների,

թ. բնակչության համամասնությունը, որն օգտվում է անվտանգ կառավարվող սանիտարական ծառայություններից՝ ըստ ծառայության տեսակի, մարզերի և տարիների,

ժ. շրջակա միջավայրին առնչվող կյանքի որակի ազդեցացված ցուցանիշն՝ ըստ մարզերի և տարիների:

Որպես ԱԱԿՈ-ի վերաբերյալ տվյալների այլընտրանք՝ ԿԱԳ-ը կարող է հիմնվել բնակչության լայնածավալ հարցումների վրա: Որոշ խոշոր ազգային հարցումներ կարող են ներառել ԱԱԿՈ-ի ընդհանուր ցուցիչներից մեկը կամ մի քանիսը (օրինակ՝ Բժշկական ծախսերի պանելային հետազոտությունը): ԱԱԿՈ-ի այդ գնահատականները կարող են այնուհետև համալրվել հետազոտությունում առկա տևողության գնահատականներով: Առողջական որոշ ազդեցությունների համար, սակայն, այդ հարցումները կարող են բավարար դեպքեր չպարունակել՝ ԱԱԿՈ-ն հուսալիորեն գնահատելու համար:

Առողջապահական համակարգի վրա նոր կարգավորումների ազդեցությունների գնահատման ժամանակ կարևոր է հաշվի առնել հետևյալ չորս ասպեկտները.

1. Առողջապահության ոլորտի ընդհանուր ֆինանսավորումը՝

- 1) առողջապահության ոլորտի վրա նոր կարգավորման ֆինանսական հետևանքների գնահատում՝ ներառյալ պետական ֆինանսավորումը: Սա ներառում է բյուջեից հատկացումների, ֆինանսավորման աղբյուրների և առողջապահական համակարգի ընդհանուր ֆինանսական կայունության հնարավոր փոփոխությունների գնահատումը,
- 2) նոր կարգավորման իրականացման հետ կապված ուղղակի և անուղղակի ծախսերի դիտարկում, ինչպիսիք են՝ լրացուցիչ ռեսուրսների, ենթակառուցվածքների արդիականացման կամ համակարգի փոփոխությունների անհրաժեշտությունը,
- 3) առողջապահական առկա ծրագրերի և ծառայությունների վրա հնարավոր ազդեցության վերլուծություն, ինչպես նաև ռեսուրսների արդյունավետ և ծախս-խնայող բաշխման կարողության վերլուծություն,

2. Բնակչության առանձին խմբերի ծախսերը առողջության վրա՝

- 1) առողջապահության ոլորտում անհատների ծախսերի վրա նոր կարգավորման հնարավոր ազդեցությունների ուսումնասիրություն: Սա ենթադրում է սեփական գրպանից կատարվող ծախսերի, ապահովագրական ծածկույթի կամ առողջապահական ծառայությունների հասանելիության մասով հնարավոր փոփոխությունների գնահատում,
  - 2) բնակչության տարբեր խմբերի, հատկապես խոցելի կամ մարգինալացված խմբերի համար առողջապահության մատչելիության և հասանելիության դիտարկում և հնարավոր անհավասարությունների գնահատում, որոնք կարող են առաջանալ նոր կարգավորման արդյունքում,
3. Ազդեցությունները առողջապահական համակարգի ռեսուրսների վրա՝
- 1) առողջապահական համակարգի ռեսուրսների, մասնավորապես՝ անձնակազմի, դեղերի, ենթակառուցվածքների և կազմակերպչական ասպեկտների վրա ազդեցության գնահատում,
  - 2) կարգավորման պահանջներին համապատասխանելու համար լրացուցիչ առողջապահական մասնագետների կամ մասնագիտացված անձնակազմի անհրաժեշտության գնահատում,
  - 3) դեղորայքի կամ բժշկական պարագաների առկայության, մատչելիության և հասանելիության հնարավոր փոփոխությունների վերլուծություն,
  - 4) առողջապահական ենթակառուցվածքների և կազմակերպչական պայմանավորվածությունների վրա ազդեցության գնահատում, ինչպիսիք են՝ գործընթացների, ընթացակարգերի փոփոխությունները կամ նոր հարմարությունների կամ սարքավորումների անհրաժեշտությունը,
4. Գործընթացները և ինստիտուցիոնալ պայմանավորվածությունները՝

- 1) առողջապահական համակարգում առկա գործընթացների և ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների վրա նոր կարգավորման ազդեցության բացահայտում,
- 2) կառավարման կառույցների, կարգավորման շրջանակների կամ վարչական ընթացակարգերի ցանկացած փոփոխության գնահատում,
- 3) առողջապահական ծառայություններ մատուցողների, հանրային առողջապահության գործակալությունների և նոր կարգավորման իրականացման մեջ ներգրավված այլ շահագրգիռ կողմերի համակարգման, համագործակցության և հաղորդակցության հնարավոր հետևանքների դիտարկում:

Հաշվի առնելով այս ասպեկտները ԿԱԳ-ում՝ կարելի է համապարփակ պատկերացում կազմել առողջապահական համակարգի վրա նոր կարգավորման ֆինանսական ազդեցության մասին՝ ներառյալ ֆինանսավորումը, բնակչության ծախսերը, ռեսուրսների բաշխումը և կազմակերպչական հետևանքները:

Առողջապահության ոլորտի դրական և բացասական ազդեցությունների (ծախսերի և օգուտների) դրամական արտահայտման համար կարող են կիրառվել նաև վճարելու պատրաստակամության հետևյալ մեթոդները՝

ա. հեղոնիստական գնորոշման. առողջապահության ոլորտում կիրառման դեպքում օգտագործվում է առողջության որոշիչ գործոններով պայմանավորված տարատեսակ ապրանքների գնային տարբերությունները, ինչպես նաև հեղոնիստական մեթոդը կարող է կիրառվել աշխատավարձերի վրա՝ դիտարկելով առողջության և անվտանգության պայմաններից ելնելով տարբեր աշխատատեղերի վարձատրությունների չափը, որի դեպքում կարելի է ասել, որ այն համընկնում է ընդունելու պատրաստակամության հետ,

բ. կանխող վարքագծի. առողջապահության ոլորտում կիրառման դեպքում դիտարկվում են անհատների այն ծախսերը, որոնք ուղղված են առողջության հավանական ռիսկերի կանխարգելմանը, օրինակ՝ մոտոցիկլետավարի կողմից սաղավարտի ձեռքբերման արժեքը կամ առանձնակի վնասակար աշխատավայրերում աշխատողներին տրամադրվող պաշտպանիչ միջոցների արժեքը,

գ. հիվանդության արժեքի,

դ. պայմանական գնահատման,

ե. ընտրության մոդելավորման և համակցված վերլուծությունների. առողջապահության ոլորտում որպես բարիք կարող են դիտարկվել առողջապահական ծառայությունները, դեղորայքները կամ առողջության որոշիչ գործոնների վրա ազդող ցանկացած այլ բարիք:

2. Առողջապահական ազդեցություններ, որոնք հնարավոր չէ գնահատել քանակական կամ դրամական եղանակով

Տվյալների անհասանելիությամբ, ժամանակի ու ռեսուրսների անբավարարությամբ կամ առողջապահական ազդեցության տեսակով պայմանավորված՝ առողջապահական ազդեցությունների ամբողջությամբ քանակական կամ դրամական հաշվարկը միշտ չէ որ հնարավոր է: Օրինակ՝ կարգավորման առաջարկվող տարբերակի ազդեցությունը հիվանդացության դեպքերի քանակի վրա գնահատելու համար տվյալները կարող են բացակայել, նույնիսկ եթե այլ երկրներում հետազոտությունները կամ կարգավորումները ցույց են տալիս, որ հիվանդությունը կապված է եղել պետության կողմից կարգավորվող ռիսկերի հետ: Կամ կարգավորման առաջարկվող տարբերակը կարող է հանգեցնել

բնակչության առողջության ապահովման ոլորտում զգալի նորարարությունների, սակայն հավանական նորարարությունները դրամական արտահայտությամբ գնահատելը կարող է դժվար լինել:


Առողջապահության ոլորտում տեղեկատվության հասանելիությունը չափազանց կարևոր է: Որոշ կարգավորումներ մեծացնում են տեղեկատվության հասանելիությունը, սակայն ԿԱԳ-ի ընթացքում շահառուների հավանական արձագանքը գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է բացակայել. օրինակ՝ կարող է հնարավոր լինի գնահատել այն հիվանդների թիվը, ովքեր իրազեկվում են կենսակերպի համար բարենպաստ փոփոխությունների մասին, սակայն հնարավոր չլինի այդ գնահատումը վերածել քանակական տվյալների, որոնք կարելի է դրամականացնել՝ օգուտները հաշվարկելու համար: Փորձը ցույց է տալիս, որ կարգավորման՝ վարքագծային փոփոխությունների առաջացման և այդ փոփոխությունների՝ անհատի բարեկեցության վրա ազդեցության (օրինակ՝ հիվանդացության կամ մահացության ռիսկի նվազեցման աստիճանի) հաշվակը խնդրահարույց է:

Այնուամենայնիվ, կարգավորմամբ առաջարկվող փոփոխությունների ազդակիր քաղաքացիների կամ կազմակերպությունների քանակի հաշվարկները պետք է ներառվեն ԿԱԳ-ում: Կարող են լինել դեպքեր, որ օրինակ՝ առողջապահության ոլորտի կարգավորման ենթակա կազմակերպությունների թվի մասին տեղեկատվությունն առկա լինի, բայց դրանց ծախսերի վերաբերյալ տեղեկությունը բացակայի: Նմանապես, ազդակիր անձանց թվերը կարող են հայտնի լինել, սակայն բացակայեն տեղեկությունները նրանց կրած կոնկրետ ծախսերի կամ ստացած օգուտների մասին: Ամեն դեպքում, այդ բոլոր առկա տվյալները պետք է ներառվեն ԿԱԳ-ում:

Առողջապահական ազդեցությունների գնահատումը, որը հնարավոր չէ անցկացնել քանակական կամ դրամական եղանակով, կարելի է անցկացնել նաև խնդրի ծառի, կարգավորման տարբերակների տրամաբանության վրա հիմնված

համեմատությունների և ոչ քանակական ազդեցությունների աղյուսակների միջոցով: Որպես կանոն, ոչ քանակական ազդեցությունների ցանկի հետ մեկտեղ ցանկալի է ներկայացնել պատճառների վերաբերյալ փաստեր, որոնք առողջապահական ազդեցությունները կապում են կարգավորման համապատասխան առաջարկվող տարբերակների հետ, ինչպես նաև ներկայացնել ամփոփ տեղեկատվություն դրանց ուղղության և մեծության վերաբերյալ:

Այդ փոխհարաբերությունների քարտեզագրումը կատարվում է տրամաբանական ծառի միջոցով:



**Գծապատկեր 1. Առողջապահական ազդեցությունների քարտեզագրման տրամաբանական ծառ**

Ոչ քանակական առողջապահական ազդեցությունների մասին զեկուցելու գործնական միջոց է «ի՞նչ կլիներ, եթե» վերլուծությունը: Այն ներառում է տարբեր հիպոթետիկ, բայց հավանական սցենարների ազդեցությունը ուսումնասիրության արդյունքների վրա: Օրինակ՝ համապատասխան տվյալների առկայության դեպքում կարող են համեմատվել 10-ից մինչև 1 000 վիճակագրական դեպքերի միջակայքում մահացության ռիսկի նվազեցման օգուտներն ու ծախսերը, եթե այդ միջակայքում արդյունքներ ստանալը հնարավոր է: Արդյունքում՝ ԿԱԳ-ում հնարավոր է դառնում ներկայացնել, թե որքանով են կարգավորման յուրաքանչյուր տարբերակի դեպքում օգուտները գերազանցում ծախսերը: Նմանապես, ԿԱԳ-ում կարող է դիտարկվել, թե որքանով օգուտները կարող են գերազանցել ծախսերը՝ հիմնվելով ոչ քանակական

ազդեցությունների մեծության ստորին կամ վերին սահմանային գնահատումների վրա: Օրինակ՝ եթե առկա տվյալները բավարար են գնահատելու համար, որ կարգավորման հետ կապված մահացության ռիսկի նվազեցումը հազիվ թե լինի 1,000 վիճակագրական դեպքից ավել կամ 10 վիճակագրական դեպքից պակաս, ապա արդյունքները կարող են ներկայացվել՝ օգտագործելով այդ երկու գնահատականները: Այդպիսով, «ի՞նչ կլինեք, եթե» վերլուծությունը ներառում է շատ լայն շրջանակներ, որոնք հիմնված են համեմատաբար քիչ տվյալների կամ հիմնավոր ապացույցների վրա և ենթադրությունների բարձր աստիճանով պայմանավորված՝ կարող են ներկայացվել օգուտների և ծախսերի առաջնային գնահատումներից առանձին:

**3. Առողջապահական ազդեցությունների գնահատում**

*Աղյուսակ 7.*

*Առողջապահական ազդեցություններ՝ հարցեր և գնահատման մեթոդներ*

Հարց	Այո	Ոչ	Կիրառելիք մեթոդներ և լրացուցիչ առաջարկություններ
Արդյո՞ք տարբերակն ազդում է բնակչության խմբերի վրա	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Եթե այո, ապա կիրառել Փրկված վիճակագրական կյանքի արժեքի (ՓՎԿԱ), Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքի (ԿՓՎՏԱ), Որակով ճշգրտված կյանքի տարիների (ՈՃԿՏ) գնահատման մեթոդները և/կամ վերը նշված այլ մեթոդները:
Արդյո՞ք տարբերակն	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Եթե այո, ապա կիրառել Փրկված վիճակագրական կյանքի արժեքի (ՓՎԿԱ),



<p>ազդում է մարդու և հանրության առողջության վրա (դրական և բացասական կողմերը), այդ թվում՝</p>			<p>Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքի (ԿՓՎՏԱ), Որակով ճշգրտված կյանքի տարիների (ՈՃԿՏ) գնահատման մեթոդները և/կամ վերը նշված այլ մեթոդները:</p>
<p>ա. բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում</p>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<p>Եթե այո, ապա կիրառել Փրկված վիճակագրական կյանքի արժեքի (ՓՎԿԱ), Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքի (ԿՓՎՏԱ), Որակով ճշգրտված կյանքի տարիների (ՈՃԿՏ) գնահատման մեթոդները և/կամ վերը նշված այլ մեթոդները:</p>
<p>բ. առողջության պահպանում</p>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<p>Եթե այո, ապա կիրառել Փրկված վիճակագրական կյանքի արժեքի (ՓՎԿԱ), Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքի (ԿՓՎՏԱ), Որակով ճշգրտված կյանքի տարիների (ՈՃԿՏ) գնահատման մեթոդները և/կամ վերը նշված այլ մեթոդները:</p>
<p>գ. հանրային առողջությանն առնչվող առողջապահական խնդիրներ</p>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<p>Եթե այո, ապա կիրառել Փրկված վիճակագրական կյանքի արժեքի (ՓՎԿԱ), Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքի (ԿՓՎՏԱ), Որակով ճշգրտված կյանքի տարիների (ՈՃԿՏ) գնահատման մեթոդները և/կամ վերը նշված այլ մեթոդները:</p>

<p>Արդյո՞ք տարբերակն ազդում է բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակի, ծավալի և մատչելիության վրա</p>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<p>Եթե այո, ապա կիրառել Փրկված վիճակագրական կյանքի արժեքի (ՓՎԿԱ), Կյանքի փրկված վիճակագրական տարվա արժեքի (ԿՓՎՏԱ), Որակով ճշգրտված կյանքի տարիների (ՈՃԿՏ) գնահատման մեթոդները և/կամ վերը նշված այլ մեթոդները:</p>
---	--------------------------	--------------------------	---

Աղյուսակում բերված առողջապահական ազդեցությունների դիտարկման տեսանկյունից կարող են օգտակար լինել նաև մարդկանց և հանրային առողջությանը վերաբերող ստորև ներկայացված ասպեկտները (դրական և բացասական).

**1. Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում՝**

- 1) հիվանդությունների տարածումը կանխարգելող և հիգիենիկ պայմաններ ապահովող միջոցառումների և կանոնակարգերի կիրառմամբ հանրային առողջության պաշտպանում,
- 2) բնակչության բարեկեցության և առողջության պահպանմանն ուղղված գործողությունների ձեռնարկում՝ թիրախավորելով և վերահսկելով առողջության հնարավոր վտանգները և հիվանդությունների ռիսկերը,
- 3) անհատների համար անվտանգ և առողջ միջավայրի ստեղծում և պահպանում՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելող սանիտարական պրակտիկաների և արձանագրությունների (պրոտոկոլների) ներդրման միջոցով,

## 2. Առողջության պահպանում՝

- 1) մարդկանց և համայնքային առողջությունը պահպանելու և պաշտպանելու նախաձեռնողական և կանխամտածված ջանքեր՝ տարբեր կանխարգելիչ միջոցառումների, ապրելակերպի բարելավման և առողջապահական պրակտիկաների միջոցով,
- 2) ընդհանուր բարեկեցության և կենսունակության խթանմանը և պահպանմանն ուղղված գործունեություն՝ կենտրոնանալով հիվանդությունների կանխարգելման և լավ առողջական վիճակի պահպանման վրա,
- 3) ցուցադրել այնպիսի գործողություններ և վարքագիծ, որոնք աջակցում են կյանքի երկարակեցությանը և որակին, ինչպիսիք են՝ հավասարակշռված սննդակարգը, կանոնավոր մարմնամարզությունները, սթրեսի կառավարումը և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան բժշկական օգնության որոնումը,

## 3. Հանրային առողջության հետ կապված առողջապահական խնդիրներ՝

- 1) առողջապահական համակարգի այն մտահոգությունները և մարտահրավերները, որոնք վերաբերում են բնակչության ընդհանուր բարեկեցությանը և առողջությանը,
- 2) այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հիվանդությունների կանխարգելումը, առողջության խթանումը, առողջապահության հասանելիությունը և հավասարությունը, պատվաստումների ծրագրերը, համաճարակային հսկողությունը, առողջապահական կրթությունը և արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը,
- 3) կենտրոնացում հանրության կողմնակցող առողջապահական կարիքների վրա՝ անդրադառնալով բնակչության մակարդակով առողջապահական խնդիրներին և իրականացնելով ռազմավարություններ՝ միտված ընդհանուր

առողջապահական արդյունքների և համայնքների կյանքի որակի բարելավմանը,

- 4) առողջապահական ծառայություններ մատուցողների, հանրային առողջապահական գործակալությունների, քաղաքականություն մշակողների և համայնքի շահագրգիռ կողմերի միջև համակարգում և համագործակցություն՝ հասարակական ավելի լայն մակարդակում առողջապահական մարտահրավերները լուծելու և մեղմելու համար:

Կարգավորումներն ազդում են մարդու առողջության վրա տարբեր ձևով: Դրանք կարող են կյանքեր փրկել՝ նվազեցնելով մահացության վտանգը: Դրանք կարող են նաև բարելավել հիվանդների առողջությունը կամ կանխարգելել հիվանդացությունները: Այլ ազդեցությունների թվում են լարվածության կամ սթրեսի որոշակի նվազեցումը կամ հոգեկան առողջության բարելավումը: ԿԱԳ-ում առողջապահական ազդեցությունները դիտվում են որպես առողջության մեկ կամ մի քանի որոշիչ գործոնների փոփոխություններ, որոնք բխում են կարգավորման առաջարկվող տարբերակներից: Առողջության որոշիչ գործոնների փոփոխություններն առաջացնում են առողջապահական արդյունքների փոփոխություններ, որոնք իրենց հերթին լինում են դրական, բացասական կամ երկուսը միասին:

Ազգաբնակչության առողջությունն առողջապահական ծառայությունների մատուցումից բացի նաև էականորեն պայմանավորված է տնտեսական, սոցիալական, մշակութային և շրջակա միջավայրի գործոններով:

Առողջության որոշիչ գործոնների մի մասն (ինչպիսիք են՝ կենսաբանական և կենսաոճով պայմանավորված գործոնները) անմիջականորեն կապված են մարդկանց առողջության հետ, իսկ որոշները (սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի գործոնները) անմիջականորեն կապված չեն մարդկանց առողջության հետ, և նրանց ազդեցությունն առողջության վրա միջնորդավորված է. օրինակ՝ ցածր եկամտի

մակարդակը կարող է նվազեցնել առողջ սննդի՝ բանջարեղենի և մրգերի հասանելիությունը, ինչն էլ իր հերթին կարող է մեծացնել ինֆեկցիաների կամ սրտի հիվանդությունների ու շաքարախտի նկատմամբ հակվածությունը:

ԿԱԳ-ի ծախսերի և օգուտների վերլուծությունում առողջապահական բացասական ազդեցությունները դիտարկվում են որպես ծախսեր: Ծախսեր են նաև կարգավորման առաջարկվող տարբերակների իրականացման համար անհրաժեշտ միջոցները (ներդրումները, անվտանգության բարելավմանն ուղղված ոլորտի ծախսերը և այլն) կամ քայլերը (օրինակ՝ տվյալների հավաքագրումը, հաշվետվությունների ներկայացումը և այլն): Իսկ օգուտները կարգավորման տարբերակներով նախատեսված արդյունքներն են՝ դրական ազդեցությունները (օրինակ՝ առողջության բարելավումները):

Կարգավորումները սովորաբար հանգեցնում են մի շարք հետևանքների (իրադարձությունների և արդյունքների): Ծախսերի և օգուտների վերլուծության նպատակով այդ իրադարձությունների ու արդյունքների միջև պատճառահետևանքային կապը հաստատելու համար կարևոր է տարբերակել կարգավորումից բխող նախնական պահանջը (օրինակ՝ հիվանդանոցները պետք է զեկուցեն դեղերի կողմնակի հետևանքների մասին), այդ պահանջից բխող հետագա իրադարձությունները (օրինակ՝ հիվանդանոցի անձնակազմը փոխում է դեղատոմսերի դուրսգրման մոտեցումը. սկսում են հաշվառել դեղատոմսերը կամ դեղերի կողմնակի ազդեցությունների հաշվառման նպատակով ցանկացած այլ մոտեցում կիրառել), վերջնական արդյունքը (օրինակ՝ որոշ հիվանդների առողջության ավելի մեծ բարելավումներ՝ համեմատած ելակետային տարբերակի (սկզբնական վիճակի) հետ. դեղերի կողմնակի ազդեցությունների հաշվառումից հետո բժիշկներն ունենում են դրանց վերաբերյալ բավարար տեղեկատվություն և սկսում են հիվանդներին բացասական կողմնակի ազդեցություններ ունեցող դեղեր չնշանակել) ու այս ամենի գնահատումը (օրինակ՝ վարքագծային փոփոխությունների և առողջապահության

բարելավումների դրամական արժեքը): Իրադարձությունների ու արդյունքների միջև պատճառահետևանքային կապը հաստատելու համար պետք է ներկայացվեն նաև հիմնավորող փաստեր:

ԿԱԳ-ի շրջանակում իրականացվում է առողջապահության ոլորտում կարգավորման նշանակալի ազդեցությունների գնահատում, մասնավորապես՝

- 1) ազդեցություն մարդու և հանրության առողջության վրա,
- 2) ազդեցություն բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի, ծավալի և մատչելիության վրա,
- 3) ազդեցություն մոր և մանկան առողջության պահպանման վրա,
- 4) ազդեցություն բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի, ծավալի, մատչելիության, ֆինանսավորման և կազմակերպման վրա,
- 5) ազդեցություն բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով ապահովման, ինչպես նաև դեղերի, դեղանյութերի, դեղագործական արտադրանքի և բժշկական նշանակության ապրանքների շրջանառության վրա,
- 6) ազդեցություն բժշկական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացի վրա:

- 1) Ազդեցություն մարդու և հանրության առողջության վրա

Մարդկանց և հանրային առողջապահության վրա ազդեցությունները կարող են լինել բազմաթիվ և հնարավոր չլինի դրանք բոլորը գնահատել նույն ԿԱԳ-ի

շրջանակներում: Ռեսուրսների խիստ սահմանափակ լինելու դեպքում ոչ այնքան առաջնահերթ ազդեցությունները ԿԱԳ-ում կարող են չդիտարկվել: Օրինակ՝ առաջնահերթության որոշման չափանիշները կարող են սահմանվել հետևյալ կերպ՝

ա. մեծություն (քանի մահվան, հիվանդացության, հաշմանդամության կամ ցանկացած այլ իրադարձության դեպք է տեղի ունեցել խնդրի պատճառով),

բ. լրջություն (խնդրի հետևանքների ծանրությունը),

գ. շրջանակ (բնակչության մասնաբաժինը, որը կշահի, եթե խնդիրը համարվի առաջնահերթ),

դ. իրագործելիություն (խնդիրը լուծելու հավանականությունը՝ ոլորտի համար կիրառելի առկա տեխնոլոգիաներով, միջոցներով և այլն),

ե. սոցիալական մտահոգություն (համայնքի կողմից խնդրին տրվող նշանակությունը):

**Օրինակ 20. Ինչպե՞ս սահմանել մարդկանց և հանրային առողջության վրա ազդեցությունների առաջնահերթությունները**

Հեպատիտ C-ն, փայտացումը և կարմրուկը ինչ-որ մարզում ճանաչվել են որպես առաջնային խնդիրներ: Այդ խնդիրների ազդեցությունների առաջնահերթությունը որոշելու համար ընտրվել են երեք չափանիշ. լրջություն, մեծություն և իրագործելիություն: Այնուհետև յուրաքանչյուր չափանիշի տրվել է կշիռ՝ խնդրի լուծման հարցում դրա ներուժը գնահատելու համար.

Լրջություն՝ 30%,

Մեծություն՝ 30%,

Բժշկական աջակցության մեջ փոփոխություններ կատարելու իրագործելիություն՝ 40%:

Յուրաքանչյուր չափանիշի ներքո յուրաքանչյուր հիվանդություն ստանում է գնահատական: Յուրաքանչյուր հիվանդությանը տրված գնահատականը բազմապատկվում է յուրաքանչյուր չափանիշին տրված կշռով՝ վերջնական միավորը ստանալու համար: Այս դեպքում որպես առաջնահերթ խնդիր է հանդիսանում կարմրուկը: Ստորև բերված գնահատման աղյուսակում ցույց է տրված, թե ինչպես է սահմանվել խնդիրների առաջնահերթությունը՝ ըստ իրենց ունեցած ազդեցությունների: Այս նույնը կարելի է անել նաև խնդիրների փոխարեն դիտարկելով հենց ազդեցությունները. օրինակ՝ վերցնելով մեկ խնդիր և գնահատելով դրա (երեք և ավել) տարբեր ազդեցությունները:

Գնահատման աղյուսակ

Խնդիր (կշիռ)	Լրջություն (30%)	Մեծություն (30%)	Իրագործելիություն (40%)	Գնահատական
Հեպատիտ C	3	1	1	$3*(0.3) + 1*(0.3) + 1*(0.4) = 1.6$
Փայտացում	2	2	2	$2*(0.3) + 2*(0.3) + 2*(0.4) = 2.0$
Կարմրուկ	1	3	3	$1*(0.3) + 3*(0.3) + 3*(0.4) = 2.4$

2) Բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը, ծավալը և մատչելիությունը

Բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի, ծավալի և մատչելիության վրա ազդեցությունը գնահատելու համար ԿԱԳ-ում պետք է



բացահայտվեն բնակչության կարիքների և հուսալիորեն որակյալ առողջապահական ծառայություններ մատուցելու պետության կարողությունների միջև անհամապատասխանությունները: Այս վերլուծության շրջանակներում հատկապես կարևոր է նկարագրել նաև դրանց կապերը Հայաստանում առողջապահության համընդհանուր ծածկույթ ապահովելու ազգային ջանքերի հետ: Ցանկալի է ներկայացնել ինչպես երկրում որակի բարելավման գործընթացի պատմությունը, այնպես էլ որակի ներկա վիճակը՝ ներառյալ ուժեղ և թույլ կողմերը: Պատմական տեղեկատվությունը կարող է դիտարկվել այնքան երկար ժամանակահատվածի համար, որքան անհրաժեշտ է: Պատմական հեռանկարը դիտարկելիս կարելի է ոչ միայն պարզել, թե արդյոք նախկինում երկրում գործադրվել են շոշափելի ջանքեր առողջապահական ծառայությունների որակը բարելավելու համար, այլ նաև ուսումնասիրել, թե ինչու են դրանք հաջողվել կամ ձախողվել, և արդյոք կարող են դասեր քաղվել առողջապահության ոլորտում այլ օրենսդրական նախաձեռնություններից: Այն դեպքերում, երբ վերլուծությունը բացահայտում է որակի հետ կապված ընթացիկ նախաձեռնություններ և կառուցվածքներ, հնարավոր է դրանք կատարելագործել կամ կարգավորման առաջարկվող տարբերակների համատեքստում հիմնվել դրանց վրա: Գոյություն ունեցող ծրագրերը (օրինակ՝ կոնկրետ հիվանդությունների կամ բնակչության որևէ առանձին խմբի, օրինակ՝ տարեցների խնդիրների վրա կենտրոնացած նախաձեռնությունները) ևս կարող են հարուստ փորձ և ռեսուրսներ ապահովել՝ ավելի լայն ազգային ջանքեր խթանելու և սպասարկման որակի համակարգային բարելավմանը նպաստելու համար:

### 3) Մոր և մանկան առողջապահության պահպանումը

Առողջապահության ընդհանուր իրավիճակի ուսումնասիրությունը կարող է ապահովել մոր և մանկան առողջապահության վերաբերյալ համապարփակ պատկերացում ու մոր և մանկան առողջապահական խնդիրների ավելի լավ ընկալում:

Ուսումնասիրությունն անցկացնելու համար պահանջվում է բնակչության, բնակչության առողջական վիճակի, առողջապահական ռեսուրսների և առողջության վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնների վերաբերյալ տվյալների հավաքագրում ու վերլուծություն: Որպես համապատասխան տվյալների աղբյուրներ կարող են հանդես գալ առողջապահական ծառայությունների և ռեսուրսների վերաբերյալ հաշվետվությունները, առողջապահական ծրագրերի գնահատման արդյունքները, առողջապահական կազմակերպությունների տվյալները, ժողովրդագրական և առողջապահական հետազոտությունները և առողջությանը վերաբերող տեղեկատվություն հավաքագրող այլ հաստատությունների հաշվետվությունները, օրինակ՝ առողջապահական ոչ պետական կազմակերպությունների գրառումները և այլն: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել տեղական ինքնակառավարման մարմինների հետ քննարկումների, շահառուների հետ հարցազրույցների, համայնքներում գործող ոլորտային կազմակերպությունների հետ հանդիպումների կամ հարցումներ անցկացնելու միջոցով:

Ինչ վերաբերում է ԿԱԳ-ում մոր և մանկան առողջության պահպանման ազդեցությունների գնահատման առաջնահերթություններին, ապա հիվանդություններն ու մահերը մոր և մանկան առողջության պահպանման քաղաքականության հիմնական մտահոգությունն են: Դրանց թիվը, պատճառներն ու միտումները պետք է ճշտվեն: ԿԱԳ-երում քանակական գնահատումների իրականացման ամենամեծ ջանքերը պետք է ուղղվեն՝

1. առաջնային և նպաստող գործոնների բացահայտմանը,
2. տարածքներին, որտեղ մոր և մանկան հիվանդությունների ու մահերի առավել մեծ թվեր են գրանցվում,
3. պարզելուն, թե ինչն է ավելի խոցելի դարձնում այդ տարածքներում (ապագա) մայրերին և երեխաներին:

4) Բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը, ծավալը, մատչելիությունը, ֆինանսավորումը և կազմակերպումը

Բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի, ծավալի, մատչելիության, ֆինանսավորման և կազմակերպման վրա ազդեցությունների գնահատումը ներառում է ընդհանուր պատկերացում որակի ներկա վիճակի, որակի բարելավման համար առողջապահական համակարգի առկա ուժեղ կողմերի, կանխատեսվող խոչընդոտների և դրանց հաղթահարման ռազմավարության մշակման գործընթացին օժանդակող միջոցների, առողջապահության համակարգի առջև ծառայած հիմնական մարտահրավերների ու հրատապ առաջնահերթությունների, ինչպես նաև կարևոր համատեքստային գործոնների (ինչպիսիք են՝ ենթակառուցվածքները, կարողությունները և քաղաքական մթնոլորտը) ներկայիս կարգավիճակի մասին: ԿԱԳ-ը կարող է օգտագործվել կարգավորման տարբերակների մշակման և իրականացման մոտեցումների ուղղորդման համար, ինչպես նաև ներկայացվել հիմնական շահագրգիռ կողմերին՝ նրանց ներգրավվածությունը խթանելու համար: Ազդեցությունների ամբողջական գնահատումը կարող է տևել մի քանի ամիս և համատեղել մի շարք գործողություններ՝ ներառյալ շահագրգիռ կողմերի հետ համատեղ հանդիպում-քննարկումներ, ճեպագրույցների անցկացում, տարատեսակ փաստաթղթերի ուսումնասիրություն, տեղեկատվության հավաքագրման համար անհատական հարցազրույցների և ֆոկուս խմբերի անցկացում և ամփոփ հաշվետվությունների կազմում: Գործողությունների այս շրջանակը պետք է հիմնվի պետական քաղաքականության մշակումից սկսած մինչև ծառայությունների մատուցման առաջնագծում գտնվող առողջապահական ծառայություններ մատուցողների մակարդակում առկա հեռանկարների և փորձառության վրա:

Առանցքային քայլերի թվում են՝

1. ոլորտին առնչվող բոլոր համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրությունը (այդ թվում՝ առողջապահության ոլորտի քաղաքականությունը սահմանող օրենսդրության և առողջապահական համակարգի զարգացման հնգամյա ծրագրի),
2. որակին առնչվող օրենսդրության, կարգավորումների և կանոնադրությունների ուսումնասիրությունը (այդ թվում՝ լիցենզավորման պահանջների, դեղերի որակի և անվտանգության վերահսկողության և սարքավորումների ստուգման),
3. որակին առնչվող՝ կառավարության և հանրային հատվածի այլ պետական կառավարման մարմինների կողմից ընդունված փաստաթղթերի ուսումնասիրությունը (այդ թվում՝ մասնագիտական վերապատրաստման նյութերի, արձանագրությունների և ուղեցույցների, որոնք առնչվում են առողջապահական ծառայությունների որակին),
4. առողջապահական համակարգի կատարողականում որակի վերաբերյալ առկա տվյալների ուսումնասիրությունը (այդ թվում՝ հիվանդանոցների, առաջնային բուժօգնության հաստատությունների և ամբուլատոր կենտրոնների ու կլինիկաների՝ էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգից ստացված տվյալների):

Այս լայն շրջանակի տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը Հայաստանի ամբողջ տարածքի համատեքստում կարող է դժվար լինել: Սակայն, միշտ չէ, որ անհրաժեշտություն կա իրականացնելու երկար և ծախսատար գործընթացներ: Այն դեպքերում, երբ նման տվյալների հավաքագրման համար ռեսուրսները սահմանափակ են, որպես ելակետ կարող են օգտագործվել գոյություն ունեցող վերլուծությունները, որոնք արվել են առողջապահական համակարգի պլանավորման այլ կարիքների,

օրինակ՝ առողջապահության ոլորտի ազգային ռազմավարական փաստաթղթերի մշակման շրջանակներում, կամ ԿԱԳ-ի որոշ ուղղություններ կարող են համակցվել այլ նախաձեռնությունների շրջանակներում իրականացվող ոլորտային ուսումնասիրությունների հետ:

5) Բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով ապահովում, ինչպես նաև դեղերի, դեղանյութերի, դեղագործական արտադրանքի և բժշկական նշանակության ապրանքների շրջանառություն

Ընդհանուր առմամբ, պատշաճ արտադրական գործունեության կանոններին համապատասխանությունը, դեղերին առնչվող գործառույթների կարգավորումները և ստուգումները, ինչպես նաև արտադրանքի կյանքի ցիկլի ընթացքում մատակարարման շղթայի հսկողությունը պետք է ապահովեն արդյունավետ, բարձրորակ, մատչելի դեղամիջոցներ, ինչպես նաև դեղերի, դեղանյութերի, դեղագործական արտադրանքի և բժշկական ապրանքների բնականոն շրջանառություն: Սակայն, երբ վերահսկողությունն այնքան էլ արդյունավետ չէ, հիվանդները կարող են ռիսկի ենթարկվել ոչ բավարար որակի դեղամիջոցների արտադրության հետևանքով: Առանձին ապրանքների և առաջնային նյութերի գծով ռիսկերի գնահատման և արտադրության կամ բաշխման որոշակի փուլերի հետ կապված վտանգների բացահայտման համար ԿԱԳ-ի ընթացքում պետք է ձեռք բերել փաստացի ապացույցներ՝ առկա ռեսուրսների սահմաններում գործունեության արդյունավետության բարձրացման միջոցով դեղերի վերահսկողության բարելավման անհրաժեշտության վերաբերյալ: ԿԱԳ-ում կարող են ներկայացվել իրականացված փորձաքնությունների (մասնագիտական դիտարկումների) արդյունքները, ինչը թույլ կտա պատկերացում կազմել ռիսկի մասին և մեղմացնել այն հուսալի ու պատշաճ հսկողության միջոցով:

Այդպիսի փորձաքննությունները (մասնագիտական դիտարկումները) պետք է իրականացվեն համակարգված գործընթացների միջոցով, որոնք նախատեսված են ռիսկերի վերաբերյալ գիտահեն որոշումների կայացումը համակարգելու, հեշտացնելու և բարելավելու համար: Որակի ռիսկերի կառավարման (ՈՌԿ) գործընթացը պլանավորելու և նախաձեռնելու համար ձեռնարկվելիք հնարավոր քայլերը ներառում են հետևյալը.

1. սահմանել խնդրի և/կամ ռիսկի վերաբերյալ մտահոգությունը՝ ներառյալ համապատասխան ենթադրությունները, որոնք բացահայտում են ռիսկի հավանականությունը,
2. հավաքել ռիսկի գնահատման համար նախնական տեղեկատվություն և/կամ տվյալներ՝ հավանական վտանգի, վնասի կամ մարդու առողջության վրա ազդեցության վերաբերյալ,
3. որոշել ռիսկերի կառավարման գործընթացը ղեկավարողի դերակատարին և անհրաժեշտ ռեսուրսները,
4. ներկայացնել ռիսկերի կառավարման գործընթացի ժամանակացույցը, արդյունքները և որոշումների կայացման համապատասխան մակարդակը:

Դեղորայքի, դեղանյութերի, դեղագործական ապրանքների և բժշկական ապրանքների դեպքում փորձաքննությունը (մասնագիտական դիտարկումը) կարող է կիրառվել տարբեր փուլերում՝

1. արտադրանքի մշակման ընթացքում,
2. որակավորման և գրանցման ընթացքում,
3. առևտրային արտադրության ընթացքում:

Եթե այդ փուլերից որևէ մեկը կարող է ազդել կարգավորման առաջարկվող տարբերակների վրա, ապա ԿԱԳ-ը պետք է անդրադառնա նաև ՈՌԿ-ի արդյունքներին:

## 6) Բժշկական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթաց

Բժշկական կադրերի պատրաստման և վերապատրաստման վրա ազդեցությունները կարելի է տարանջատել ըստ բժշկական կադրերի պատրաստման և վերապատրաստման ծավալների, ծախսերի և օգուտների:

Առողջապահության ոլորտի ֆինանսավորման համատեքստում պատրաստման և վերապատրաստման ենթակա բուժանձնակազմի թվաքանակի գնահատումը պահանջում է հաշվի առնել ինչպես առկա կարիքները, այնպես էլ գործընթացի տնտեսական իրագործելիությունը: Բոլոր գործոնները հաշվի առնելու համար կարևոր է նաև իմանալ, թե քանի մարդ է տարեկան պատրաստվում և վերապատրաստվում, ինչ ուղղության բուժաշխատողներ են նրանք և նրանց բնութագրերը (ներառյալ կրթությունը և ստացած մասնագիտական ուսուցումը):

Ինչ վերաբերում է լրացուցիչ բուժաշխատողների պատրաստման և վերապատրաստման գծով ծախսերին, ապա, որպես կանոն, օրինակ՝ բժիշկների կրթման և վերապատրաստման տարեկան ծախսն ավելի շատ է, քան բուժքույրերինը, իսկ ավագ բուժաշխատողինը՝ ավելի շատ, քան միջին բուժաշխատողինը, միջին բուժաշխատողինը՝ ավելի շատ, քան կրտսեր բուժաշխատողինը, և այսպես շարունակ:

Բժշկական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը հանգեցնում են հետևյալ օգուտներին.

ա. համապատասխան վերապատրաստում անցած բուժաշխատողների մասնաբաժնի ավելացում՝ առողջապահական կարիքները բավարարելու համար (քանակական ցուցանիշներ՝ ընդհանուր բուժանձնակազմի թիվը կամ մասնաբաժինը, բարձր որակավորմամբ կադրերի թիվը կամ մասնաբաժինը, որոնք ավարտել են կրթությունը և ընդգրկվել աշխատաշուկայում, բարձր որակավորմամբ կադրերի թիվը կամ մասնաբաժինը, որոնք անցել են աշխատանքային մասնագիտական ուսուցում, միջին որակավորմամբ կադրերի թիվը կամ

մասնաբաժինը, որոնք ավարտել են կրթությունը և ընդգրկվել աշխատաշուկայում, միջին որակավորմամբ կադրերի թիվը կամ մասնաբաժինը, որոնք անցել են աշխատանքային մասնագիտական ուսուցում),

բ. կրթական և վերապատրաստման ծրագրերի աճ (քանակական ցուցանիշներ՝ նախորդ ուսումնական շրջանի համեմատ նոր ուսուցիչների կամ ուսանողների թվի և դիմորդների թվի տոկոսային աճ՝ ըստ ուսուցման տեսակի և մակարդակի),

գ. հմտությունների բարելավում (քանակական ցուցանիշներ՝ վերապատրաստվողների առաջադիմություն և գնահատականներ):

Բժշկական կադրերի պատրաստման և վերապատրաստման վրա ազդեցությունները գնահատելիս պետք է հաշվի առնել նաև համապատասխան հաստատությունների կարողությունները և ցույց տված արդյունքները:

Թեև կարգավորման առողջապահական ազդեցությունների գնահատման գործընթացի հիմնական քայլերը ներկայացված են առանձին-առանձին, սակայն այդ գործընթացը անընդհատ կրկնվող գործընթաց է և ներկայացված քայլերում իրականացվող գործողությունները կարող են համընկնել կամ վերանայվել յուրաքանչյուր հաջորդ քայլի ընթացքում:



#### ԳԼՈՒԽ 4

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բնապահպանական ազդեցությունների գնահատման մեթոդաբանության կիրառության ոլորտները բազմազան են, դրանք կիրառվում են տարբեր գործընթացներում, այդ թվում նաև՝ ԿԱԳ գործընթացում:

Շրջակա միջավայրի օրենսդրական ընթացիկ նախաձեռնությունների կարգավորման ազդեցության գնահատման պարագայում կիրառվում են բազմազան մեթոդաբանություններ, որոնցից ամենատարածվածները տեղ են գտել այս գլխում:

Շրջակա միջավայրի ոլորտում ազդեցությունների նշանակալիության որոշման չափորոշիչները ներառում են՝

- 1) ազդեցությունը մթնոլորտային օդի որակի վրա,
- 2) ազդեցությունը ջրային ռեսուրսների որակի և քանակի վրա,
- 3) ազդեցությունը հողերի որակի և ընդերքի օգտակար բաղադրիչների քանակի ու որակի վրա,
- 4) ազդեցությունը կլիմայի, կլիմայի փոփոխության բացասական ազդեցության մեղմման, հարմարվողականության գործընթացի վրա,
- 5) ազդեցությունը թափոնների ծավալների վրա,
- 6) ազդեցությունը կենսաբազմազանության, մասնավորապես՝ բուսական և կենդանական աշխարհի, անտառների ու լանդշաֆտների քանակի ու վիճակի վրա,
- 7) ազդեցությունը բնական պաշարների արդյունավետ, համալիր և ողջամիտ օգտագործման, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածության քանակի ու վիճակի վրա,

**8) ազդեցությունը բնության պատմամշակութային հուշարձանների քանակի ու վիճակի վրա:**

**1. Բնապահպանական ազդեցությունների քանակական վերլուծության և գնահատման մեթոդներ**

Բնապահպանական այն ազդեցությունները, որոնք ենթակա են քանակական և դրամական վերլուծության, դրանց նկատմամբ կիրառվում է քանակական կամ դրամական գնահատման սկզբունքը: Սա հաճախ տեղի է ունենում այն դեպքում, երբ բնապահպանական ազդեցությունները սահմանափակված են միայն մեկ կամ առավելագույնը երկու հատկանիշներով, օրինակ՝ օդի կամ ջրի որակ:

Ազդեցության քանակականացումը իրականացվում է կարգավորմամբ պայմանավորված փոփոխության ուղղության, հզորության և ժամանակի մեջ դրանց փոփոխության չափման միջոցով: Որոշ դեպքերում ԿԱԳ-ը կարող է տալ ազդեցության փոփոխության մոտավոր գնահատումներ, սակայն դրանք պետք է հիմնավորված լինեն փորձագիտական հենքով: Սա կարող է ներառել թե որակական (գետի ջրի որակի փոփոխություն), թե քանակական փոփոխություններ (ածխածնի արտանետումների մակարդակի փոփոխություն) կամ ռիսկի առաջացման հավանականություն (ջրհեղեղի ռիսկ):

Ընդունված թեզ է, որ եթե հնարավոր է բնապահպանական ազդեցությունը քանակականացնել, ապա այն հնարավոր է նաև արտահայտել դրամական արտահայտությամբ կամ արժևորել: Սա ենթադրում է որոշել այն գինը, որ մարդիկ վճարելու են բնապահպանական բարիք ստեղծելուն ուղղված փոփոխության դիմաց: Չնայած, որ բնապահպանական ազդեցությունները հիմնականում չեն կարող արտահայտվել շուկայական արժեքով, քանի որ ապրանք կամ ծառայություն չեն, այնուամենայնիվ, ոչ շուկայական գնահատման մեթոդներ կան, որոնց միջոցով

հնարավոր է դիտվում այդ ազդեցությունների դրամականացումը: Միևնույն ժամանակ, որոշ կարգավորումների դեպքում՝ տարբերակների բնապահպանական ազդեցությունների բոլոր տնտեսական ծախսերը և օգուտները քանակապես հաշվարկելը դյուրին գործ չէ:

Ստորև բերված Աղյուսակ 8-ում ներկայացված են ըստ բնապահպանական ազդեցության տեսակի կիրառվող գնահատման մեթոդները, որոնք լայն կիրառություն ունեն միջազգային պրակտիկայում:

**Աղյուսակ 8.**

**ԿԱԳ-ում բնապահպանական ազդեցության, դրա ընկալման և գնահատման մեթոդաբանության կապը**

ԿԱԳ-ի բնապահպանական ազդեցության առարկա	Հիմնական ցուցիչ	Բնապահպանական ընկալիչի (ռեցեպտորի) ազդեցության տեսակ	Կապը տնտեսական օգուտի հետ	Ազդեցության գնահատման հնարավոր մեթոդ
Օդ	Շրջակա միջավայրի աղտոտիչ (TSP,SO..) Կոնցենտրացիա	Շնչառական դիսկոմֆորտ կամ հիվանդություն	Գործունեության սահմանափակում /օր, աշխատանքային գործունեության սահմանափակում /օր,	Վնասի հաշվարկման մեթոդ (ՎՀՄ), Ծախս-խնայողության մեթոդ (ԾԽՄ), Պայմանական

	(ug/m2, ppm...)		առողջապահական ծախսեր, ցավեր և տառապանք	գնահատման մեթոդ (ՊԳՄ), Ազդեցության ուղիների վերլուծության եղանակ (ԱՌԻՎ)
		Շնչառական խնդիրներից առաջացող մահացություն	100 000 մարդ/մահ	Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս-խնայողության մեթոդ, Հեղոնիստական (աշխատավարձի) մեթոդ (ՀԱՄ)
		Շնչառական համակարգի օրգանների քաղցկեղ	Քաղցկեղից մահացության հավանականություն, Փրկված վիճակագրական կյանքեր (ՓՎԿ)	Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս-խնայողության մեթոդ, Պայմանական գնահատման մեթոդ (ՊԳՄ), Հեղոնիստական մեթոդ (ՀՄ)
		Ռեկրեացիա	Տեսարժան վայրեր, այդ	Ճամփորդության արժեքի

			թվում՝ պատմամշակութ- թային հուշարձաններ այցելություններ, հանգիստ	հաշվարկման մեթոդ (ՃԱՀՄ), Պայմանական գնահատման մեթոդ
		Նյութական	Շահագործման և վերանորոգման ծախսեր	Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս- խնայողության մեթոդ
		Գյուղատնտե- սություն, ձկնորսություն և մշակաբույսեր	Բերքի կամ պաշարների կորուստ	Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս- խնայողության մեթոդ
Ջուր	Շրջակա միջավայրի առաջնա- հերթ աղտոտիչ- ների կոնցենտրա- ցիաներ (ppm, ppb)	Խմելու ջրից առաջացող հիվանդություն -ներ կամ մահվան ռիսկ	Սպառման հետ կապված հիվանդություննե ր կամ մահվան ռիսկ, Փրկված վիճակագրական կյանքեր	Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս- խնայողության մեթոդ, Հեղոնիստական գույքի հաշվարկման մեթոդ (ՀԳՄ), Պայմանական

				գնահատման մեթոդ
Թունավոր նյութեր, պեստիցիդներ, վտանգավոր թափոններ	Կոնցենտրացիա և տարածման ռիսկ	Ոչ մահացու թունավորում կամ հիվանդություն	Գործունեության սահմանափակում /օր, աշխատանքային գործունեության սահմանափակում /օր, առողջապահության ծախսեր, ցավեր և տառապանք	Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս-խնայողության մեթոդ, Պայմանական գնահատման մեթոդ
		Ոչ մահացու և մահացու քաղցկեղի ռիսկ	Կյանքի փրկված վիճակագրական տարիներ (ԿՓՎՏ), Փրկված վիճակագրական կյանքեր	Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս-խնայողության մեթոդ, Հեղոնիստական աշխատավարձի հաշվարկման մեթոդ, Պայմանական գնահատման մեթոդ

		<b>Էսթետիկա</b>	<b>Վտանգի ենթարկման հեռավորություն կամ հավանականություն</b>	<b>Հեղոնիստական գույքի հաշվարկման մեթոդ</b>
		<b>Էկոհամակարգ</b>	<b>Կենսամիջավայրի կորուստ, բազմազանությա ն կորուստ, պաշարների կորուստ</b>	<b>Վնասի հաշվարկման մեթոդ, Ծախս-խնայողության մեթոդ, Պայմանական գնահատման մեթոդ</b>

Անդրադառնանք վերոնշյալ աղյուսակում բերված, ինչպես նաև այլ ազդեցությունների գնահատման մեթոդներին առավել մանրամասն ձևով.

- 1) **Վնասի հաշվարկման մեթոդ (ՎՀՄ) (Damage cost/damage function method).** Սա ենթադրում է աղտոտիչի փոփոխության ազդեցությունն՝ այն ընկալող օբյեկտի վրա: Օրինակ՝ օդի արտանետման փոփոխվող չափը մարդու առողջության կամ մշակաբույսերի վրա: Սա երկաստիճան ընթացակարգ է: Սկզբից վերցնում են բաց միջավայրից կամ լաբորատոր նմուշներ և որոշում աղտոտիչի ու ընկալիչի միջև չափաբաժին-պատասխան հարաբերակցությունը, ապա ստացված փոփոխությունը վերածում են դրամական միջոցի՝ աղտոտվածության սպասվող կրճատումներն արտահայտելով դրամական արժեքով: Այս կերպ մեթոդը բնապահպանական որակի փոփոխությունը վերածում է առողջության ռիսկերի

ծախսային հաշվարկի: Առողջության ռիսկերը հնարավոր է դրամականացնել՝ սահմանելով մահացության կամ հիվանդության արժեքային ստանդարտ նորմեր, և, դրանով իսկ, հաշվել ծախսերի նվազեցումը կամ օգուտները: Հնարավոր է նաև որպես ծախս դիտարկել միջին աշխատավարձի ցուցանիշը կամ միջին հիվանդանոցային պայմաններում բուժման արժեքը: Սրանք մոտավոր հաշվարկներ են և չեն ծածկում ազդեցության ամբողջ տիրույթը: Դրանք լրացվում են նաև պայմանական գնահատման մեթոդով և այլ մեթոդներով: Օրինակ՝ որոշ հետազոտողներ վնասը հաշվարկելու համար կիրառել են մակրո-էպիդեմիոլոգիական տվյալներ՝ կապելով օդի աղտոտվածության խտությունը մահացության մակարդակի հետ: Մահացության մակարդակը որոշվել է 100,000 բնակչության մեջ՝ 1 մարդ հաշվարկով: Կարգավորման արդյունքում օդի աղտոտվածության խտության կրճատումը հանգեցրել է մահացության փոքր մակարդակի նվազման: Երբ սա ազդեցացվում է ամբողջ բնակչության նկատմամբ, ապա ստացված արդյունքը դիտարկվում է որպես «փրկված վիճակագրական կյանքի» ցուցանիշ: Փրկված վիճակագրական կյանքի (ՓՎԿ) և Կյանքի փրկված վիճակագրական տարվա (ԿՓՎՏ) գնահատման մեթոդները նույնպես լայն կիրառություն ունեն բնապահպանական և առողջապահական ազդեցությունների գնահատման գործընթացում:

- 2) Ծախս-խնայողության մեթոդ (ԾԽՄ). Այս մեթոդը գնահատում է բնապահպանական օգուտները՝ բնապահպանական բարելավման արդյունքում արտադրության կամ տնային տնտեսությունների սպառման կրճատված ծախսերը հաշվարկելու միջոցով: Բնապահպանական ոլորտում ցանկացած որակական փոփոխություն կարող է իր ազդեցությունն ունենալ կազմակերպությունների արտադրական ծախսերի կամ տնային տնտեսությունների շահագործման և առողջապահական ծախսերի վրա, իսկ



որոշ դեպքերում էլ՝ կարող է բերել վերջնական արտադրանքի շուկայական գների փոփոխության: Այս մեթոդը ենթադրում է երկու մոտեցում.

Առաջին մոտեցմամբ՝ ազդեցություն կրած կազմակերպության արտադրական ծախսերը կնվազեն (օրինակ՝ ջրի մաքրման աշխատանքների կրճատման դեպքը), սակայն կատարված ծախսերի ու ստացված արտադրանքի դիմաց արտադրական ծավալները և շուկայական գները կմնան նույնը: Այս դեպքում օգուտը կարելի է հաշվարկել արտադրողի ստացված հավելյալ օգուտով: Այն չափվում է մինչև բնապահպանական որակի փոփոխությունը և դրանից հետո առաջացած արտադրական ծախսերում ակնկալվող տարբերությամբ: Նմանատիպ ձևով կարելի է հաշվարկել սպառողների մասով օգուտը՝ հիմք ընդունելով շահագործման և առողջապահական ծախսերի կրճատման արդյունքում ստացված հավելյալ օգուտը: Այս մոտեցման առումով ծախս-խնայողության մեթոդը արտացոլում է ազդեցություն կրած տնտեսվարող սուբյեկտի՝ բնապահպանական որակի փոփոխության ամբողջական ազդեցությունը:

Երկրորդ մոտեցմամբ՝ ազդեցություն կրած սուբյեկտների ծախսերը կրճատվում են, բայց դրա հետ միասին կարող են փոփոխվել նաև արտադրողի կողմից ներդրվող ծախսերը, արտադրական ծավալները և շուկայական գները: Մինչև փոփոխությունը և դրանից հետո կատարված ծախսերի պարզ տարբերությունը չի կարող լինել օգուտի համարժեքը: Այս դեպքում ավելի նպատակահարմար է կիրառել ՎՀ մեթոդը: Ծես մեթոդը սովորաբար կիրառելի է, երբ առաջանում է միանվագ տնտեսական փոփոխություն բնապահպանական բարելավումից հետո: Օրինակ՝ գետերի ջրի որակի բարելավումը բերում է արտադրական ջրերի մաքրման կապիտալ ծախսերի միանվագ կրճատման: Սա հեշտ հաշվարկման մեթոդ է, քանի որ դրանում օգտագործվում են վիճակագրական տվյալներ և

հենվում են եկամտի հաշվարկման ընդհանուր սկզբունքների վրա՝ առանց խորացված տնտեսագիտական վերլուծության:

### Օրինակ 21. Ծախսի խնայողության մեթոդի օրինակ

Աղտոտիչները, որոնք առաջացնում են նյութերի՝ սովորականից ավելի արագ քայքայում, հանգեցնում են ավելի բարձր վերանորոգման և պահպանման և/կամ ավելի արագ փոխարինման ծախսերի: Ուղղակի ծախսերի խնայողությունները (թե սպառողին, և թե արտադրողին առնչվող), որոնք կառաջանան աղտոտիչների կոնցենտրացիաների նվազման արդյունքում, կհանդիսանան առաջարկվող կարգավորման օգուտի չափման միջոցներից մեկը: Որոշ դեպքերում այս ծախսերի խնայողությունները կարող են ուղղակիորեն գնահատվել՝ հենվելով արդյունաբերության որոշ տեսակների դեպքում վերանորոգման և պահպանման ծախսերի վրա, բայց ամենից հաճախ անհրաժեշտ է օգտագործել ՎՀ մեթոդը՝ աղտոտվածության տարբեր մակարդակներում նյութերի վնասի չափը գնահատելու համար: Ինչպես ՎՀ մեթոդի այլ կիրառությունների դեպքում՝ չափաքանակ-արձագանք ֆունկցիան որոշվում է տվյալ աղտոտիչին և նյութի դասին առնչվող տեխնիկական կամ ինժեներական տվյալների հիման վրա: Նյութերի կրճատումից առաջացած վնասի արժեքը կկազմի վերանորոգման և սպասարկման կամ փոխարինման համար կրած ծախսերը: Շատ դեպքերում կարող է օգտագործվել վերանորոգման կամ փոխարինող միավորների շուկայական գինը:

### 3) Հեղոնիստական գնագոյացման մեթոդ (ՀԳՄ).

Հեղոնիստական գնագոյացման մեթոդը գործում է մի սկզբունքով, այն է՝ սպառողները ապրանքների և ծառայությունների իրենց գնումները համաձայնեցնում են բնապահպանական որակի տարբերությունների հետ՝ ըստ չափի, ձևի և այլ բնորոշիչների: Այսինքն՝ այն փորձում է որոշել բնապահպանական

որակի և ապրանքի շուկայական գնի անուղղակի կապը՝ հաշվարկելով բնապահպանական որակի բնորոշիչի անուղղակի գինը: Որոշ դեպքերում, այս անուղղակի գնի փոփոխությունը կարելի է դիտարկել որպես բնապահպանական որակի դիմաց անձի վճարելու ցանկությունը կամ պատրաստակամությունը (Willingness to Pay (WTP)), այլ իրավիճակներում հարկավոր է լինում հաշվարկել բնապահպանական որակի պահանջարկի ֆունկցիան (Demand function), որպեսզի ստանանք ճշգրիտ օգուտները: Մեթոդը սովորաբար կիրառվում է անշարժ գույքի գների և աշխատավարձի նկատմամբ: Օրինակ՝ անշարժ գույքի բնակարանային ոլորտում հեղոնիստական մեթոդով հաշվարկելիս տարբերակվում են հետևյալ բնորոշիչները՝ շենք, թե առանձնատուն, սենյակների թիվ, տեղանք: Անուղղակի գինը, պայմանավորված բնորոշիչի տեսակով և բնակարանի շուկայական գնով, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$p = p(b, n, q)$$

որտեղ  $b$ ՝ բնակարանի գինն է շինության կառուցվածքից կախված,  $n$ ՝ հարակից միջավայրը,  $q$ ՝ բնապահպանական որակը: Ցանկացած բնորոշիչի անուղղակի գինն այս ֆունկցիայի մասնակի ածանցյալն է տվյալ բնորոշիչին: Սպառողների դեպքում, քանի որ ընդունված է համարել, որ եկամուտները և նախընտրությունները նույնական են, ապա անուղղակի գնի ֆունկցիան կարող է օգտագործվել բնապահպանական որակի որևէ փոփոխության դիմաց ստացված օգուտների (սպառողի հավելյալ օգուտ) հաշվարկման համար:

Հեղոնիստական գնագոյացման մեթոդը օգտագործվում է նաև հաշվարկելու բնապահպանական որակի փոփոխությամբ պայմանավորված առողջության ռիսկերի կրճատումից առաջացող օգուտները՝ կիրառելով այն աշխատավարձերի վրա: Հիմնական սկզբունքն այստեղ այն է, որ աշխատավարձերը, որոնք որոշվել

են մրցունակ աշխատուժի շուկայում, արտացոլեն իրենց մեջ այն հավելավճարը, որն անհրաժեշտ կլինի աշխատողին դրդելու ավելի անբարենպաստ բնապահպանական միջավայրում աշխատելու կամ անվտանգ մասնագիտական զբաղվածություններ ունենալու համար: Հեղոնիստական աշխատավարձի մոդելը տարբերվում է հեղոնիստական բնակարանային գնագոյացման մոդելից նրանով, որ այս ֆունկցիան պարզ հավասարում է, որը արտացոլում է աշխատանքի և աշխատողի բնորոշիչների պահանջարկ-առաջարկը.

$$w = w(v, q^*, q^{**})$$

որտեղ  $w$ ՝ աշխատողի տարեկան եկամուտն է,  $v$ ՝ աշխատողի սոցիալ-կենսական տվյալներն են (տարիք, կրթություն),  $q^*$ ՝ աշխատանքի վայրի հետ կապված շրջակա միջավայրի փոփոխականն է,  $q^{**}$ ՝ աշխատանքի անվտանգության փոփոխականն է՝ կապված աշխատանքային խեղումների և մահվան ռիսկերի հետ: Այս ֆունկցիայի մասնակի ածանցյալը  $q^*$  մասով՝ աշխատավայրում բնապահպանական որակի փոփոխության անուղղակի գինն է: Հարկ է նշել, որ այս երկու հեղոնիստական մոդելները անհրաժեշտ է միաժամանակ հաշվարկել, քանի որ զբաղվածության և վայրի ընտրությունը միմյանց հետ կապված են:

Այսպիսով, հեղոնիստական հաշվարկման մեթոդը ունի թե առավելություններ, թե թերություններ: Առավելությունների շարքում են՝ անշարժ գույքի առք ու վաճառքի գների և աշխատավարձերի վերաբերյալ շուկայական տվյալների օգտագործումը, որոնք դժվար հայթայթելի տվյալներ չեն: Թերի կողմերն են՝ զգայունակությունը բնորոշիչների նկատմամբ, դրանց վերաբերյալ մասնագիտական տվյալների բացակայությունը:

#### 4) Ճամփորդության արժեքի հաշվարկման մեթոդ (ՃԱՀՄ).

Ճամփորդության արժեքի հաշվարկման մեթոդը ներառում է այն ծախսերի գնահատումը, որոնք մարդիկ կրում են ոչ շուկայական բնապահպանական ապրանքներ սպառելու համար, ինչպիսիք են՝ զբոսայգիները կամ հանգստի վայրերը:

5) Պայմանական գնահատման մեթոդ (ՊԳՄ).

Այս մեթոդի կիրառման նպատակով օգտագործվում են ուղղակի հարցումներ (հարցազրույց, հեռախոսազրույց, էլ-փոստ և այլն)՝ պարզելու բնապահպանական որակի փոփոխության անհատական նախապատվությունները: Քանի որ այս մեթոդը կախված չէ շուկայական տվյալներից, այն կարող է կիրառվել բնապահպանական որակ ներկայացնող բազմատեսակ հարցերի դեպքում: Մեթոդի հիմնական խնդիրը բնապահպանական որակի դիմաց անհատի վճարելու պատրաստակամության մակարդակի գնահատումն է: Մեթոդի հնարքներով կառուցվում և օգտագործվում է հարցումներում ձևավորված հիպոթետիկ շուկան: Մասնակիցները պատասխանում են որակի առաջարկված փոփոխությանը վերաբերող հարցերին՝ դրանով արտահայտելով դրանց դիմաց վճարելու իրենց պատրաստակամությունը: Օգուտները կարող են հստակեցվել ուղիղ հարցադրումից՝ ընդունելով կամ մերժելով հարցադրված արժեքները, կամ պարզապես հարցվողը դասակարգում է ըստ նախասիրության բնապահպանական որակի և փողի այլընտրանքային համադրումները: Համապատասխան ագրեգացիոն մեթոդներով հաշվարկվում է հարցվողների անհատական նախապատվությունների հանրագումարը, որի ամփոփումը հնարավոր է դարձնում հաշվարկել ընդհանուր սոցիալական օգուտները: Այս մեթոդի պայմանական բնույթը ստեղծում է ռազմավարական (մասնակիցների կողմից նախապատվությունների գերագնահատումը՝ նպատակ ունենալով ազդել գնահատման պրոցեսի վրա) և կառուցվածքային (պայմանական ընտրությունների մշակման գործընթաց, հարցերի կազմի ընտրություն, կառուցվածք) խնդիրներ,

որոնք կարող են ազդել օգուտների հաշվարկի ճշտության վրա: Մեթոդի կիրառությունն արդարացված է շուկայական տվյալների բացակայության դեպքերում, չնայած ունի նաև թերություններ՝ կապված դրա հիպոթետիկ բնույթի և ծախսատարության հետ:

6) Կանխարգելման վարքագծի մեթոդ (ԿՎՄ) (Averting behavior method).

Կանխարգելման վարքագծի մեթոդով հաշվարկվում են բնապահպանական որակի համար արժեքներ, որոնք ստացվում են մարդանց կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում շրջակա միջավայրի բացասական հետևանքներից խուսափելու կամ դրանք մեղմելու գործողությունների դիտարկման արդյունքում:

Նման պաշտպանական գործողությունների օրինակներ են՝ օդային և ջրային զտիչների գնումը և օգտագործումը, խմելու համար եռացրած ջրի օգտագործումը, կանխարգելիչ բժշկական օգնությունը կամ բուժումը: Վերլուծելով նման կանխարգելիչ վարքագծային գործողությունների հետ կապված ծախսերը՝ տնտեսագետները կարող են գնահատել այն արժեքը, որն անհատները ներդնում են այդ ռիսկերը չեզոքացնելու վրա:

Այս մեթոդի համար անհրաժեշտ է հավաքագրել տվյալներ, կատարել վարքագծի ուսումնասիրություններ և ստանալ տեղեկատվություն, ինչը կորոշեր ախտանիշների ծանրությունը, հաճախականությունը և տևողությունը, աղտոտման ենթարկման ազդեցությունը, վնասները կանխելու կամ մեղմելու համար ձեռնարկված գործողությունները, կանխարգելիչ միջոցառումների ծախսերը և այլ փոփոխականներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ առողջության արդյունքների վրա, ինչպիսիք են՝ տարիքը, առողջության ընթացիկ վիճակը կամ քրոնիկ հիվանդությունների առկայությունը:

7) Ազդեցության ուղիների վերլուծության եղանակը (Impact pathway method) նախատեսում է կարգավորման կոնկրետ տարբերակի մոդելավորում: Այն արտաքին գործոնների ազդեցության վերլուծության կառուցվածքային եղանակ է՝ սկսած պատճառներից մինչև առողջության և կյանքի վրա հետևանքները:

2. Բնապահպանական ազդեցություններ, որոնք հնարավոր չէ գնահատել քանակական կամ դրամական եղանակով

Շրջակա միջավայրի ազդեցությունների քանակականացումը և դրամականացումը միշտ չէ, որ հնարավոր է՝ հիմնականում տվյալներ և փաստեր հավաքագրելու անհնարինության, ազդեցության տեսակի առանձնահատկության, ժամանակի և այլ ռեսուրսների սղության պատճառով: Այդ դեպքերում կիրառվում է որակական գնահատման սկզբունքը, որը, բնականաբար, իր մեջ ներառում է նաև քանակով արտահայտված տվյալներ, սակայն դրանք, ի տարբերություն քանակական կամ դրամական գնահատման սկզբունքի, չեն ենթարկվում տնտեսական վերլուծության: Օրինակ՝ PM2.5-ի պարունակությունը քաղաքում ամենաաղտոտված օրվա ընթացքում կազմում է  $153\mu\text{g}/\text{m}^3$ , սա քանակական ցուցանիշ է, իսկ դրա վնասների վերլուծությունը՝ քանակական կամ դրամական գնահատման առարկա:

Ստորև ներկայացվում են որակական գնահատման սկզբունքները և դրանց բաղադրիչների նկարագրությունը.

### Որակական գնահատման սկզբունք

1) Ազդեցության տեսակը.

ա. ազդեցության քանակը (օրինակ՝ մասնիկների արտանետումների մակարդակը),

բ. ազդեցության որակը (օրինակ՝ գետի ջրի որակը):

2) Ազդեցության ուղղությունը.

ա. ազդեցության քանակական աճը կամ նվազումը (օրինակ՝ մասնիկների արտանետումների հոսքի մակարդակի վատթարացումը),

բ. ազդեցության որակի վատթարացումը կամ բարելավումը (օրինակ՝ ջրի որակի բարելավում):

3) Ազդեցության ժամանակավոր բնույթը.

ա. ազդեցություն, որն անմիջապես նյութականացվում է կամ դրսևորվում,

բ. ազդեցություն, որն աստիճանաբար է դրսևորվում,

գ. ազդեցություն, որը որոշ սահմանափակ ժամանակահատվածով է դրսևորվում (օրինակ՝ ազդեցությունները ծրագրի շինարարության փուլում),

դ. ազդեցությունը մշտական է և անժամկետ:

4) Ազդեցության տարածական բնույթը.

ա. տեղանքը կամ վայրը, որտեղ ազդեցությունը տեղի է ունենում:

5) Ազդեցության փոփոխության մասշտաբները.

ա. Բնապահպանական ազդեցության նշանակալիությունը հետազոտվում է առաջարկվող կարգավորման տարբերակների գիտական հիմքի խորը ընկալման միջոցով (օրինակ՝ արդյոք կարգավորմամբ պայմանավորված փոփոխությունը սահմանային է՝ համեմատած ելակետային տարբերակի հետ, կամ արդյոք այն լոկալ, տարածաշրջանային կամ միջազգային մակարդակում է):



Ահա այս սկզբունքով յուրաքանչյուր նշված ազդեցություն գնահատելուց հետո դրանք համադրվում են միմյանց հետ, և մշակվում է կարգավորման տարբերակների վնասի (ռիսկերի) և օգուտների մատրիցը: Արդյունքում՝ որոշվում է, թե որ տարբերակն է առավել նախապատվելի շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից: Տարբերակի նախապատվելիությունը վերջնականապես որոշելու համար նույն կերպ գնահատում են նաև մնացած ոլորտներում ազդեցությունները: Քանի որ խոսքը վերաբերվում է որակական գնահատման սկզբունքին, ապա դրա արդյունքները հիմնականում օգտագործվում են տարբերակների՝ բազմաչափանիշ մեթոդով համադրման գործընթացում:

### 3. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատումը

ԿԱԳ-ի ոչ շուկայական գնահատման ենթակա բնապահպանական ութ ազդեցությունների ոլորտներում բնապահպանական ազդեցությունների գնահատման մեթոդների կիրառություններն ունեն իրենց առանձնահատկությունները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով «Գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ Ա, Բ՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի, և դիտարկվում են՝ ըստ շրջակա միջավայրի օբյեկտների և բնութագրերի<sup>11</sup>:

---

<sup>11</sup> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքում դիտարկվում են շրջակա միջավայրի հետևյալ օբյեկտները և բնութագրերը.

1) մթնոլորտային օդի որակական ցուցանիշները, մթնոլորտն աղտոտող նյութերը, աղտոտվածության մակարդակը.

2) մակերևութային և ստորերկրյա ջրերը, դրանց որակի դասը, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, աղտոտվածության մակարդակը, ջրօգտագործումը, ջրահեռացումը, ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը.

## 1) Մթնոլորտային օդի որակի վրա ազդեցություն

### *ա. Ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկներ*

ԿԱԳ-ում բացահայտվում են ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների վրա առաջարկվող օրենսդրական կարգավորման ազդեցության հիմնական ուղղությունները: Օրենսդրական կարգավորումները կարող են ազդել ջերմոցային գազերի արտանետումների վրա՝ էլեկտրաէներգիայի մատակարարման (օրինակ՝ նոր

---

3) հողը՝ նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը.

4) երկրաձևաբանությունը, լանջերի թեքությունը, երկրաբանական և տեկտոնական կառուցվածքը, արտաձին երկրաբանական երևույթները, օգտակար հանածոները, ընդերքօգտագործումը.

5) ռելիեֆը, լանդշաֆտը, բնության հատուկ պահպանվող տարածքները կամ բնապահպանական հողերը, բնակավայրերի կանաչ գոտիները, կենդանիների միգրացիոն ուղիները և բնադրավայրերը.

6) բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը, կենդանական աշխարհի օբյեկտների բնակության միջավայրերը, բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերը, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, ինվազիվ՝ օտարածին, բուսական և կենդանական տեսակների, Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում կամ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված կենդանիների կամ բույսերի առկայությունը.

7) անտառները՝ դրանց գործառնական նշանակությունը, անտառների կայուն կառավարումը, տեսակային կազմը, բոնիտետը, վիճակը (կենսունակությունը, վնասատուներով վարակվածությունը, տարիքային կազմը).

8) պարմության և մշակույթի հուշարձանները, կառույցները, գերեզմանոցները, ենթակառուցվածքները, տրանսպորտային միջոցներով ճանապարհների ծանրաբեռնվածությունը.

9) թափոնի կազմը, թափոնի դասը, գործածությունը, վրանգավոր հատկությունները, վրանգավորության աստիճանը, թափոնի քանակը, ծագումը (ըստ տեխնոլոգիական կանոնակարգի).

10) ֆիզիկական ազդեցությունները՝ աղմուկը, թրթռումները (վիբրացիան), իոնացնող և ոչ իոնացնող ճառագայթումները.

11) կլիմայի փոփոխության վրա ազդեցություն ունեցող գործոնների առկայությունը, կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումները.

12) ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները.

13) սոցիալական գործոնները, ժողովրդագրական կազմն ու բնակչությունը.

14) արտակարգ իրավիճակների, պատահարների, վրանգավոր տարերային երևույթների առաջացման հավանականությունը:

էլեկտրակայանների) կամ էլեկտրաէներգիայի պահանջարկի փոփոխության պատճառով (օրինակ՝ ավելի շատ էլեկտրական մեքենաների օգտագործումը՝ ավանդական մեքենաների փոխարեն): ՋԳ արտանետումները ավելացնող կամ նվազեցնող նախագծերում պետք է կատարվեն արտանետումների փոփոխության քանակական հաշվարկներ: Այս բաժնում ներկայացվում է, թե ինչպես ԿԱԳ-ի ներքո գնահատել ՋԳ արտանետումների և էլեկտրաէներգիայի վրա կարգավորման ազդեցությունները:

Դիտարկվում են կարգավորման տարբերակներով պայմանավորված վառելիքի կամ էլեկտրաէներգիայի օգտագործման փոփոխությունները: Կարգավորման տարբերակներում հիմնականում էլեկտրաէներգիայի օգտագործումը ներառված է ընդհանուր, լայն ազդեցությունների շրջանակի ներքո: Էլեկտրաէներգիայի ընդհանուր օգտագործումը և ջերմոցային գազերի արտանետումները կարող են հաշվարկվել քանակական եղանակով և գնահատվել ու ներառվել այլ ծախսերի ներքո՝ կատարելով հետևյալ հինգ քայլերը՝

1. էլեկտրաէներգիայի օգտագործման քանակական հաշվարկ,
2. էլեկտրաէներգիայի օգտագործման սոցիալական ծախսի գնահատում,
3. էլեկտրաէներգիայի օգտագործումը ջերմոցային գազերի արտանետումների փոխարկում,
4. ՋԳ արտանետումների ծախսային հաշվարկ,
5. արտանետումների գնահատում (ամբողջ հասարակության համար):

Հինգ վերոշարադրյալ փուլերի հաշվարկն իրականացվում է հետևյալ տրամաբանությամբ.

1. էլեկտրաէներգիայի օգտագործման քանակական հաշվարկը կարող է իրականացվել պետական վիճակագրության տվյալների հիման վրա՝ յուրաքանչյուր տարվա ընթացքում վառելիքի կամ էլեկտրաէներգիայի սպառումը

հաշվարկելու համար, ընդ որում՝ փոփոխությունները հաշվարկվում են մեզավատ ժամերով (ՄՎտ/ժ):

2. Էլեկտրաէներգիայի օգտագործման սոցիալական ծախսը կարող է արտահայտվել որպես վառելիքի սպառման և երկարաժամկետ փոփոխական ծախսի ֆունկցիա: Երկարաժամկետ փոփոխական ծախսն արտացոլում է էլեկտրաէներգիայի արտադրության և մատակարարման ծախսերը, որոնք տատանվում են՝ կախված մատակարարվող էլեկտրաէներգիայի ծավալից: Դրանք տարբեր են՝ կախված վառելիքի տեսակից, մատակարարվող տնտեսության ոլորտից և վառելիքի գերակշռող գներից: Յուրաքանչյուր տարի վառելիքի օգտագործումը բազմապատկելով այդ վառելիքի երկարաժամկետ փոփոխական ծախսով կստանանք դիտարկվող ժամանակահատվածի համար վառելիքի օգտագործման սոցիալական արժեքը.

Էլեկտրաէներգիայի սոցիալական ծախս = վառելիքի սպառում \* երկարաժամկետ փոփոխական ծախս

3. Այնուհետև էլեկտրաէներգիայի օգտագործումը պետք է վերածվի ՋԳ արտանետումների: Էլեկտրաէներգիայի օգտագործումից բխող ՋԳ արտանետումների քանակական հաշվարկը կարող է իրականացվել հետևյալ կերպ.

$\text{ՋԳ} = \text{վառելիքի սպառում} * \text{արտանետումների գործակից}$

Վերածված ՋԳ չափման դեպքում այս բանաձևը հաշվի է առնում էլեկտրաէներգիայի փոփոխությունները, նույն կերպ, ինչպես վերը նշված առաջին քայլում: Մեկ միավոր վառելիքի այրումից ջերմոցային գազերի արտանետումների քանակը գնահատելու համար օգտագործվում է արտանետումների գործակիցը: Այս քայլը ենթադրում է ՋԳ արտանետումների ծախսային հաշվարկ: ԿԱԳ-ում ջերմոցային գազերի արտանետումների հնարավոր ազդեցությունը արտահայտվում է ընդհանուր միավորներով: Ստանդարտ մոտեցումն այն

արտահայտելն է համարժեք տոննա ածխածնի երկօքսիդի տեսքով (tCO<sub>2</sub>e): Ածխածնի երկօքսիդը (CO<sub>2</sub>) օգտագործվում է որպես ընդհանուր միավոր, քանի որ այն ամենաշատ տարածված ջերմոցային գազն է: Ստանդարտ միավորը համարժեք տոննա (tCO<sub>2</sub>e) կամ կիլոգրամ (kgCO<sub>2</sub>e) ածխածնի երկօքսիդն է:

$$\text{ՋԳ գծով ծախս} = \text{ՋԳ (kgCO}_2\text{e)} * \text{ածխածնի արժեք}$$

Էլեկտրաէներգիայի պահանջարկի փոփոխության հաշվարկի համար կիրառվում է սպառման վրա հիմնված երկարաժամկետ սահմանային արտանետումների գործակիցը: Գեներացման վրա հիմնված արտանետումների գործոնները օգտագործվում են միայն էլեկտրաէներգիայի արտադրության, այլ ոչ թե էներգիայի պահանջարկի հաշվարկի համար:

4. Ծրագրի կամ կարգավորմամբ առաջարկվող տարբերակի արդյունքում ՋԳ արտանետումների փոփոխությունը (չափված tCO<sub>2</sub>e-ով) վերը նշված քանակական եղանակով գնահատելուց հետո, արտանետումներին տրվում է դրամական արժեք: ՋԳ արժեքները հիմնված են մեկ միավոր ածխածնի արտանետման կրճատման տնտեսական արժեքի վրա: Հաշվարկելով համապատասխան ԿԱԳ-ի հետ կապված ածխածնի մեկ տոննայի համար համարժեք դրամական արժեքը՝ կարելի է ստանալ կարգավորումից բխող ածխածնի անուղղակի գինը: Ածխածնի գնի նման հաշվարկի նպատակը, որը հայտնի է որպես «ածխածնի անուղղակի գին» կամ «ածխածնի սոցիալական արժեք» հասկացությամբ, տարբեր կարգավորումների ներքո կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված քայլերի գնահատման համար ընդհանուր մոտեցում ձևավորելն է: Ածխածնի սոցիալական ծախսը սահմանելու համար կարող են կազմել համապատասխան աղյուսակներ: Դրանց հիմքում կարող են ընկած լինել Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների մասին՝ ըստ տարիների ոլորտային տվյալները: Մեկ տոննա ածխածնի արժեքները տատանվում են 483 ՀՀ դրամից (Լեհաստանում) մինչև 66,206 ՀՀ դրամ (Շվեդիայում):

**Օրինակ 22. ՋԳ արտանետումների հաշվարկի օրինակ**

Դիցուք, Կառավարությունն իրականացնում է էներգաարդյունավետ էլեկտրական սարքերի (սարքավորումներ, լամպեր, ռադիատորներ և այլն) վերաբերյալ էներգետիկ օրենսդրական նախաձեռնության ԿԱԳ: Ակնկալվում է, որ դրա արդյունքում էլեկտրաէներգիայի օգտագործումը տարեկան կկրճատվի 15 ԳՎտ/ժ-ով: Էլեկտրաէներգիայի պահանջարկի կրճատումների հաշվարկն իրականացվել է ըստ տարիների՝ 2022-ից 2050 թվականների համար: ԿԱԳ-ը գնահատում է արտանետումների կրճատման արժեքը՝ կիրառելով ածխածնի արժեքներն՝ ըստ ստորև ներկայացված աղյուսակի:

**ՋԳ արտանետումների հաշվարկի օրինակ**

	<i>Միավոր</i>	<i>2022</i>	<i>2023</i>	<i>...</i>	<i>2050</i>
<b>Էլեկտրաէներգիայի պահանջարկի կրճատում</b>	<i>ԳՎտ/ժ</i>	<i>-15</i>	<i>-15</i>	<i>...</i>	<i>-15</i>
<b>Սահմանային արտանետումների գործակից</b>	<i>tCO2e/ ԳՎտ/ժ</i>	<i>269</i>	<i>255</i>	<i>...</i>	<i>7</i>
<b>Ընդհանուր արտանետումների խնայողություն</b>	<i>tCO2e</i>	<i>4035</i>	<i>3.825</i>	<i>...</i>	<i>103</i>

Ածխածնի գին*	ՀՀ դրամ/ tCO2e	974	974	...	974
ԶԳ խնայողությունների արժեք (չզեղչված)	ՀՀ դրամ	3 930 090	3 725 550	...	100 322

\* Ընդունելով ածխածնի գինը 974 ՀՀ դրամ/tCO2e (ածխածնի միասնական գին, ներկայումս Հայաստանում չի գործում):

***բ. Մթնոլորտային օդի որակի վրա ազդեցության գնահատումը վնասի հաշվարկման մեթոդով***

Մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունները կարևոր նշանակություն ունեն, քանի որ օդի աղտոտվածությունը կարող է էական ազդեցություն ունենալ մարդու առողջության, կենդանիների, մշակաբույսերի և բանջարեղենի տեսակների (ներառյալ բերքի) վրա: Մթնոլորտային օդի որակի վրա կարգավորման տարբերակի ազդեցությունը կարող է գնահատվել վնասի արժեքի հաշվարկի մեթոդով, որի դեպքում արտանետումների փոփոխությունները բազմապատկվում են դրա մեկ միավորի արժեքով: Այն կարող է կիրառվել առողջության և/կամ մշակաբույսերի վրա օդի աղտոտվածության փոփոխությունների ազդեցությունը գնահատելու համար: Վնասի արժեքը՝ տարբեր աղտոտիչների արտանետումների փոփոխության հետ կապված ծախսի գնահատումն է: Այն հաշվարկվում է տարեկան կտրվածքով և բազմապատկվում տարիների քանակով, որոնց նկատմամբ կիրառվում է:

Այս մեթոդը համեմատաբար պարզ միջոց է օդի աղտոտվածության փոփոխությունները գնահատելու համար: Միևնույն ժամանակ, մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունների ամբողջական մոդելավորումը կարող է լինել

ժամանակատար և ծախսատար (կարող է պահանջվել նաև արտաքին փորձաքննություն): Վնասի արժեքը տարբեր աղտոտիչների արտանետումների փոփոխության սոցիալական ծախսի գնահատական է:

Վնասի արժեքի հաշվարկման մեթոդը նախատեսում է հետևյալ հինգ քայլերը՝

1. արտանետումների փոփոխությունների բացահայտում և քանակականացում,
2. վնասի արժեքի որոշում,
3. վնասի արժեքի բարձրացում տարեկան 2%-ով,
4. օդի աղտոտվածության կանխարգելման արդյունքում ստացված օգուտների գնահատում՝ տարեկան կտրվածքով,
5. օդի աղտոտվածության նվազեցման արդյունքում ստացվող ընդհանուր զուտ օգուտների հաշվարկ:

1. Առաջին քայլն ընդգրկում է կարգավորմամբ պայմանավորված գործունեության փոփոխության արդյունքում արտանետումների վրա ազդեցության գնահատումը: Գործունեության և դրա արդյունքում շրջակա միջավայրի աղտոտման միջև կապը կոչվում է «արտանետումների գործոն»: Օրինակ՝ օդանավերի մասով արտանետումների գործոնն օդանավի անցած յուրաքանչյուր մղոն տարածության վրա առաջացող աղտոտվածության քանակն է: PM10 (կոշտ մասնիկների) արտանետումները հաշվարկում և վերածվում են PM2.5 արտանետումների, այնուհետև դրամայնացվում են՝ ըստ PM2.5 վնասի արժեքների:

2. Կախված կարգավորման առաջարկվող տարբերակի տեսակից՝ ԿԱԳ-ում կարող են օգտագործվել վնասի տարբեր արժեքային մեծություններ: ԿԱԳ-ի հաշվարկները կարող են իրականացվել ըստ յուրաքանչյուր ոլորտում վնասի արժեքի: Օրինակ՝ դա կարող է լինել ազոտի օքսիդի միջին արժեքը գյուղատնտեսությունում:



3. Վնասի արժեքը յուրաքանչյուր տարվա համար ավելացվում է 2%-ով՝ սկսած այն ելակետային տարվանից, երբ կարգավորումը ուժի մեջ է մտնում: Հաշվի է առնվում ՀՆԱ-ի աճին զուգահեռ մթնոլորտային օդի որակի և առողջության բարելավման համար վճարվող գումարի ավելացումը: Հետևաբար, տարեկան աճն արտացոլելու համար արժեքը բազմապատկվում է 2% աճի գործակցով:
4. Գնահատման յուրաքանչյուր տարվա համար արտանետումների փոփոխության ազդեցությունը հաշվարկելու համար կիրառվում է վնասի արժեքի ճշգրտված ցուցանիշը: Տարեկան օգուտը ստանալու համար 1-ին քայլից արտանետումների թվերի ակնկալվող փոփոխությունը (տոննայով) բազմապատկվում է վնասի արժեքի՝ 3-րդ քայլով ճշգրտված ցուցանիշով:
5. Մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցման տարեկան զուտ օգուտները գնահատելու համար հաշվարկվում է ընդհանուր օգուտների և ծախսերի տարբերությունը և արդյունքում ստացված զուտ օգուտը դիսկոնտավորվում է (10%):

**Օրինակ 23. Լուծիչ նյութերի քանակի կրճատման կարգավորում**

Ենթադրենք՝ Կառավարությունն իրականացնում է մի շարք ապրանքների մեջ լուծիչների քանակի կրճատման վերաբերյալ ԿԱԳ: Ակնկալվում է, որ լուծիչների քանակի կրճատումը կնվազեցնի ազոտի օքսիդի արտանետումները: ԿԱԳ-ը գնահատում է այս կարգավորմամբ առաջարկով տարբերակի ազդեցությունը 10 տարվա ժամանակահատվածի համար: Ակնկալվում է, որ այն կնվազեցվի ազոտի օքսիդի արտանետումները տարեկան 5 տոննայով՝ մինչև 2025 թվականը և տարեկան 2 տոննայով՝ 2025 թվականից հետո:

Այս կարգավորման զուտ օգուտները գնահատելու համար կիրառվում է վնասի արժեքի հաշվարկման մեթոդն, ըստ որի.

1. Որոշվում են արտանետումների փոփոխությունները և քանակականացվում. ստորև բերված աղյուսակում ներկայացվում և քանակականացվում են արտանետումների փոփոխությունները, որոնք ակնկալվում են կարգավորման արդյունքում:

**Կարգավորման արդյունքում ազոտի օքսիդի արտանետումների կրճատում**

	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032
Ազոտի օքսիդի արտանետումների կրճատում (տոննա)	5	5	5	2	2	2	2	2	2	2	2

2. Որոշվում է, թե որ վնասի արժեքային մեծությունները պետք է օգտագործել հաշվարկում՝ օգտագործելով ազոտի օքսիդի արտանետումների վնասի արժեքային մեծությունները:

**Ազոտի օքսիդի արտանետումներից առաջացող վնասի ծախսերը**

	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031	2032
Ազոտի օքսիդի արտանետումների կրճատում (տոննա)	5	5	5	2	2	2	2	2	2	2	2
Ազոտի օքսիդի արտանե-	453	453	453	453	453	453	453	453	453	453	453

տումներից բխող ծախս (հազար ՀՀ դրամ)											
--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

3. Վնասի արժեքի բարձրացում տարեկան 2%-ով. ԿԱԳ գնահատման ժամանակահատվածը սկսվում է 2022 թվականին: Վնասի արժեքը 2023 թվականից տարեկան ավելանում է 2%-ով: Դա համարժեք է վնասից բխող վերահաշվարկված ծախսերը աճող գործոններով (գործակիցներով) բազմապատկելուն:

Վնասի արժեքի բարձրացման արդյունքում ստացվող ծախսեր

	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Ազոտի օքսիդի արտանետումների կրճատում (տոննա)	5	5	5	3	3	3	3	3	3	3
Ազոտի օքսիդի արտանետումներից վնասի ծախս (հազար ՀՀ դրամ)	453	453	453	453	453	453	453	453	453	453
Ազոտի օքսիդի արտանետումներից վնասի ծախսի տարեկան աճ	453	462	471	481	490	500	510	520	531	541

(հազար ՀՀ դրամ)										
-----------------	--	--	--	--	--	--	--	--	--	--

4. Յուրաքանչյուր տարվա համար օդի աղտոտվածության կանխարգելման արդյունքում ստացված օգուտների գնահատում. վնասի բարձրացված արժեքի մեծությունները բազմապատկվում են 2022-2031 թվականների ընթացքում արտանետումների (տոննա) փոփոխությունով:

**Ընդհանուր օգուտներ**

	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Ազոտի օքսիդի արտանետումների կրճատում (տոննա)	5	5	5	3	3	3	3	3	3	3
Ազոտի օքսիդի արտանետումներից վնասի ծախս (հազար ՀՀ դրամ)	453	453	453	453	453	453	453	453	453	453
Ազոտի օքսիդի արտանետումներից վնասի ծախսի տարեկան աճ (հազար ՀՀ դրամ)	453	462	471	481	490	500	510	520	531	541
Ընդհանուր օգուտներ (հազար ՀՀ դրամ)	2265	2310	2357	1442	1471	1500	1530	1561	1592	1624

5. Օդի աղտոտվածության նվազեցման արդյունքում ստացված ընդհանուր զուտ օգուտների հաշվարկ. ընդհանուր օգուտների և ծախսերի միջև տարբերությունը

հաշվարկվում է համաձայն ստորև բերված աղյուսակի: Այս աղյուսակների բոլոր արժեքները դիսկոնտավորված չեն:

**Չուտ օգուտներ**

	2022	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030	2031
Ազոտի օքսիդի արտանետումների կրճատում (տոննա)	5	5	5	3	3	3	3	3	3	3
Ազոտի օքսիդի արտանետումներից վնասի ծախս (հազար ՀՀ դրամ)	453	453	453	453	453	453	453	453	453	453
Ազոտի օքսիդի արտանետումներից վնասի ծախսի տարեկան աճ (հազար ՀՀ դրամ)	453	462	471	481	490	500	510	520	531	541
Ընդհանուր օգուտներ (հազար ՀՀ դրամ)	2265	2310	2357	1442	1471	1500	1530	1561	1592	1624
<b>Չուտ օգուտներ (հազար ՀՀ դրամ)</b>	<b>1812</b>	<b>1848</b>	<b>1885</b>	<b>961</b>	<b>981</b>	<b>1000</b>	<b>1020</b>	<b>1041</b>	<b>1062</b>	<b>1083</b>

Վերը բերված աղյուսակի վերջին տողից, որը ներկայացնում է չդիսկոնտավորված զուտ օգուտները, կարելի է հաշվարկել Չուտ ներկա արժեքը (NPV)՝ կիրառելով դիսկոնտավորման համապատասխան տոկոսադրույք և գումարելով 2022-2031 թվականների ընթացքում բոլոր զուտ օգուտները:

**գ. Մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունների գնահատում՝ ազդեցության ուղիների վերլուծության եղանակով**

**Ազդեցության ուղիների վերլուծությունը ենթադրում է չորս հետևյալ քայլերը՝**

1. Օդի աղտոտիչների արտանետումների ցրման (դիսպերսիայի) մոդելավորում. 1-ին քայլով գնահատվում է, թե ինչպես են օդի աղտոտվածության արտանետումների փոփոխությունները, որոնք բխում են կարգավորման տարբերակից, վերածվում կոնցենտրացիաների փոփոխության: Գոյություն ունեն դիսպերսիայի մի շարք մոդելներ: Դիսպերսիայի մոդելավորման համար մուտքային տվյալները՝ ներառյալ արտանետումների և օդերևութաբանական տվյալները, հասանելի են տվյալների տարբեր շտեմարաններում:

Համակցելով մոդելի միջոցով հաշվարկված կոնցենտրացիայի գնահատականները բնակչության թվի տվյալների հետ՝ հնարավոր է ստանալ բնակչության թվով կշռված յուրաքանչյուր աղտոտիչի համար միջին կոնցենտրացիան:

Արտանետումների և կոնցենտրացիաների ազդեցության միջև միջին կապը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\overline{E\lambda}[Exp] = \frac{\bar{\lambda} x P_{\lambda}}{E_{Tot}(\lambda)}$$

որտեղ  $\bar{\lambda} x P_{\lambda}$ -ն բնակչության թվով կշռված  $\lambda$  և  $E_{Tot}(\lambda)$  աղտոտիչի միջին արժեքն է, իսկ  $E_{Tot}(\lambda)$ -ն  $\lambda$  աղտոտիչի տարեկան ընդհանուր արտանետման քանակն է: Սա հանդիսանում է «ազգային» մակարդակով վնասի արժեքի նախահաշվարկի հիմքը:

Տրվում են նաև տնտեսության տարբեր ոլորտների և տեղանքների տեսակների համար արժեքները, քանի որ որոշակի աղբյուրներից արտանետումների արդյունքում առաջացող կոնցենտրացիաների ազդակիր ազգաբնակչության թվերը տարբեր են: Օրինակ՝ արտանետումները քաղաքների կենտրոններում

ազգաբնակչության վրա ավելի մեծ ազդեցություն կունենան, քան գյուղական վայրերում արտանետումները:

2. Տարբեր վայրերում շրջակա միջավայրի աղտոտիչների կոնցենտրացիաների փոփոխությունների գնահատում. արդյունքների փոփոխությունները գնահատվում են 1-ին քայլի արդյունքների հիման վրա (այսինքն՝ բնակչության կշռված կոնցենտրացիայի փոփոխությունները գնահատվում են դիսպերսիոն մոդելավորման միջոցով): Արդյունքների փոփոխությունները ներառում են շրջակա միջավայրի, ինչպես նաև հանրային առողջության և տնտեսության վրա ազդեցությունները: Կոնցենտրացիաների արձագանքման ֆունկցիաները թույլ են տալիս կոնցենտրացիաների փոփոխությունները վերածել ազդեցությունների: Այդ ֆունկցիաներն արտահայտում են արդյունքների փոփոխությունները մեկ միավորի կոնցենտրացիաներում (չափված միկրոգրամներով մեկ խորանարդ մետրում՝  $\mu\text{g}/\text{m}^3$ ): Օրինակ՝  $1 \mu\text{g}/\text{m}^3$  մասնիկների միջին կշռված կոնցենտրացիայի աճը հանգեցնում է որոշակի հիվանդության դեպքերի 5%-ով աճի:
3. Առողջության, տնտեսության և շրջակա միջավայրի հետ կապված ազդեցության տարբեր ուղիների վրա կոնցենտրացիաների փոփոխությունների գնահատում. կենսամիջավայրի, հանրային առողջության և տնտեսության վրա ազդեցության արդյունքների ցանկը կարող է ներառել, օրինակ՝ առողջության վրա ազդեցությունների համար՝ քրոնիկ հիվանդություններից մահացություն, սուր հիվանդություններից մահացություն, շնչառական հիվանդություններով հոսպիտալացում, սրտանոթային հիվանդություններով հոսպիտալացում, սրտի կորոնար հիվանդություն, ինսուլտ, թոքերի քաղցկեղ, ասթմա, քրոնիկ բրոնխիտ և դիաբետ, շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մասով՝ շենքերին ծծմբի երկօքսիդի պատճառած վնասը, օզոնի՝ նյութերին պատճառած վնասը, շենքերի աղտոտումը կոշտ մասնիկներով՝ էկոհամակարգի վնասների պատճառով, իսկ տնտեսական ազդեցությունների մասով՝ արտադրողականությունը:

4. Նշված ազդեցությունների գնահատումը միասնական դրամական չափման միավորով.աղտոտիչի արտանետման միավոր փոփոխության ֆիզիկական ազդեցությունները որոշելուց և քանակականացնելուց հետո վերջին քայլը յուրաքանչյուր ազդեցության դրամայնացումն է:

2) Ջրային ռեսուրսների վրա քանակական և որակական ազդեցություն

Շենքերի կամ շինարարական աշխատանքների փոփոխությունների հետ կապված օրենսդրական կարգավորումները կարող են ազդեցություն ունենալ ջրի օգտագործման, ջրի որակի և ջրհեղեղի վտանգի վրա: Օրինակ՝ տրանսպորտային ոլորտի կարգավորումները կարող են հանգեցնել սոցիալական ծախսերի, դրա վառ օրինակն է, երբ աղտոտված ջուրը հոսում է նոր ճանապարհներից դեպի տեղական ջրահոսքեր, բնակարանաշինությունը կարող է ազդեցություն գործադրել տեղական ջրամատակարարումների վրա, իսկ նոր տեսակի էլեկտրակայանները կարող են մեծացնել քաղցրահամ ջրառը՝ ի վնաս տեղական բնական ռեսուրսների: Այս հանգամանքներում ջրի կամ ջրհեղեղների ազդեցությունները պետք է դիտարկվեն և գնահատվեն՝ որպես ԿԱԳ-ի մաս:

Հայաստանում՝ ըստ դիտակետերի և տարիների ջրի որակի ցուցանիշների ԿԱԳ վերլուծության համար օգտագործվում են հետևյալ աղբյուրները.<sup>12</sup>

ա. լճեր, ջրամբարներ,

բ. սնուցիչներ քաղցրահամ ջրերում՝ ստորերկրյա ջրերում,

գ. գետեր,

Ջրային ռեսուրսների որակի և քանակի վերաբերյալ տվյալների առկա աղբյուրներն են<sup>12</sup>.

<sup>12</sup> <https://armstatbank.am/pxweb/en/ArmStatBank>



ա. Աղտոտված կեղտաջրերը (չմաքրված և ոչ բավարար մաքրված կեղտաջրեր)՝ ըստ տարիների,

բ. Բնակչության ապահովվածությունը կեղտաջրերի մաքրման սարքերով՝ ըստ ցուցանիշների և տարիների,

գ. Կեղտաջրերի մաքրման կառուցվածքն՝ ըստ ցուցանիշների և տարիների,

դ. Քաղցրահամ ջրերի ջրառը (մակերևութային և ստորերկրյա ջրեր)՝ ըստ ցուցանիշների և տարիների,

ե. Քաղցրահամ ջրերի ջրառն՝ ըստ ՏԳՏԴ և տարիների,

զ. Ջրօգտագործումն՝ ըստ ՏԳՏԴ և տարիների,

է. Կենցաղային ջրօգտագործումը մեկ շնչի հաշվով՝ ըստ ցուցանիշների և տարիների,

ը. Կենտրոնացված ջրամատակարարում՝ ըստ նպատակների և տարիների,

թ. Բնակչության մատչելիությունը կենտրոնացված ջրամատակարարման համակարգին՝ ըստ ցուցանիշների և տարիների,

ժ. Ջրերի կորուստն՝ ըստ ՏԳՏԴ և տարիների,

ի. Խմելու ջրի որակն՝ ըստ ջրամատակարարման տեսակի, տարիների և ցուցանիշների:

### 3) Հողի որակական և ընդերքի օգտակար բաղադրիչների քանակական ու որակական ազդեցություն

ԿԱԳ-ում, որտեղ կարգավորման տարբերակները կապված են կառուցապատման կամ շինարարական աշխատանքների հետ, ազդեցությունները հողի որակի և ընդերքի օգտակար բաղադրիչների քանակի ու որակի վրա կարող են գնահատվել՝ անդրադառնալով հետևյալ հարցերին.

ա. «արդյո՞ք տարբերակն ազդում է հողի թթվայնության, աղիության/աղակալման, բերրիության, աղտոտման և էրոզիայի մակարդակի վրա,

բ. արդյո՞ք այն հանգեցնում է առկա հողի կորստի (օրինակ՝ կառուցապատման կամ շինարարական աշխատանքների հետևանքով) կամ մեծացնում է օգտագործելի հողի քանակը (օրինակ՝ հողի մաքրման միջոցով):

Հայաստանում հողի հետ կապված առկա տվյալների բազաներն են<sup>13</sup>

ա. Պարարտանյութի սպառումն՝ ըստ ցուցանիշների և տարիների,

բ. Թունաքիմիկատների սպառումն՝ ըստ ցուցանիշների և տարիների:

Հողօգտագործման փոփոխությունները կարող են հանգեցնել հողի արժեքի փոփոխության, որը ԿԱԳ-ի դիտարկման առարկա է: Հողի արժեքի հաշվարկը կարգավորման ազդեցությունը հաշվարկելու գործնական եղանակ է, որով մեկ առ մեկ գնահատվում են արժեքի փոփոխության պատճառ դարձած բոլոր գործոնները (օրինակ՝ հարմարությունը, քաղաքային կենտրոններին մոտ լինելը, քաղաքաշինական թույլտվությունները և տրանսպորտային կապը):

Կարգավորման տարբերակները առաջացնում են հողօգտագործման փոփոխություններ և մի շարք արժեքային հետևանքներ.

1. Մասնավոր օգուտներ (հողամասերի սեփականատերերի համար)՝ կապված հողօգտագործման փոփոխության հետ:

Հողի արժեքն աճում է դրա ավելի արդյունավետ օգտագործման արդյունքում, օրինակ՝ երբ կարգավորման շնորհիվ այն առևտրային կամ բնակելի է դառնում:

Հողի արժեք կարգավորման տարբերակ Ա = Հողի արժեք (նոր օգտագործում) - Հողի արժեք (ներկա)

<sup>13</sup> <https://armstatbank.am/pxweb/en/ArmStatBank>

2. Հողօգտագործման փոփոխության հետ կապված կորուստներ կամ օգուտներ հասարակության համար:

Կարգավորումը կարող է առաջացնել այնպիսի զարգացումներ, որոնք հասարակության մեջ ունեն զուտ արտաքին ազդեցություններ, ինչպիսիք են՝ հարմարությունների կորուստը կամ աճը, տրանսպորտային ծախսերը, առողջապահության կամ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, հողօգտագործման արժեքի փոփոխությունները և այլն:

ԿԱԳ իրականացնելիս՝ հողի արժեքներն օգտագործելու համար կարևոր է լավ պատկերացնել հողի գինը որոշող գործոնները: Մասնավոր՝ օգուտը կամ Ջարգացման համախառն արժեքը (ՋՀԱ). գնահատված ընդհանուր եկամուտն է, որը կարող է ստացվել զարգացումից.

$$\text{ՋՀԱ} = \text{տների գներ} * \text{տների քանակ}$$

Հողի գնահատման մնացորդային եղանակով սահմանվում է առավելագույն գինը (առևտրային), որը վճարվում է հողի համար զարգացման ծախսերը և շահույթի նվազագույն մակարդակը հաշվառելուց հետո.

$$\text{Հողի գին} = \text{ՋՀԱ} - (\text{զարգացման ծախսեր} + \text{վճարներ} + \text{շահույթ})$$

Ընդհանուր առմամբ, հողի գինը դա հողի այն արժեքն է, որն առաջացել է դրա նոր օգտագործման (ՋՀԱ) հետևանքով՝ հանած ակնկալվող զարգացման ծախսերը և նվազագույն պահանջվող շահույթը:

ԿԱԳ-ի համատեքստում հողի նոր և նախկին արժեքների տարբերությունը կազմում է զարգացման զուտ մասնավոր օգուտները: Այն տարածքի վերջնական արժեքն է՝ հանած կառուցապատման ծախսերը և հողի «նախկին» օգտագործման արժեքը: Հողօգտագործման փոփոխության արդյունքում առաջացող արժեքի ցանկացած աճ արտացոլում է հողի ավելի արդյունավետ

օգտագործման առավելությունները: Օգտագործման փոփոխության ողջ արժեքը հասարակության համար գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ավելի լայն մասշտաբի ազդեցությունները:

**Օրինակ 24. Հողի արժեքի հաշվարկման օրինակ**

Դիտարկենք մի դեպք, երբ կառավարության կողմից իրականացվող ԿԱԳ-ն առնչվում է հողի վարակազերծման/ախտազերծման խնդրին: Ըստ ԿԱԳ-ի՝ ընդհանուր առմամբ ախտազերծման ենթակա հողը գնահատվում է 50 հեկտար: Ախտազերծումը նաև հնարավորություն է տալու նոր ձեռնարկություններին բարձրացնել տնտեսական արտադրողականությունը: Ախտազերծման օգուտները կարող են գնահատվել հողօգտագործման փոփոխության շնորհիվ՝ հողի արժեքի փոփոխությամբ: Առկա են տվյալներ հողի ընթացիկ արժեքի և վերականգնումից հետո հնարավոր արժեքի վերաբերյալ:

**Հողի արժեքի հաշվարկներ**

Փոփոխվող մեծություններ	Չափման միավոր	Արժեք
Ընդհանուր աղտոտված հող	հեկտար	50
Ներկա հողօգտագործման արժեքի հաշվարկ	ՀՀ դրամ/հա	200 000 000

Ապագա հողօգտագործման արժեքի հաշվարկ	ՀՀ դրամ/հա	1 000 000 000
Հողի արժեքի բարձրացում՝ կարգավորման շնորհիվ	ՀՀ դրամ/հա	800 000 000
Ընդհանուր հողի արժեքի բարձրացում՝	ՀՀ դրամ	40 000 000 000
Ավելի լայն սոցիալական օգուտներ	ՀՀ դրամ	6 000 000 000
Ընդհանուր օգուտներ	ՀՀ դրամ	46 000 000 000
Ախտազերծման համար ծախս	ՀՀ դրամ/հա	600 000 000
Ընդհանուր ծախսեր	ՀՀ դրամ	30 000 000 000
Կարգավորման տարբերակից զուտ ներկա արժեք	ՀՀ դրամ	16 000 000 000

Հողի արժեքը (ապագա օգտագործման) հաշվարկվում է հետևյալ եղանակով.

$$\begin{aligned} \text{Հողի գին} &= \text{Հողի մշակման համախառն արժեք} - (\text{հողի մշակում} + \text{վճարներ} + \text{շահույթ}) \\ &= (\text{տների գներ} * \text{տների քանակ}) - (\text{հողի մշակում} + \text{վճարներ} + \text{շահույթ}) = 1\,000\,000\,000 \end{aligned}$$

ՀՀ դրամ/հա:

Կարգավորման տարբերակի արդյունքում հողի արժեքի բարձրացումը հաշվարկվում է հետևյալ եղանակով.

Հողի արժեքը կարգավորման տարբերակ Ա = Հողի արժեք (ապագա օգտագործում) - հող (ներկա օգտագործում) = (1 000 000 000 - 200 000 000) ՀՀ դրամ/հա = 800 000 000 ՀՀ դրամ/հա:

Ավելի լայն սոցիալական օգուտները գնահատվում են որպես հասարակության շահույթ՝ կապված հողօգտագործման փոփոխության հետ: Ընդհանուր ծախսերը (30 000 000 000 ՀՀ դրամ) հաշվարկվում են մեկ հեկտարի ախտազերծման համար առկա գնանշումների հիման վրա (600 000 000 ՀՀ դրամ):

Վերականգնման արդյունքում հողի արժեքի աճին ավելի լայն սոցիալական օգուտները ավելացնելիս ընդհանուր օգուտները կազմում են 46 000 000 000 ՀՀ դրամ: Պարզության համար ընդհանուր ծախսերը և ընդհանուր օգուտներն արդեն զեղչված են (այսինքն՝ արտահայտված են որպես ներկա արժեք): Հետևաբար՝ վերականգնման օգուտները գերազանցում են ծախսերը, և կարգավորման տարբերակի զուտ ներկա արժեքը կազմում է 16 000 000 000 ՀՀ դրամ:

#### 4) Թափոնների ծավալների վրա ազդեցություն

Կարգավորմամբ առաջարկվող տարբերակը կարող է ազդել նյութերի կամ թափոնների ծավալների վրա: Այս հանգամանքներում տարբերակի հետ կապված թափոնների քանակի գնահատումը կախված է հավաստի տվյալների առկայությունից: Թափոնների կրճատումը պետք է գնահատվի որպես ելակետային տարբերակում նկարագրված և կարգավորման առաջարկվող տարբերակում հաշվարկված զանգվածային հոսքերի միջև տարբերություն:

ԿԱԳ-ի նպատակով թափոնների քանակի վերաբերյալ հիմնավորված տվյալներ կարելի է ստանալ այլընտրանքային աղբյուրներից, ինչպիսիք են՝ Արտադրանքի կյանքի ցիկլի գնահատման ուսումնասիրությունները, որոնք կարող են տրամադրել շրջակա միջավայրի արտաքին ազդեցությունների վերաբերյալ տվյալներ: Կյանքի

ցիկլի գնահատման արդյունքում հետազոտվում են արտադրության համակարգում մուտքերը, արդյունքները և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:

Հայաստանում թափոնների վերաբերյալ առկա տվյալների հավաքածուները, որոնք կարող են օգտագործվել ԿԱԳ-ի նպատակով, ներառում են հետևյալը<sup>14</sup>.

ա. Թափոնների առաջացումն՝ ըստ տարիների և ցուցանիշների,

բ. Թափոնների առաջացումն՝ ըստ ՏԳՏԴ, վտանգավորության դասերի և տարիների,

գ. Վտանգավոր թափոնների (առանց կենցաղային թափոնների) շարժն՝ ըստ ցուցանիշների և տարիների:

5) Կենսաբազմազանության վրա ազդեցություն (բուսական և կենդանական աշխարհի, անտառների և լանդշաֆտների քանակն ու վիճակը)

Կենսաբազմազանությունը կարելի է դիտարկել որպես բնակչությանը բնապահպանական ապրանքների և ծառայությունների տրամադրման օժանդակում: Կենսաբանական բազմազանություն նշանակում է «բոլոր աղբյուրներից առաջացող կենդանի օրգանիզմների փոփոխունությունը, ներառյալ՝ մասնավորապես ցամաքային, ծովային և այլ ջրային էկոհամակարգերն ու էկոլոգիական համալիրները, որոնց մասն են դրանք հանդիսանում: Այն ընդգրկում է նաև մեկ տեսակի շրջանակներում և տարբեր տեսակների միջև բազմազանությունը»<sup>15</sup>: Կենսաբազմազանության վրա կարգավորման տարբերակների բացասական և դրական ազդեցությունները գնահատելու համար ԿԱԳ-ում կարող են կիրառվել

<sup>14</sup> <https://armstatbank.am/pxweb/en/ArmStatBank>

<sup>15</sup> Կենսաբազմազանության մասին կոնվենցիա

տարբեր գնահատման միավորներ, օրինակ՝ կենսաբազմազանությունը մեկ հեկտար հողի կամ մեկ տնային տնտեսության հաշվով: Կենսաբազմազանությունը կարող է արտացոլվել կամ կապվել այլ օգուտների հետ (օրինակ՝ հանգիստ, փոշոտում, ջրի որակ և հարմարություններ): Կենսաբազմազանությունը գնահատվում է ըստ արժեքի միայն այն դեպքում, երբ այն ուղղակիորեն ազդում է մարդու բարեկեցության վրա, և երբ այն հավելում է այլ օգուտներին: Օրինակ՝ կենսաբազմազանության չօգտագործման արժեքը ներկայացնում է արժեքային թույլատրելի լրացուցիչ կատեգորիա, որը կարող է ավելացվել վերջնական ապրանքների ու ծառայությունների ուղղակի և անուղղակի օգտագործման արժեքներին: Այն դեպքերում, երբ կենսաբազմազանության արժեքների գնահատումների տվյալները բացակայում են կամ բավարար չեն ԿԱԳ-ում օգտագործման համար, այլընտրանքը կենսաբազմազանության փոփոխության քանակական չափորոշիչներն օգտագործելն է և այդ նպատակներին հասնելու համար կատարված ծախսերը հաշվարկելը:

Հայաստանում կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների առկա աղբյուրներն են<sup>16</sup>.

- ա. Հատուկ պահպանվող տարածքների հիմնական ցուցանիշներ՝ ըստ կատեգորիաների և տարիների,
- բ. Անտառներ և այլ անտառածածկ տարածքներ՝ ըստ ցուցանիշների և տարիների,
- գ. Անհետացման վտանգի տակ գտնվող և պահպանվող տեսակներ՝ ըստ տեսակների, ցուցանիշների և տարիների:

---

<sup>16</sup> <https://armstatbank.am/pxweb/en/ArmStatBank>



6) Բնական պաշարների արդյունավետ, ինտեգրված և ողջամիտ օգտագործման ազդեցությունը փոխակերպված կենդանի օրգանիզմների թվաքանակի և վիճակի վրա

ԿԱԳ-ում կարգավորման տարբերակների ազդեցությունը գնահատելիս՝ փոխակերպված կենդանի օրգանիզմների թվաքանակի և վիճակի վրա բնական պաշարների արդյունավետ, ինտեգրված և ողջամիտ օգտագործման ազդեցությունը որոշելու համար պահանջվում է «բնական կապիտալի» մոտեցում: Դա վերաբերում է ինչպես բնական պաշարներին, այնպես էլ կենդանի օրգանիզմներին, որոնք արժևորվում են մարդկանց կողմից. անտառների պաշարներ, ձկնաբուծարաններ, գետեր, կենսաբազմազանություն, հող և օգտակար հանածոներ: Բնական կապիտալի պաշարները ժամանակի ընթացքում ապահովում են բնական ռեսուրսների և փոխակերպված կենդանի օրգանիզմների հոսքերը: Բնական կապիտալի պաշարները առաջացնում են ծախսեր (բնական պաշարների և կենդանի օրգանիզմների քանակի պահպանման համար), բայց դրանք նաև բերում են բազմատեսակ օգուտներ՝

ա. շուկայական օգուտներ, երբ տնտեսության և բնական ռեսուրսների միջև առկա են շուկայական հարաբերություններ (օրինակ՝ օգտակար հանածոներ, փայտանյութ, քաղցրահամ ջուր),

բ. ոչ շուկայական օգուտներ, երբ առկա են ոչ շուկայական հարաբերություններ քաղաքացիների և բնական պաշարների կամ կենդանի օրգանիզմների միջև (օրինակ՝ բացօթյա ժամանց, լանդշաֆտային հարմարություններ):

Ոչ շուկայական օգուտների դեպքում (կամ երբ շուկայական գները չեն ներառում դրանց ամբողջական արժեքը հասարակության մասով), գնահատումները կարող են հիմնված լինել մի շարք ոչ շուկայական գնահատման եղանակների կամ գործիքների վրա:

ԿԱԳ-ում բնական կապիտալի դիտարկումը թույլ է տալիս արդյունավետորեն գնահատել շրջակա միջավայրի մի շարք ազդեցություններ՝ կապված օդի աղտոտվածության, թափոնների և ՋԳԱ-ների հետ:

Բնական կապիտալի պաշարների մակարդակների մշտադիտարկման և չափման իրականացումը պետք է ընթանա համակարգված (ԿԱԳ-ի գնահատումներից առանձին) ձևով: Այդ դեպքում ԿԱԳ-ի միջոցով հնարավոր կլինի վերլուծել բնական կապիտալի սոցիալական ծախսերն ու օգուտները: Բնական պաշարների կորստի, փոխակերպված կենդանի օրգանիզմների քանակի և վիճակի վրա բացառապես կենտրոնանալը կարող է անտեսել պաշարների զգալի կրճատումների վտանգի հնարավորությունը: Դա կարող է հանգեցնել բնական պաշարների, փոխակերպված կենդանի օրգանիզմների քանակի և վիճակի կտրուկ կրճատման: Պետք է դիտարկվեն նաև բնական կապիտալի պաշարների վրա բազմաթիվ որոշումների կուտակային ազդեցությունները: Հետևաբար՝ հատկապես խոշոր ազդեցությունների դեպքում, գնահատումները հաշվի են առնում, թե արդյոք ազդեցության ենթարկված բնական պաշարները հուսալի կերպով են օգտագործվում:

Հայաստանում առկա տվյալները, որոնք կարող են օգտագործվել ԿԱԳ-երում բնական պաշարների արդյունավետ, ինտեգրված և ողջամիտ օգտագործման, փոխակերպված կենդանի օրգանիզմների օգտագործման քանակի և վիճակի վերաբերյալ, բաղկացած են հետևյալից<sup>17</sup>.

- ա. Բնապահպանության ընթացիկ ծախսեր և հիմնական միջոցներ՝ ըստ ցուցանիշների և տարիների,
- բ. Բնապահպանական հարկեր և բնօգտագործման վճարներ՝ ըստ տեսակի և տարիների,

---

<sup>17</sup> <https://armstatbank.am/pxweb/en/ArmStatBank>

գ. Պինդ օգտակար հանածոների հանքարդյունաբերություն՝ ըստ հանածոների և տարիների:

Բնական կապիտալի մոտեցումները չեն փոխարինում շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման՝ ԿԱԳ-ում առկա մոտեցումները: Փոխարենը, որպես շրջակա միջավայրի վրա ազդեցությունների՝ ԿԱԳ-ի գնահատման մաս, կարող է կիրառվել բնական կապիտալի մոտեցումը, որը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ գնահատել կարգավորման բոլոր տարբերակները՝ բնական պաշարների և կենդանի օրգանիզմների հնարավոր բարելավումների և/կամ վնասների տեսանկյունից: Բնական կապիտալի վրա ազդեցությունը դիտարկելու համար կարող են դիտարկվել հետևյալ հիմնական հարցերը.

Արդյո՞ք տարբերակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է ազդել՝

ա. երկրի ներսում գտնվող, առափնյա կամ ծովային ջրային մարմնի վրա,

բ. վայրի բնության և/կամ վայրի բուսականության վրա,

գ. բնական հումքի մատակարարման, կամ կենսամիջավայրի վրա, որտեղից այն արդյունահանվում է:

Այս հարցերից մեկի կամ մի քանիսի դրական պատասխանը անհրաժեշտ է դարձնում ԿԱԳ-ում բնական կապիտալի հետագա վերլուծությունը:

7) Բնության պատմամշակութային հուշարձանների քանակի և վիճակի վրա ազդեցություն

Բնության հուշարձանները ցանկացած երկրի բնական ժառանգության կարևոր մասն են: Բնական ժառանգության բնութագրերի դիտարկումը պետք է իրականացվի ցանկացած ԿԱԳ-ում, որտեղ կարգավորման տարբերակները ազդում են բնական

հուշարձանների քանակի և վիճակի վրա: ԿԱԳ-ը պետք է հաշվի առնի, թե արդյոք ժառանգության պահպանման կարիքներին պետք է ավելի մեծ կշիռ տրվեն, քան տնտեսական մրցակցային կիրառություններին և զարգացումներին: Հիմնական նկատառումն ապագա ժառանգության պոտենցիալ կարգավիճակի սպառնալիքն է կամ ռիսկը, և դա պետք է հստակորեն լուծվի ԿԱԳ եզրակացությունում: ԿԱԳ-ի համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցությունների բնական ժառանգության օգուտները կարող են վերաբերել հանգստի հնարավորություններին, ներառյալ՝ բնության դիտումը, արշավները և տեսարժան վայրեր այցելությունները, ձայներ լսելու և բույրեր զգալու հնարավորությունները: Այն կարող է ներառել գեղագիտական և տեսողական հարմարավետությունը: Քանի որ լանդշաֆտը ներառում է հանգիստ, էսթետիկ արժեքներ և մշակութային ժառանգության արժեքներ, այստեղ անհրաժեշտ է զգուշանալ և խուսափել ազդեցությունների կրկնակի հաշվարկից:

Բնության պատմամշակութային հուշարձանների քանակի և վիճակի փոփոխությունները կարող են գնահատվել ճամփորդության արժեքի հաշվարկման մեթոդի կիրառությամբ:

Հուշարձաններ այցելելու համար տրանսպորտից օգտվողների կողմից ծախսված ժամանակի արժեքը ազդում է բնության հուշարձանների քանակի և վիճակի վրա: ԿԱԳ-ի համատեքստում ճամփորդության ժամանակի փոփոխության՝ դրամով արտահայտված արժեքը բարեկեցության փոփոխությունն է: Ճամփորդության արժեքի հաշվարկման մեթոդը հիմնականում կիրառվում է հանգստի համար օգտագործվող վայրերի տնտեսական արժեքները որոշելու համար, ինչպիսիք են՝ ազգային պարկերը: Օրինակ՝ այն կարող է գնահատել լճի տնտեսական օգուտների մի մասը, որը բխում է ռեկրեացիոն նպատակով դրա օգտագործումից (լող և թռչունների դիտում): Ճամփորդության արժեքի հաշվարկման մեթոդի վերաբերյալ տվյալները սովորաբար հավաքագրվում են գնահատվող վայրեր այցելուներից՝ հարցաշարի միջոցով: Օրինակ՝ եթե հարցվողները այցելում են երեք տարբեր վայրեր 10 օրվա

ընթացքում և ծախսում են միայն 1 օր գնահատվող վայրում, ապա նրանց ճանապարհածախսի միայն մի մասը պետք է վերագրվի այդ վայրին (օրինակ՝ 1/10): Կախված օգտագործվող վայրի մասնաբաժնից՝ վերջնական օգուտների գնահատումները կարող են զգալիորեն տարբերվել:

Ստորև ներկայացված օրինակ 25-ում հակիրճ անդրադարձ է կատարվում այս մեթոդի կիրառման՝ այլ երկրներում առկա փորձին:

Օրինակ 25. Բնության պատմամշակութային հուշարձանների նկատմամբ ճամփորդության արժեքի հաշվարկման մեթոդի կիրառման միջազգային փորձի օրինակ

### *Նախապարմություն*

«Ռոյալ բոտանիկ գարդենզ, Քյու (Royal Botanic Gardens, Kew)» ընկերությունը հանձնարարել է «Օքսֆորդ Էկոնոմիքս (Oxford Economics)» խորհրդատվական ընկերությանը հաշվարկել «Քյու գարդենզ (Kew Gardens)» ընկերության՝ հասարակության տեսանկյունից ընդհանուր արժեքը: Որպես այս աշխատանքի մի մաս՝ նրանք գնահատել են սոցիալական արժեքը, որը «Քյու գարդենզ ընկերությունը» բերել է Մեծ Բրիտանիայի այցելուներին 2018-2019 թվականների համար:

### *Մեթոդ*

«Օքսֆորդ Էկոնոմիքս» խորհրդատվական ընկերությունը օգտագործել է անհատական ճամփորդության արժեքի հաշվարկման մեթոդն՝ իր այցելուների համար «Քյու գարդենզ» ընկերության այցելության արժեքը գնահատելու համար: Ձեկույցը վերլուծել և ստացել է ենթադրյալ գումարը, որն այցելուները պատրաստ են վճարել նշված վայր այցելելու համար՝ հիմնվելով այցելությունների հաճախականության, նրանց անցած հեռավորության և ուղղակի ճանապարհորդության ծախսերի վրա: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են կայքի այցելուների հարցումների տվյալները: Տվյալների հավաքածուն բաղկացած էր 2017-2018 թվականների «Քյու գարդենզ» ընկերության 1098 այցելուներից: Այն արձանագրել է մի շարք գործոններ, այդ թվում՝ քանի անգամ են նրանք այցելել վերջին 12 ամիսների ընթացքում,

հարցվողների փոստային կողմ և տեղեկատվությունը նրանց սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ: Կիրառելով տվյալների բազայի վիճակագրական մեթոդներ՝ ուսումնասիրությունը հաշվարկել է, թե ինչպես է ճամփորդության արժեքի ավելացումն ազդել այցելությունների քանակի վրա, այսինքն՝ ինչպես է դա ազդել այցելուների պահանջարկի վրա, որից հետո գնահատվել է «Քյու գարդենզ» ընկերություն այցելելու համար ընդունված (գործող մուտքի) վճարից ավել վճարելու միջին պատրաստակամությունը: Այնուհետև, այդ ցուցանիշը համադրվել է ընտրված արժեքի տվյալների հետ՝ գնահատելու վայրի բոլոր այցելուների ընդհանուր պահանջարկը, որը ներկայացնում է այցելուների՝ նշված վայրի սպառումից առաջացող ընդհանուր արժեքը:

### *Արդյունքներ*

Հետազոտությունը պարզել է, որ Քյու գարդենզ ընկերությունը նշանակալի սոցիալական արժեք է ստեղծել, որն ավելին է եղել, քան այցելուների վճարած գործող մուտքի վճարները, ինչը կազմել է տարեկան միջինում մոտավորապես 30 ֆունտ ավել՝ մեկ այցելության համար: Համադրելով գործող մուտքի գնի հետ և ագրեգացնելով այցելուների ընդհանուր թվի վրա՝ այցելուների տարեկան սպառման արժեքը ստացվել է 50.3 մլն ֆունտ ստերլինգ՝ 2018-2019 թվականների համար: Այս փաստաթուղթը ընդգծեց ենթակառուցվածքների սոցիալական արժեքը հաշվի առնելու կարևորությունը, մասնավորապես՝ երբ դիտարկվում են համեմատաբար փոքր տնտեսական արժեք ունեցող, բայց հնարավոր մեծ սոցիալական արժեք ունեցող բնապահպանական ենթակառուցվածքները՝ իրենց ժառանգության և մշակութային նշանակության շնորհիվ:

## ԳԼՈՒԽ 5

### ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Որպես շահառու՝ ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում ընդունված է դիտարկել հանրային հատվածը/պետությունը՝ անհրաժեշտության դեպքում տարբերակելով պետական և համայնքային մակարդակները: Հանրային հատվածի վրա ազդեցություններն ընդունված է անվանել «Ֆինանսական» կամ «Հանրային հատվածի» ազդեցություններ: Հանրային հատվածի ազդեցությունների (ծախսեր և օգուտներ) գնահատման համար կարող են կիրառվել տարբեր մեթոդաբանություններ:

ԿԱԳ-ը հիմնականում նախատեսված է մասնավոր և հանրային հատվածների վրա առաջարկվող կարգավորման ընդհանուր ազդեցությունները ուսումնասիրելու և գնահատելու համար: Այդ շրջանակներում ԿԱԳ-ը կարող է կենտրոնանալ հանրային ֆինանսների մասով ազդեցությունների վրա՝ գնահատելով կարգավորման առաջարկվող տարբերակի ընդունման զուտ օգուտը/վնասը հանրային հատվածի համար՝ հաշվի առնելով տարբերակի ընդունումից բխող բոլոր ֆինանսական ծախսերն ու օգուտները:

*Աղյուսակ 9.*

#### *Հանրային ֆինանսների վրա ազդեցությունների հարցադրումներ*

Հարցադրում	Այո	Ոչ	Մեթոդաբանություններ, որոնք կարող են կիրառվել և հետագա ցուցումներ
Արդյո՞ք կարգավորման առաջարկվող տարբերակի ընդունումը կհանգեցնի	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Եթե այո, ապա իրականացնել հանրային

համախմբված բյուջեի <sup>18</sup> ծախսերի 0.1 տոկոսից ավելի չափով ավելացման			հատվածի ծախսերի և օգուտների գնահատում
Արդյո՞ք կարգավորման առաջարկվող տարբերակի ընդունումը կհանգեցնի պետական բյուջեի կամ համայնքների բյուջեների հարկային եկամուտների 0.1 տոկոսից ավելի չափով նվազեցման և (կամ) ավելացման	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Արդյո՞ք կարգավորման առաջարկվող տարբերակի ընդունումը կհանգեցնի 5.000 և ավելի տնտեսավարող սուբյեկտների և (կամ) 50.000 քաղաքացիների կողմից վճարվող հարկերի և (կամ) տուրքերի և (կամ) վճարների ավելացման և (կամ) նվազեցման	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Արդյո՞ք կարգավորման առաջարկվող տարբերակի ընդունումը կհանգեցնի հարկերի և (կամ) տուրքերի և (կամ) վճարների արտոնությունների շրջանակի կրճատման և (կամ) ընդլայնման	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

**ԿԱԳ շրջանակներում իրականացվում է հանրային ֆինանսների վրա ազդեցությունների գնահատում, եթե կարգավորման առաջարկվող տարբերակի**


<sup>18</sup> Համախմբված բյուջեի ծախսերը սահմանվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից տվյալ տարվա համար հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:



ընդունումը կհանգեցնի վերոնշյալ աղյուսակում ներկայացված ազդեցություններից մեկի կամ մի քանիսի առաջացմանը:

**1. Հանրային հատվածի ծախսեր**

Հանրային հատվածի ծախսերը բաղկացած են կարգավորման առաջարկվող տարբերակի գործողության ակնկալվող ժամկետի ընթացքում կարգավորման հետ կապված ծախսերից: Կարգավորման առաջարկվող տարբերակի իրականացումն ապահովելու համար կառավարությունը կկրի լրացուցիչ ծախսեր՝ կապված վարչարարության, մշտադիտարկման և կիրարկման հետ:



**Գծապատկեր 2. Կարգավորման հետ կապված հանրային հատվածի՝ ծախսերի դասակարգում**

Այս ծախսերը կարելի է բաժանել ուղղակի ֆինասական, վարչարարական ու կարգավորմանն աջակցման և լրացուցիչ կապիտալ ծախսերի:


Օրինակ՝ եթե կառավարությունը նախատեսում է լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման գործընթացն իրականացնել մեկ միասնական էլեկտրոնային համակարգի միջոցով, նախ պետք է ռեսուրսներ ծախսի այդ էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման, ապա նաև դրա կառավարման, անխափան գործունեության և մշտադիտարկման ու գնահատման համար:

Լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման և շահագործման հետ կապված բոլոր (ուղղակի) ֆինանսական և (լրացուցիչ) կապիտալ ծախսերը պետք է հաշվի առնվեն հանրային ֆինանսների վրա ազդեցությունների գնահատման ժամանակ:

Կիրարկման և մշտադիտարկման ծախսերը սովորաբար հիմնված են անհրաժեշտ վարչարարական գործունեության բյուջետային ծախսերի վրա: Այս ծախսերը պետք է ներառեն ինչպես վարչարարական ծախսերը, այն է պետական կառավարման համակարգի համապատասխան մարմնի ժամանակային (աշխատուժի) և վերադիր ծախսերը, այնպես էլ վարչարարական գործունեության համար անհրաժեշտ լրացուցիչ կապիտալ ծախսերը, որոնք առաջացնելու է տվյալ առաջադրանքի կատարումը:

## 2. Հանրային հատվածի օգուտներ

Հանրային հատվածի օգուտները բաղկացած են կարգավորման առաջարկվող տարբերակի գործողության ակնկալվող ժամկետի ընթացքում կարգավորման հետ կապված օգուտներից:



**Գծապատկեր 3. Կարգավորման հետ կապված հանրային հատվածի օգուտների դասակարգում**

ԿԱԳ շրջանակներում որպես հանրային հատվածի օգուտներ գնահատվում են կարգավորման առաջարկվող տարբերակների արդյունքում՝ ուղղակի, կարգավորման աջակցման և վարչարարական ծախսերի կրճատումները, այն է՝ հանրային հատվածի խնայողությունները, և պետական բյուջեի ֆինանսական մուտքերը՝ պետական բյուջեի եկամուտները (հարկեր, տուրքեր և այլն) և Պետության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարվող վճարները (փորձաքննության վճարներ, տեղեկանքների տրամադրման վճարներ և այլն):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**